ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016-2017 ուստարվա գործունեության

ՇՊՀ-ի ռեկտոր՝ Ս. Մինասյան

Գյումրի 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	**Ներածություն**	**6**
2.	**Առաքելություն և նպատակներ**	**8**
2.1.	ԳՊՄԻ-ի առաքելությունը և նպատակները	**8**
2.2.	ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Առաքելություն և նպատակներ» չափանիշի վերաբերյալ	**8**
2.3.	ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման նպատակով կատարված ու նախատեսվող քայլեր	**9**
3.	**Կառավարում և վարչարարություն**	**13**
3.1.	ԳՊՄԻ-ի կառուցվածքը և Կառավարման ու Գիտական խորհուրդների կազմերը	**13**
3.2.	ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Կառավարում և վարչարարություն» չափանիշի վերաբերյալ	**16**
3.3.	ՇՊՀ-ի կառուցվածքը և Հոգաբարձուների ու Գիտական խորհուրդների կազմերը	**17**
3.4.	ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման համար կատարված ու նախատեսվող քայլեր	**21**
4.	**Մասնագիտության կրթական ծրագրեր**	**24**
4.1.	Մասնագիտական կրթական ծրագրեր /առկա բակալավրիատ, հեռակա բակալավրիատ, մագիստրատուրա/	**24**
4.2.	Ընդունելության ցուցանիշները՝ ըստ կրթական ծրագրերի	**27**
4.3.	2016-2017 ուստարվա քննաշրջանի արդյունքները /առկա բակալավրիատ, մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ/	**40**
4.4.	Ուսանողների առաջադիմության վերլուծություն՝ ըստ կրթական ծագրերի	**45**
4.5.	Պրակտիկաներ	**60**
4.6.	Ուսման վարձի զեղչեր	**70**
4.7.	ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Մասնագիտության կրթական ծրագրեր» չափանիշի վերաբերյալ	**72**

4.8. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման համար կատարված ու նախատեսվող քայլեր 74

5. Ուսանողներ 77

5.1. Ուսանողների կազմ՝ ըստ կուրսերի, 2017-2018 ուստարի, 1-ին կիսամյակ /առկա բակալավրիատ, մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ, ասպիրանտ/հայցորդ/ 77

5.2. Ուսանողների կազմ՝ ըստ կուրսերի, 2016-2017 ուստարի /առկա բակալավրիատ, մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ, ասպիրանտ/հայցորդ/ 80

5.3. Ուսանողների կազմն ըստ ուստարիների /առկա բակալավրիատ, մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ, ասպիրանտ/հայցորդ/ 83

5.4. Շրջանավարտներ. 2016-2017 ուստարի 89

5.5. Ավարտածներ՝ ըստ ուստարիների 91

5.6. ՈՒԽ-ի կողմից 2017 թ.-ին անցկացված միջոցառումներ 95

5.7. ՈՒԳԸ գործունեության ցուցանիշներ 97

5.8. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Ուսանողներ» չափանիշի վերաբերյալ 99

5.9. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման նպատակով կատարված ու նախատեսվող քայլեր 100

6. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ 105

6.1. Ամբիոնների պրոֆեսորադասախոսական համակազմեր (այդ թվում՝ համատեղող) և նրանց տարիքային բաշխումը 105

6.2. Վարչական համակազմ և նրանց տարիքային բաշխումը 108

6.3. Մասնագիտական և ոչ մասնագիտական վերապատրաստումներ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմերի համար 110

6.4. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ» չափանիշի վերաբերյալ 112

6.5. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման համար կատարված ու նախատեսվող քայլեր 114

7. Հետազոտություն և զարգացում 116

7.1. Գիտահետազոտական գործունեություն 116

7.2. Համալսարանի գիտական տեղեկագիր 119

7.3. Պրոֆեսորադասախոսական համակազմի գիտական գործունեության խրախուսում 120

7.4. ՀՀ պետական բյուջեի կողմից ֆինանսավորվող և համալսարանում իրականացվող դրամաշնորհային ծրագրեր 121

7.5. Համալսարանի կողմից ֆինանսավորվող ներքուհական դրամաշնորհային ծրագրեր 123

7.6. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Հետազոտություն և զարգացում» չափանիշի վերաբերյալ 124

7.7. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման նպատակով կատարված ու նախատեսվող քայլեր 125

8. Ենթակառուցվածք և ռեսուրսներ 129

8.1. Ուսումնական ուսումնագիտական շինությունների ծավալային ցուցանիշներ (շենքեր, լսարաններ, լաբորատորիաներ, դահլիճներ) 129

8.2. Տեխնիկական հագեցվածության ցուցանիշներ 130

8.3. Գրադարանային պաշարներ 132

8.4. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Ենթակառուցվածք և ռեսուրսներ» չափանիշի վերաբերյալ 133

8.5. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման համար կատարված ու նախատեսվող քայլեր 134

9. Հասարակական պատասխանատվություն 138

9.1. Տեղեկատվություն՝ կայքի հետ կապված 138

9.2. Լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ տվյալներ 139

9.3. Կայքում և ֆեյսբուքյան էջում լուսաբանված իրադարձություններն ու միջոցառումները (2016-2017 ուստարի և 2017-2018 ուստարվա I կիսամյակ) 139

9.4. Արհեստակցական կազմակերպության աշխատանքների ընդհանուր ցուցանիշներ 145
9.5. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Հասարակական պատասխանատվություն» չափանիշի վերաբերյալ 145
9.6. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման համար կատարված ու նախատեսվող քայլեր 146
10. Արտաքին կապեր և միջազգայնացում 147
10.1. Համալսարանի կարողությունների զարգացմանը միտված ծրագրեր 147
10.2. Համալսարանի աշխատակազմի և ուսանողական համակազմի շարժունության ծրագրեր 156
10.3. Արտասահմանյան և հայաստանյան համալսարանների ու կազմակերպությունների հետ համագործակցություն 168
10.4. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Ատաքին կապեր և միջազգայնացում» չափանիշի վերաբերյալ 179
10.5. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման նպատակով կատարված ու նախատեսվող քայլեր 179
11. Որակի ներքին ապահովման համակարգ 181
11.1. ԳՊՄԻ-ի որակի ներքին ապահովման համակարգ 181
11.2. ՇՊՀ-ի որակի ներքին ապահովման համակարգ 183
11.3. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերություններ «Որակի ներքին ապահովման համակարգ» չափանիշի վերաբերյալ 186
11.4. ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման կատարված ու նախատեսվող քայլեր 187
12. ՇՊՀ-ի ավագ դպրոց և քոլեջ 189
12.1. ՇՊՀ-ի ավագ դպրոց 189
12.2. ՇՊՀ-ի քոլեջ 189
13. Ֆինանսական հաշվետվություն 195

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին ԳՊՄԻ-ն ստացել է ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրում: Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշվել են մի շարք դիտողություններ ՈՒԱԿ-ի սահմանած 10 չափանիշների մասով: Կազմվել և 2016 թվականին հաստատվել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր:

Ընդհանուր առմամբ, 10 չափանիշները այնպիսիք են, որ համընդհանուր կերպով բացահայտում են բուհի ամբողջական գործունեությունը:

Հաշվետու ժամանակահատվածը բեկումնային էր Շիրակի մայր բուհի համար: 80-ամյա պատմություն ունեցող բուհը վերջապես 2016 թ.-ի դեկտեմբերի 2-ին ձեռք բերեց բաղձալի համալսարանի կարգավիճակ: Միաժամանակ փոփոխվել է բուհի կազմակերպաիրավական ձևը՝ ՊՈԱԿ-ից անցում հիմնադրամի:

Բուհում առկա են եղել նաև կառուցվածքային խնդիրներ՝ պայմանավորված ինչպես ռազմավարական նպատակներին միտված չլինելով (տե՛ս ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույց), այնպես էլ մարդկային և նյութական ռեսուրսների ոչ ճիշտ կառավարմամբ:

Հարկ է նշել, որ առկա բազմաթիվ մարտահրավերների առկայության պայմաններում և վերը նշված առանցքային փոփոխությունների հետ մեկտեղ բուհը ոչ միայն կանոնակարգել է գործընթացը, այլև ձևավորել է գրավիչ և ուսանողակենտրոն կրթական միջավայր՝ միաժամանակ ապահովելով ինտելեկտուալ զարգացման ժամանցի հնարավորություններ:

Հաշվետվությունը կփորձենք ներկայացնել բուհի ռազմավարական ծրագրի, ինչպես նաև ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված հիմնադրույթներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական, միջին և *բարձրագույն մասնագիտական կրթության հավատարմագրման գծով անհրաժեշտ փորձաքննության իրականացման*, *մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման չափանիշների մշակման*, ինչպես նաև *մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի*

ապահովման ներքին համակարգերի գնահատման գործընթացները իրավասու է կատարելու ՈԱԱԿ-ը: Բացի այդ, բուհերի հավատարմագրումն իրականացվում է՝ ըստ ՈԱԱԿ-ի սահմանած 10 չափանիշների: Ուստի նպատակահարմար և արդարացված ենք համարում հաշվետվությունը կազմել՝ առաջնորդվելով այդ 10 չափանիշներով:

Որպես բուհի գործունեության հիմնական ուղենիշներ ծառայել են ԳՊՄԻ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը և գլխավորապես ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցը, որում նշված են ԳՊՄԻ-ի գործունեության թերությունները՝ ըստ ՈԱԱԿ-ի սահմանած 10 չափանիշների: Ուղենիշ ծառայել է զեկույցը և ոչ թե ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, քանի որ գործունեության ընթացքում պարզվել է, որ վերջինիս մեջ նշված մի շարք գործողություններ և քայլեր փոփոխման անհրաժեշտություն ունեն՝ միտված ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման առավել արդյունավետ կազմակերպմանը՝ պայմանավորված բուհի ռեսուրսային հնարավորություններով և հատկապես բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներով ու վերը նշված դրույթներով:

Մասնավորաբար անհրաժեշտություն է առաջացել վերանայելու զարգացման ռազմավարական ծրագիրը, մինչդեռ փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրում նախատեսված է միայն առաքելության վերանայում:

Առաքելության փոփոխությունը (պարտադիր) ենթադրում է ռազմավարության վերանայում՝ փոփոխություն:

Փոփոխության անհրաժեշտություն է առաջանում՝ պայմանավորված նաև բարձրագույն կրթության մասին օրինագծի ընդունմամբ:

Հաշվետվության մեջ ներկայացվում են փորձագիտական զեկույցում նշված թերությունները և թերությունների վերացման ծրագրի առաջարկվող փոփոխված տարբերակը, 2016-2017 ուստարվա գործունեությունը, իրականացված քայլերն ու հետագա անելիքները:

2. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

2.1. ԳՊՄԻ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2014 թ.-ին հաստատվել է ԳՊՄԻ-ի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը (2015-2019), ըստ որի՝ սահմանվել են ԳՊՄԻ-ի առաքելությունը և դրանից բխող հիմնական նպատակները:

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը կրթական, գիտական և մշակութային հաստատություն է, որի առաքելությունն ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողություններով և անհրաժեշտ գիտելիքներով օժտված մասնագետների պատրաստումն է բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորումներով՝ մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման միջոցով:

ԳՊՄԻ-ի գործունեությունը միտված է իր առաքելությունից բխող հետևյալ նպատակներին.

1. ձևավորել ուսանողակենտրոն միջավայր, որակի և սովորելու մշակույթ՝ մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) մրցունակության ու որակավորումների համադրելիության ապահովման, արտաքին հարափոփոխ միջավայրի մարտահրավերներին դիմակայելու համար,

2. ձևավորել մշակույթ՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, շրջանավարտներին աշխատանքային կարիերային նախապատրաստելու և գիտելիքահենք հասարակությանն ինտեգրելու համար,

3. ձևավորել արտաքին և ներքին շահակիցների հետ մասնակցային համագործակցության և հաշվետվողականության մշակույթ՝ նպաստելով հասարակությանը մատուցվող կրթական և այլ ծառայությունների թափանցիկությանը:»

2.2. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ» ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի՝ այս չափանիշը գնահատվել է բավարար, բայց նշվել են հետևյալ թերությունները.

1. Առաքելությունն ընդհանրական է և ցույց չի տալիս բուհի առանձնահատկությունը:

2. Բուհի անվանումը և կանոնադրությունը չեն արտացոլում ոչ մանկավարժական ծրագրերի առակայությունը և չեն համապատասխանում բուհի գործունեության առկա իրավիճակին:
3. ՌԾ-ն չի ներառում նախորդ ռազմավարական զարգացման հայեցակարգով իրականացված գործունեության վերլուծություն:
4. ՌԾ-ն մշակվել է արտաքին շահակիցների ոչ բավարար մասնակցությամբ, հատկապես ոչ մանկավարժական ոլորտի առումով:
5. Ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների չափման և գնահատման բազմաբնույթ մեխանիզմներ և ընթացակարգեր մշակված չեն:

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	**1.**	*Հստակեցնել և համապատասխանեցնել բուհի առաքելությունը, անվանումը, կանոնադրությունն ու իրական գործունեությունը:*
	2.	*Մշակել և ներդնել ռազմավարական նպատակների իրականացման որակական և քանակական գնահատման, ինչպես նաև ռազմավարական ծրագրի բարելավման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր:*
	3.	*ա) ՌԾ-ի իրականացման գործընթացում ապահովել շահառուների (հատկապես արտաքին) ակտիվ ընդգրկվածությունը հետադարձ կապով, բ) ՌԾ-ում ներառել նախորդի գործունեության վերլուծություն:*

2.3. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		**Քայլեր**		**Ընթացիկ վիճակը**	**Ժամանակա-հատված**
1.	**Հստակեցնել բուհի առաքելությունը, անվանումն ու կանոնադրությունը՝ համապատասխանեց-նելով գործունեությանը**	1.1	Ձեռք բերել համալսարանի կարգավիճակ	Ավարտված	2016թ. I եռ.-2016թ. IV եռ.
		1.2	Վերանայել բուհի առաքելությունը	Ավարտված	2017թ. III եռ.-2018թ. I եռ.
		1.3	Վերախմբագրել բուհի կանոնադրությունը	Ավարտված	2016թ. IV եռ.
2.	**Մշակել ՌԾ-ի մշակման, իրականացման, հաշվետվողականության և բարելավման մեխանիզմներ**	2.1	Մշակել ՌԾ-ի մշակման, իրակա-նացման և հաշվետվողականության և բարելավման ընթացակարգ	Ավարտված	20176թ.IVեռ.-2018թ. I եռ.
		2.2	Կիրառել ՌԾ-ի մշակման, իրակա-նացման և հաշվետվողականության և բարելավման ընթացակարգ	Իրականաց-ման փուլ	2018թ. II եռ.-ից մինչև ՌԾ-ի ավարտը

3.	**Ապահովել ներքին և արտաքին շահառուների ակտիվ ներգրավվածությունը ՌԾ-ի մշակման և իրականացման գործընթացում**	3.1	Վերանայել ՌԾ-ն և ՌԾ-ի իրականացման ժամանակացույց պլանը	Իրականացման փուլ	2018թ. II եռ.

Վերը նշված գործողությունների ընթացքի վերաբերյալ.

1.1. Պետական ռեգիստրում գրանցվել է որպես իրավաբանական անձ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ /2016.12.02/:

1.2. ՇՊՀ-ի առաքելությունն է.

> **Դառնալ ապագայի հայկական համալսարան՝ հիմնված գիտական, կրթական, տնտեսական, մշակութային ու սոցիալական գործընթացների միասնական սկզբունքների, հայրենասիրական ու հումանիստական համընդգրկուն արժեքների վրա: Համալսարան, որը ծառայելու է տարածաշրջանի (Շիրակի մարզ, Ջավախքի հայ համայնքներ, իսկ առանձին մասնագիտությունների դեպքում՝ նաև Սփյուռք) գիտակրթական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումներին՝ ապահովելով համապատասխան մասնագետների որակյալ պատրաստումը՝ գիտության և կրթության զարգացման միջազգային չափանիշներին և ՀՀ գիտակրթական քաղաքականությանը ներդաշնակ՝ աջակցելով արտաքին ու ներքին շահառուների համապատասխան կարիքների բավարարմանը:**

1.3. ՀՀ Կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 1031-Ն որոշման հավելված N 1-ի /«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրություն http://shsu.am/media/pdf/SHSU_kanonadrutyun.pdf/ համաձայն հաստատվել է ՇՊՀ-ի կանոնադրությունը:

2.1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, իրականացման և հաշվետվողականության ընթացակարգ՝ հաստատված Գիտական խորհրդի 2018 թվականի հունվարի 31-ի նիստում:

2.2. Վերը նշված ընթացակարգը նախքան հաստատումը փորձարկում է անցել գործընթացի որոշ քայլերի իրականացման առումով, քանի որ այժմ վերանայվում է ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը:

3.1. Արդեն ձևավորվել են ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի, ֆակուլտետների և քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրերը մշակող հանձնախմբեր:

ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը մշակող հանձնախումբ /հրաման թիվ 231, 2017.10.30/.

1. **Մինասյան Սահակ**-ռեկտոր /հանձնախմբի ղեկավար/
2. **Սերոբյան Երվանդ** -ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր,
3. **Ֆարմանյան Անահիտ** - գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր,
4. **Խաչատրյան Թերեզա** - ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի տնօրեն,
5. **Սարգսյան Արմենուհի** - որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն,
6. **Պողոսյան Բագրատ** – բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան,
7. **Հովհաննիսյան Օֆելյա** - սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան,
8. **Մարդոյան Ռուզաննա** – մանկավարժության ֆակուլտետի դեկան,
9. **Մելիքյան Թամարա** – հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
10. **Այվազյան Կարինե** - քոլեջի տնօրեն,
11. **Քալաջյան Ռաֆֆի** - ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ,
12. **Միրզոյան Նարեկ** - իրավաբանական ծառայությունների, փաստաթղթերի պահպանման և արխիվացման հատուկ բաժնի վարիչ,
13. **Հովհաննիսյան Անահիտ** - ռեկտորի օգնական,
14. **Հարությունյան Քաջիկ** – ՈՒԳԸ-ի նախագահ,
15. **Արամյան Կարեն** – ՈՒԽ-ի նախագահ,
16. **Կարապետյան Հրայր** – Շիրակի մարզի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
17. **Եղոյան Ամալյա** - Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի բիզնես զարգացման մենեջեր
18. **Մովսիսյան Մանվել** - Գյումրիի «Ֆոտոն» վարժարանի տնօրեն
19. **Գմյուր-Կարապետյան Արմինե** - «Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի հիմնադրամի գործադիր տնօրեն
20. **Հովհաննիսյան Արման** - «Դ-Լինք» ընկերության Գյումրիի հետազոտական կենտրոնի ղեկավար
21. **Տեր-Մինասյան Ալեքսան** - «Բեռլին-Արթհոթել» հյուրանոցի տնօրեն
22. **Մարտիրոսյան Լիպարիտ** -Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
23. **Տարասյան Գագիկ** -«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն
24. **Խաչատրյան Վալերի** -Նկարիչ, Շիրակի պետական համալսարանի պրոֆեսոր
25. **Սկրտչյան Արթուր** –Գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչ



Կազմվել են ֆակուլտետների և քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրերի նախնական տարբերակները: Այժմ վերջիններիս հիման վրա ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հանձնախմբի կողմից մշակվում է համալսարանի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագիրը:

Ապահովվելու է գործատուների ներգրավվածությունը ոչ միայն ՌԾ-ի մշակման, այլև իրականացման գործընթացում:

Ընդ որում մասնակից-գործատուները տարբեր ոլորտներից են (տե՛ս ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագիրը մշակող հանձնախումբ):

ՇՊՀ-ի զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի մշակումը նախատեսվում է ավարտել 2018 թ.-ի երկրորդ եռամսյակում: Վերջինս ներառելու է ՇՊՀ-ի քոլեջի և ավագ դպրոցի հետ կապված զարգացման միտումները:

Բարձրագույն կրթության մասին օրինագծի ընդունմամբ պայմանավորված ՌԾ մշակող կազմից առանձնացրել ենք մի խումբ՝ ՌԾ-ի առանձին հատվածներ լրամշակելու համար: Սա իր հերթին առաջ է բերում ռազմավարական մոտեցումների փոփոխություն:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

3.1. ԳՊՄԻ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ

ԳՊՄԻ-ի կառուցվածք /2016 թ./



ԳՊՄԻ-ի ֆակուլտետներ և ամբիոններ

ԳՊՄԻ-ում գործել են 6 ֆակուլտետ և 21 ամբիոն (այդ թվում 1 համաինստիտուտային)՝

1.		Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետ
	1.	Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոն
	2.	Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն
	3.	Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
	4.	Տնտեսագիտության ամբիոն
2.		Պատմաբանասիրական ֆակուլտետ
	5.	Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
	6.	Հայ գրականության, նրա դասավանդման մեթոդիկայի և լրագրության ամբիոն
	7.	Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի
3.		Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետ
	8.	Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
	9.	Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն
	10.	Դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

4.		Օտար լեզուների ֆակուլտետ
	11.	Անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
	12.	Ֆրանսերեն, գեմնաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն
	13.	Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
	14.	Արտասահմանյան գրականության ամբիոն
5.		Մանկավարժության ֆակուլտետ
	15.	Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոն
	16.	Նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության և մեթոդիակաների ամբիոն
	17.	Հոգեբանության ամբիոն
	18.	Կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն
6.		Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետ
	19.	Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
	20.	Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
	21.	Փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոն /համահինստիտուտային ամբիոն/

ԳՊՄԻ-ի Կառավարման խորհուրդ (09.02.16 դրությամբ)

1. **Ցոլակյան Ֆելիքս**- ՀՀ Շիրակի մարզպետ
2. **Ղազարյան Գաբրիել-** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար
3. **Ավետիսյան Սուքիաս**- ՀՀ ԱԺ պատգամավոր
4. **Սահակյան Արման**- ՀՀ ԱԺ պատգամավոր
5. **Նազարյան Արա**- ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
6. **Ենգոյան Ամալյա**- ՀՀ կառավարության աշխատակազմի ՀՀ Ազգային ժողովի հետ կապերի վարչության պետ
7. **Մկրտչյան Մանուկ**- ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ
8. **Բախշյան Անահիտ**- ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրեն
9. **Բավեյան Վահե**- ՀՀ ԿԳՆ աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
10. **Մովսիսյան Մանվել**- «Ֆոտոն» վարժարանի տնօրեն
11. **Սուքիասյան Ռոբերտ**- ՀՀ ԿԳՆ աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ
12. **Մինասյան Սահակ-** ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
13. **Մկոյան Արտաշես**- ԳՊՄԻ-ի մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր
14. **Հարությունյան Նաշիկ**- ԳՊՄԻ-ի բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
15. **Սահակյան Կարինե**- ԳՊՄԻ-ի դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
16. **Խաչատրյան Մարիետա**- ԳՊՄԻ-ի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու
17. **Աբգարյան Օվսաննա**- ԳՊՄԻ-ի անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս
18. **Խաչատրյան Արտուշ**- ԳՊՄԻ-ի ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ
19. **Կարապետյան Ալբինա**- ԳՊՄԻ-ի պատմաբանասիրական ֆակուլտետի իրավագիտություն մասնագիտության II կուրսի ուսանող
20. **Շահնազարյան Մելինե**- ԳՊՄԻ-ի օտար լեզուների ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության II կուրսի ուսանող

21. **Համբարձումյան Մարինե**- ԳՊՄԻ-ի մանկավարժության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության II կուրսի ուսանող
22. **Գյուլբեկյան Մարիամ**- ԳՊՄԻ-ի ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության մագիստրատուրա II կուրսի ուսանող
23. **Գենջոյան Արամ**- ԳՊՄԻ-ի ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի ֆիզիկական կուլտուրա և սպորտ մասնագիտության մագիստրատուրա I կուրսի ուսանող
24. **Հարությունյան Սիրանույշ**- ԳՊՄԻ-ի բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի քիմիա մասնագիտության III կուրսի ուսանող

ԳՊՄԻ-ի Գիտական խորհուրդ

1. **Գրիգորյան Վարդևան**-գիտական խորհրդի նախագահ
2. **Ֆարմանյան Անահիտ**-գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր
3. **Առոյան Սպարտակ**-ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր
4. **Ալեքսանյան Սամվել**-ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
5. **Խաչատրյան Թերեզա**-գիտական քարտուղար
6. **Խաչատրյան Վալերի**-արհեստակցական կազմակերպության նախագահ
7. **Ավետիսյան Նազելի**-որակի ապահովման կենտրոնի տնօրեն
8. **Մարգարյան Մկրտիչ**-ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան
9. **Գրիգորյան Անահիտ**-բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան
10. **Մելիքյան Թամարա**-օտար լեզուների ֆակուլտետի դեկան
11. **Մարդոյան Ռուզաննա**-մանկավարժության ֆակուլտետի դեկան
12. **Հայրապետյան Սերգեյ**-պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան
13. **Խաչատրյան Արթուր**-ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի դեկան
14. **Արամյան Կարեն**-ուսանողական խորհրդի նախագահ
15. **Կարապետյան Հրայր** - «Գյումրու թիվ 11 դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձանեցված)
16. **Կարապետյան Գագիկ**-ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնեցված)
17. **Սարգսյան Սամվել**-բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
18. **Դրմեյան Հենրիկ**-ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ
19. **Մարտիրոսյան Լևոն**-աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
20. **Գրիգորյան Անգին**-կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ
21. **Ղուկասյան Լուսիկ**-մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ
22. **Սահակյան Կարինե**-հոգեբանության ամբիոնի վարիչ
23. **Խորիկյան Հովհաննես**-պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար
24. **Խաչատրյան Մարիետա**-հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
25. **Մերոբյան Բաբկեն**-ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
26. **Տոնոյան Երվանդ**-նախազորակոչային պատրաստության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պետի տեղակալ-ուսումնական մասի պետ
27. **Հովհաննիսյան Անահիտ**-անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
28. **Ամբարդարյան Գայանե**-ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
29. **Կոստանյան Նինա**-բակալավրիատի առկա ուսուցման մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող
30. **Աղաբեկյան Տանյա**-բակալավրիատի առկա ուսուցման հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող
31. **Խաչատրյան Լիլիթ**-բակալավրիատի առկա ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն) մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող
32. **Հարությունյան Քաջիկ**-բակալավրիատի առկա ուսուցման աշխարհագրություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող
33. **Կիրակոսյան Արթուր**-բակալավրիատի առկա ուսուցման պատմություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող
34. **Թադևոսյան Թամարա**-բակալավրիատի առկա ուսուցման անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող
35. **Աբգարյան Գոհար**-բակալավրիատի առկա ուսուցման ֆիզիկական կուլտուրա և սպորտ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող

3.2. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի այս չափանիշը գնահատվել է անբավարար՝ նշելով հետևյալ թերությունները.

1. Կառավարման համակարգը հարմարեցված չէ ռազմավարական խնդիրների և նպատակների իրականացմանը:
2. Օպերատիվ կառավարման համակարգում առկա է կառավարչական ռեսուրսների ոչ արդյունավետ տեղաբաշխում: Մասնավորապես ուսումնական գործունեության, գիտության, արտաքին կապերի կառավարման, ինչպես նաև ուսումնամեթոդական վարչության պետի պարտականությունների կենտրոնացում:
3. Ընդգծվում է անհրաժեշտ ֆինանսական և նյութական ռեսուրսների պակաս, որի արդյունքում կրճատվել են որոշ ծախսեր՝ ուղղված բարեփոխումներին (10%-ից 5%):
4. Բուհի ֆինանսական պլանավորումն իրականացվում է բուհի, այլ ոչ թե ֆակուլտետների և առանձին ՄԿԾ-ների մակարդակով:
5. Պլանավորման, իրականացման և մշտադիտարկման մեխանիզմները հիմնված են միայն հաշվետվողականության համակարգի վրա, և մշակված չեն մշտադիտարկման, հետադարձ կապի և բարելավման գործուն ընթացակարգեր և մեխանիզմներ:
6. Կատարված հարցումներից բացի, բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության այլ մեթոդներ չեն կիրառվում:
7. Դասախոսների և ուսանողների մասնակցության պայմաններում ցածր է իրենց վերաբերող խնդիրների բարձրացման նախաձեռնողականությունը, որը բացասաբար է ազդում բուհի կառավարման արդյունավետության վրա:
8. Բուհի կառավարման համակարգում ստեղծված հանձնաժողովների գործունեությունը և գործունեության արդյունքները բավարար չափով արձանագրված և վերլուծված չեն:

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	**4.**	***Բարեփոխել բուհի կազմակերպական կառուցվածքը՝*** *այն հարմարեցնելով բուհի ռազմավարական խնդիրների իրականացմանը:*
	5.	*Մշակել և կիրառել էթիկայի սկզբունքներ:*
	6.	*Խթանել արտաքին և ներքին շահառուների ներգրավվածությունը կառավարման գործընթացում:*

	7.	*Մշակել կառավարման գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և դրանց կիրառումը գնահատող նոր մեթոդաբանություն՝ համապատասխան գործիքակազմով:*

3.3. ՇՊՀ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ

ՇՊՀ-ի կառուցվածք /հաստատվել է՝ ըստ Հոգաբարձուների խորհրդի 19.04.2017, N 3/1 որոշման/



ՇՊՀ-ի կառուցվածքային փոփոխությունն անհրաժեշտություն էր՝ պայմանավորված գործառույթների ապակենտրոնացմամբ, ռազմավարական խնդիրների և նպատակների իրականացման ու ռեսուրսների կառավարման գործընթացների արդյունավետ կառավարմամբ, ինչպես նաև ուսանողների թվով (ֆակուլտետների և ամբիոնների միավորում):

ՇՊՀ-ի ֆակուլտետներ և ամբիոններ

Այժմ գործում են 4 ֆակուլտետ և 14 ամբիոն (այդ թվում՝ 1 համահամալսարանական)՝

1.		Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ
	1.	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն
	2.	Գործարարության և վարչարարության ամբիոն
	3.	Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն
2.		Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ

	4.	Հայոց լեզվի և գրականության ամբիոն
	5.	Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն
	6.	Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն
	7.	Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն
	8.	Արվեստի ամբիոն
3.		Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ
	9.	Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն
	10.	Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն
	11.	Պատմության և փիլիսոփայության ամբիոն
4.		Մանկավարժության ֆակուլտետ
	12.	Մանկավարժության ամբիոն
	13.	Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն
	14.	Ռազմական ամբիոն /համահամալսարանական ամբիոն/

ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի կազմ

1. **Ցոլակյան Ֆելիքս**– ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ
2. **Սահակյան Արման**– ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
3. **Սիմոնյան Հովսեփ**– «Արփի լիճ» ազգային պարկի տնօրեն
4. **Ենգոյան Ամալյա**– ՀՀ կառավարության աշխատակազմի ՀՀ ազգային ժողովի հետ կապերի վարչության պետ
5. **Նազարյան Արա**– ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
6. **Մկրտչյան Մանուկ**– ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
7. **Ղումաշյան Գևորգ** _ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
8. **Շիլաջյան Սամվել**— «Ալֆա-ֆարմ» ՓԲԸ-ի դեղատների ցանցի տնօրեն
9. **Մովսիսյան Մանվել**– ՀՀ ԿԳՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ-ի տնօրեն
10. **Հարությունյան Նաշիկ**– ՇՊՀ-ի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու
11. **Ավետիսյան Սուքիաս**– ՀՊՏՀ ԳՄ տնօրենի տեղակալ
12. **Մերոբյան Երվանդ** – ՇՊՀ-ի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր, ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ
13. **Պետրոսյան Կարինե –** ՇՊՀ-ի գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
14. **Մաթևոսյան Էվելինա** — ՇՊՀ-ի ռուսաց լեզու և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ
15. **Մանուկյան Վարդան**— ՇՊՀ-ի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ԺՊ
16. **Աղանյան Գևորգ**—ՇՊՀ-ի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ
17. **Մկոյան Արտաշես**— ՇՊՀ-ի մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
18. **Մելքոնյան Հովիկ**— ՇՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
19. **Մինասյան Արթուր**— ՇՊՀ, հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, սերվիս մասնագիտության III կուրսի ուսանող
20. **Կարապետյան Լիլիթ**— ՇՊՀ, մանկավարժության ֆակուլտետ, կրթության կազմակերպում մասնագիտության մագիստրատուրայի II կուրսի ուսանող
21. **Գևորգյան Մարիամ**— ՇՊՀ, հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության III կուրսի ուսանող
22. **Հովհաննիսյան Մուշեղ**— ՇՊՀ, բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, կառավարում մասնագիտության IV կուրսի ուսանող
23. **Սարգսյան Անուշավան**— ՇՊՀ, նախազորակոչային և ֆիզիկական պատրաստության մասնագիտության III կուրսի ուսանող
24. **Սարգսյան Ռուբիկ**— ՇՊՀ, հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, իրավագիտություն մասնագիտության IV կուրսի ուսանող





ՇՊՀ-ի գիտական խորհրդի կազմ

1. **Մինասյան Սահակ**— Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2. **Ֆարմանյան Անահիտ**— Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
3. **Մերոբյան Երվանդ**— Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
4. **Պետրոսյան Կարինե**— Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Խաչատրյան Վալերի**— Արհեստակցական կազմակերպության նախագահ
6. **Պողոսյան Բագրատ**– Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու
7. **Տոնոյան Երվանդ**— Ռազմական ամբիոնի պետի տեղակալ- ուսումնական մասի պետ
8. **Խաչատրյան Թերեզա**— Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն- գրադարանի տնօրեն
9. **Սարգսյան Արմենուհի**— Ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
10. **Ռաֆֆի Քալաջյան**— Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
11. **Սարգսյան Սամվել**— Ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
12. **Հայրապետյան Սերգո**— Բանասիրական գիտությունների դոկտոր, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
13. **Հովհաննիսյան Անահիտ**— բանասիրական գիտությունների դոկտոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
14. **Դրմեյան Հենրիկ**— տեխնիկական գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
15. **Մարդոյան Ռուզաննա**— Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, մանկավաժության ամբիոնի պրոֆեսոր
16. **Խորիկյան Հովհաննես Գեորգու** — Պատմական գիտությունների թեկնածու, պատմության և փիլիսոփայության ամբիոնի դոցենտ
17. **Մելիքյան Թամարա**— Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
18. **Տեր-Ադամյան Շուշանիկ**— Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ
19. **Ղուկասյան Լուսիկ**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, մանկավարժության ամբիոնի դոցենտ
20. **Հակոբյան Լիզա**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, մանկավարժության ամբիոնի դոցենտ
21. **Մարտիրոսյան Լևոն**— Աշխարհագրական գիտությունների թեկնածու, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ
22. **Արամյան Կարեն Արմենի** — ՇՊՀ-ի ՈւԽ նախագահ, ռազմական ամբիոն «Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող
23. **Խաչատրյան Լիլիթ** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մանկավարժություն և մեթոդիկա», 4-րդ կուրսի ուսանողուհի

24. **Ավետիսյան Հրանուշ**— Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
25. **Միսիթարյան Անահիտ**— Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Կիրառական արվեստ» 3-րդ կուրսի ուսանողուհի
26. **Կոստանյան Նինա**— Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Մաթեմատիկա» 4-րդ կուրսի ուսանողուհի
27. **Հարությունյան Քաջիկ**— Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 1-ին կուրսի ուսանող (մագիստրատուրա)
28. **Մելքոնյան Արմեն**— Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)
29. **Չարչօղլյան Արթուր**— Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող (հեռակա բակալավրիատ)



ՇՊՀ-ի ռեկտորատի կազմ

1. **Մինասյան Սահակ**— Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2. **Ֆարմանյան Անահիտ**— Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
3. **Սերոբյան Երվանդ**— Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
4. **Պետրոսյան Կարինե**— Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Խաչատրյան Վալերի**— Արհեստակցական կազմակերպության նախագահ
6. **Խաչատրյան Թերեզա**— Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն- գրադարանի տնօրեն
7. **Սարգսյան Արմենուհի**— Ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
8. **Պողոսյան Բագրատ**– Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու,
9. **Մարդոյան Ռուզաննա**— Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, մանկավաժության ամբիոնի պրոֆեսոր
10. **Մելիքյան Թամարա**— Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
11. **Հովհաննիսյան Օֆելյա** – սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան, բան. գիտ. թեկնածու, դոցենտ
12. **Շահպարոնյան Սերգեյ**-ռեկտորի խորհրդական
13. **Հովհաննիսյան Անահիտ –** ռեկտորի օգնական
14. **Ռաֆֆի Քալաջյան**— Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
15. **Միրզոյան Նարեկ** – իրավաբանական ծառայությունների, փաստաթղթերի պահպանման և արխիվացման հատուկ բաժնի վարիչ

3.4. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		Քայլեր		Ընթացիկ վիճակը	Ժամանակա-հատված
4.	Բուհի կազմակերպական կառուցվածքի բարեփոխում	4.1	Ապակենտրոնացնել ուսումնական գործունեության և գիտության ու արտաքին կապերի կառավարման գործառույթները	Ավարտված	2016թ. IV եռ. – 2017թ. II եռ.
		4.2	Ստեղծել ստորաբաժանում, որը կներառի մարդկային ռեսուրսների կառավարման գործառույթները	Ավարտված	2016թ. IV եռ. - 2017թ. II եռ.
5.	Էթիկայի կանոնագրքի մշակում և կիրառում	5.1	Մշակել բուհի ներքին շահառուների էթիկայի սկզբունքներ	Ավարտված	2016թ. IV եռ. - 2017թ. I եռ.
		5.2	Գործառության մեջ դնել սկզբունքները	Ավարտված	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
6.	Կառավարման գործընթացներում արտաքին շահառուների ներգրավվածություն, ներքին շահառուների գործունեության ակտիվացում	6.1	Ապահովել գիտական և ֆակուլտետային խորհուրդների կազմերում արտաքին շահառուների ընդգրկվածություն	Իրականաց-ման փուլ	2017թ. I եռ.- 2017թ. III եռ.
		6.2	Լրամշակել գիտական խորհրդի, ֆակուլ-տետի խորհուրդների կանոնակարգերը	Ավարտված	2017թ. I եռ.- 2017թ. II եռ.
		6.3	Մշակել-կիրառել մեխանիզմներ ներքին շահառուների նախաձեռնողականության ակտիվացման նպատակով	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից
7.	Կառավարման գործըն-թացների արդյունավե-տության գնահատում	7.1	Մշակել և կիրառել կառավարման գործընթացների գնահատման մեխանիզմներ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից

Վերը նշված գործողությունների ընթացքի վերաբերյալ.

4.1. Կառուցվածքային փոփոխության արդյունքում ունենք Ուսումնագիտական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոն և Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոն /տե՛ս ՇՊՀ-ի կառուցվածք/: Հաստատվել են երկու կենտրոնների կանոնադրությունները, որոնք հասանելի են առցանց /http://shsu.am/media/pdf/SHSU_usumnametodakan_gocyntaci_karavarman_kentroni_kanonadrutyun.pdf, http://shsu.am/media/pdf/SHSU_gitqax_artaqinham_kentroni_kanonadrutyun.pdf /

4.2. Կառուցվածքային փոփոխության արդյունքում ունենք ՇՊՀ-ի անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժին /տե՛ս ՇՊՀ-ի կառուցվածք/: Հաստատվել է բաժնի կանոնադրությունը /ՇՊՀ-ի անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժնի կանոնադրություն՝ հաստատված Գիտական խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի նիստում/:

Բաժինը ներառում է մարդկային ռեսուրսների կառավարման գործառույթներ:

5.1. Հաստատվել է «ՇՊՀ-ի էթիկայի սկզբունքներ» փաստաթուղթը /http://shsu.am/media/pdf/SHSU_etikayi_skzbunqner.pdf/:

5.2. Արդեն դրվել է գործածության մեջ:

6.1. ՇՊՀ-ի Գիտական խորհրդում և ֆակուլտետների խորհուրդների կազմերում ընդգրկվելու են արտաքին շահառուներ:

6.2. Հաստատվել է ՇՊՀ-ի Գիտական խորհրդի կանոնակարգը /http://shsu.am/media/pdf/SHSU_gitxorhrdi_kanonakarg.pdf/, իսկ ՇՊՀ-ի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության 3-րդ բաժինը /http://shsu.am/media/pdf/SHSU_fakulteti_kanonadrutyun.pdf/ կանոնակարգում է ֆակուլտետների խորհուրդների գործունեությունը:

6.3. Ռեկտորը և ռեկտորատի մյուս անդամները պարբերաբար հանդիպումներ են ունենում ուսանողների և դասախոսների հետ: Այդ հանդիպումների ժամանակ բարձրաձայնվում են տարբեր խնդիրներ:

Ներքին շահառուների նախաձեռնողականության ակտիվացման մեխանիզմներից է նաև ՇՊՀ-ի որակի ապահովման և կառավարման ներդրված նոր համակարգը: Որակի ապահովման և կառավարման կենտրոնն այժմ կիրառում է ուսանողներին ներգրավելու նոր մեխանիզմներ: Այդ նպատակով բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունեցել ուսանողների խմբերի հետ և արդյունքում շուրջ 70 ուսանողներ բուհից իրենց կամքով ցանկություն են հայտնել ներգրավվել բուհի որակի ապահովման գործընթացներին: Այժմ աշխատանքներ են տարվում նախաձեռնությունը զարգացնելու նպատակով:

Բարձրացել է ուսանողական խորհրդում և կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների նախաձեռնողականությունը:

Ուսանողները գիտխորհրդում հանդես են եկել նաև առաջարկություններով, որոնք հիմք են ընդունվել և հաստատվել:

7.1. Կառավարման գործընթացների գնահատման մեխանիզմների մշակման գործընթացը դեռ պլանավորման փուլում է:

Այսպես. ՇՊՀ-ի նոր կառուցվածքը համապատասխանեցված է ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական նպատակներին և ապահովում է գործառույթների ապակենտրոնացվածություն: Համապատասխան ստորաբաժանումների համար հաստատված են կանոնադրություններ, որոնց հիման վրա կարգավորվում են գործունեությունները: Հաստատվել են Գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների գործունեությունները

կարգավորող փաստաթղթեր: Ապահովվելու է Գիտական և ֆակուլտետների խորհուրդների կազմերում արտաքին շահառուների ներգրավվածություն:

ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդի կազմում 17 %-ը գործատուներ են, 31 %-ը ՇՊՀ-ի դասախոսներ, 26 %-ը ՇՊՀ-ի ուսանողներ և միայն 9%-ն են քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք:

Գիտական խորհրդի կազմում 21%-ը գիտությունների դոկտորներ են, 45%-ը գիտությունների թեկնածուներ, իսկ 27%-ը՝ ուսանողներ:

Շարունակվում են աշխատանքները ներքին շահառուների նախաձեռնողականությունը բարձրացնելու և բարեփոխումների գործընթացներին ներգրավվածությունն ապահովելու ուղղություններով:

4. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

4.1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ /ԱՌԿԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ, ՀԵՌԱԿԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ, ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ/

ԱՌԿԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ		
№	ԱՄԲԻՈՆ	ԹՈՂԱՐԿՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ (ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄ
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
1.	**Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն**	1. Մաթեմատիկա 2. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա 3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ 4. Ֆիզիկա
2.	**Գործարարության և վարչարարության ամբիոն**	1. Կառավարում 2. *Հաշվապահական հաշվառում և հարկում* 3. *Շուկայագիտություն*
3.	**Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն**	1. Աշխարհագրություն 2. Քարտեզագրություն և կադաստրային գործ 3. Կենսաբանություն 4. Դեղագործական քիմիա
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
4.	**Հայոց լեզվի և գրականության ամբիոն**	1. Հայոց լեզու և գրականություն 2. Լրագրություն
5.	**Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն**	1. Ռուսաց լեզու և գրականություն 2. Թարգմանչական գործ՝ ռուսերեն-անգլերեն
6.	**Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն**	1. Անգլերեն լեզու և գրականություն 2. Թարգմանչական գործ՝ ռուսերեն-անգլերեն 3. Թարգմանչական գործ՝ անգլերեն-հայերեն
7.	**Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն**	1. *Միջմշակութային հաղորդակցություն՝ ֆրանսերեն և հայերեն* 2. *Միջմշակութային հաղորդակցություն՝ գերմաներեն և հայերեն* 3. Սերվիս
8.	**Արվեստի ամբիոն**	1. Դեկորատիվ կիրառական արվեստ 2. *Դիզայն* 3. *Համակարգչային գրաֆիկա* 4. Երաժշտական կրթություն 5. Կերպարվեստ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
9.	**Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն**	1. *Քաղաքագիտություն*
10.	**Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն**	1. Հոգեբանություն 2. *Սոցիոլոգիա* 3. Սոցիալական աշխատանք

11.	**Պատմության և փիլիսոփայության ամբիոն**	1. Պատմություն
	ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
12.	**Մանկավարժության ամբիոն**	1. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
13.	**Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն**	1. Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
	ՇՊՀ-ում առանձնակի կարգավիճակ ունեցող ամբիոն	
14.	**Ռազմական ամբիոն**	1. Նախնական զինվորական պատրաստություն

ՀԵՌԱԿԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

№	ԱՄԲԻՈՆ	ԹՈՂԱՐԿՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ (ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄ
	ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
1.	**Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն**	1. Մաթեմատիկա 2. Ինֆորմատիկա 3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ 4. Ֆիզիկա
2.	**Գործարարության և վարչարարության ամբիոն**	1. Կառավարում *2. Հաշվապահական հաշվառում և հարկում*
3.	**Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն**	1. Աշխարհագրություն 2. Քարտեզագրություն և կադաստրային գործ 3. Կենսաբանություն 4. Դեղագործական քիմիա
	ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
4.	**Հայոց լեզվի և գրականության ամբիոն**	1. Հայոց լեզու և գրականություն 2. Լրագրություն
5.	**Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն**	1. Ռուսաց լեզու և գրականություն
6.	**Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն**	1. Անգլերեն լեզու և գրականություն
7.	**Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն**	1. Սերվիս
8.	**Արվեստի ամբիոն**	1. Կերպարվեստ
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
9.	**Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն**	*1. Քաղաքագիտություն* 2. Իրավագիտություն
10.	**Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն**	1. Հոգեբանություն *2. Սոցիոլոգիա* 3. Սոցիալական աշխատանք
11.	**Պատմության և փիլիսոփայության ամբիոն**	1. Պատմություն
	ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
12.	**Մանկավարժության ամբիոն**	1. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 2. Ն/դ մանկավարժություն և մեթոդիկա 3. Սոցիալական մանկավարժություն

13.	**Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն**	1. Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ 2. Ն/դ մանկավարժություն և մեթոդիկա
ՇՊՀ-ում առանձնակի կարգավիճակ ունեցող ամբիոն		
14.	**Ռազմական ամբիոն**	1. Նախնական զինվորական պատրաստություն
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ		
№	ԱՄԲԻՈՆ	ԹՈՂԱՐԿՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ (ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄ
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
1.	**Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոն**	1. Մաթեմատիկա *2. Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա* 3. Ֆիզիկա
2.	**Գործարարության և վարչարարության ամբիոն**	1. Կառավարում
3.	**Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն**	1. Աշխարհագրություն 2. Կենսաբանություն
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
4.	**Հայոց լեզվի և գրականության ամբիոն**	1. Հայոց լեզու և գրականություն *2. Լրագրություն*
5.	**Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն**	1. Ռուսաց լեզու և գրականություն
6.	**Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն**	1. Անգլերեն լեզու և գրականություն 2. Թարգմանչական գործ՝ անգլերեն-հայերեն
7.	**Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոն**	*1. Կայուն զբոսաշրջություն*
8.	**Արվեստի ամբիոն**	1. Դեկորատիվ կիրառական արվեստ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
9.	**Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոն**	*1. Քաղաքագիտություն* 2. *Իրավագիտություն*
10.	**Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն**	1. Հոգեբանություն *2. Զինվորական հոգեբանություն* 3. Սոցիալական աշխատանք
11.	**Պատմության և փիլիսոփայության ամբիոն**	1. Պատմություն
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
12.	**Մանկավարժության ամբիոն**	1. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա *2. Սոցիալական մանկավարժություն* 3. Կրթության կազմակերպում
13.	**Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոն**	1. Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
ՇՊՀ-ում առանձնակի կարգավիճակ ունեցող ամբիոն		
14.	**Ռազմական ամբիոն**	1. Նախնական զինվորական պատրաստություն

ՇՊՀ-ում ուսումնառությունն իրականացվում է առկա բակալավրիատի թվով 34, հեռակա բակալավրիատի 28 և մագիստրատուրայի 24 մասնագիտություններով:

Նշենք, որ վերջին ուսումնական տարվա ընթացքում ներդրվել են նոր ՄԿԾ-ներ (ներկայացված ցանկում ընդգծված են)՝ պայմանավորված բուհի առաքելությամբ և աշխատաշուկայի պահանջով:

4.2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

4.2.1. Ընդունելության քննությունների միջին ցուցանիշներ.

Առկա բակալավրիատի ընդունելության քննությունների միջին ցուցանիշներ (հաշվի են առնված միայն միասնական, մրցութային քննությունների արդյունքները)՝ ըստ մասնագիտությունների վերջին 3 ուստարիների համար.

N	Մասնագիտություն	Ուսումնական տարի		
		2015-2016	2016-2017	2017-2018
1	Մաթեմատիկա	28,6	28	28
2	Ինֆ. և կիր. մաթ.	24	24	26
3	Տեղեկատվ. տեխնոլոգիաներ	-	25,6	36,4
4	Ինֆորմատիկա	21,2	-	-
5	Ֆիզիկա	26,1	29,3	19,8
6	Կառավարում	22	28	25,5
7	Հաշվապ. հաշվառ. և հարկում	-	-	22,7
8	Շուկայագիտություն	-	-	24,8
9	Կենսաբանություն	24,7	27	29,35
10	Աշխարհագրություն	28,5	27	25,5
11	Դեղ. քիմիա	26,5	22	27,25
12	Քարտեզագրություն	33,1	24	27,5
13	Սերվիս	27,2	29	29
14	Թարգ. գործ. (անգլ.-ռուս.)	27,8	30,5	31,1
15	Թարգ. գործ. (անգլ.-հայ.)	24	31	30,53
16	Ֆրանսերեն լեզու	30,1	20	-
17	Ռուսաց լեզու և գրակ.	30	23,5	28,2
18	Անգլերեն լեզու և գրակ.	30,3	28,8	31,9
19	Լրագրություն	19	31	21,5
Հետազոտական գործունեության մեջ ուսանողների ներգրավման նպատակով անհրաժեշտ է մշակել խրախուսման մեխանիզմներ ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար։

5.8. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՈՒՍԱՆՈՂՆԵՐ» ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի՝ այս չափանիշը գնահատվել է բավարար՝ նշելով հետևյալ թերությունները.

1. Ընդունելության արդյունքների որակական վերլուծություն բուհի կողմից չի իրականացվել։
2. Ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրման համար կիրառել այլ մեթոդներ բացի արդեն կիրառվող մեթոդներից (ուսանողների ներգրավվածություն բուհի կառավարման խորհրդում, գիտական և ֆակուլտետային խորհուրդներում, ուսանողների շրջանում տարաբնույթ հարցումների անցկացում)։
3. Բուհի ուսանողների շահագրգռվածությունը՝ վերհանել իրենց կարիքներն ու մասնակցել բուհում կատարվող գործընթացներին, այնքան էլ բարձր չէ։
4. Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների կարիքների վերհանումն ու ուսումնասիրությունը դեռ անբավարար է զարգացած բուհում։
5. Ուսանողները գրեթե անտեղյակ են էլեկտրոնային ուղեցույցից։
6. Դեկանատներ և ամբիոններ ուսանողների մուտքը ֆիքսված չէ ժամային գրաֆիկով, բացի ռեկտորի հետ հանդիպելուց։
7. Բուհ-գործատու համագործակցության կենտրոնի աշխատանքների արդյունավետությունը բարձր չէ. ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ կենտրոնի և այլ ստորաբաժանումների կողմից գրեթե չի տրամադրվում։ Կենտրոնի կողմից իրականացվել են

միայն մի շարք հարցումներ, պլանավորել են որոշակի գործողություններ՝ ուղղված շրջանավարտներին աշխատանքի տեղավորման խնդիրներին:

8. Կենտրոնում բացակայում է աշխատաշուկայում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը, աշխատանքի կարիք ունեցող ուսանողների տվյալների բազան, ինչպես նաև շրջանավարտների մասին տեղեկատվությունը:
9. Գիտահետազոտական աշխատանքներին ներգրավվածության խթանման նպատակով բուհը նախաձեռնում է մշակել համապատասխան ընթացակարգ:
10. Հատկապես ցածր է արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին բուհի ուսանողների մասնակցության ցուցանիշը:
11. Հետազոտական աշխատանքները հիմնականում կատարվում են մագիստրատուրայում՝ որպես կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս:
12. Ուսանողների բողոքները որոշ դեպքերում չեն արձանագրվում, ներկայացվում ու քննարկվում են բանավոր հիմունքներով:
13. Բուհում լրացուցիչ պարապմունքների անցկացման հնարավորությունը միայն ակադեմիական պարտքի վերահանձնելու դեպքում է:
14. Ուսանողների համար լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու գործընթացները դեռևս դրվագային բնույթ են կրում:

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	12	*Իրականացնել ընդունելության արդյունքների համալիր վերլուծություն:*
	13	*Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և ուսումնասիրել դրանց արդյունավետությունը, խթանել ուսանողների կողմից խնդիրների վերհանման նախաձեռնողականությունը:*
	14	*Զարգացնել ուսանողների հետազոտական գործունեությունը և ուժեղացնել հետազոտություն -ուսումնառություն կապը:*
	15	*Բարեփոխել ուսանողների և շրջանավարտների աշխատանքային զբաղվածությանը խթանող գործառույթները:*
	16	*Կանոնակարգել վարչական աշխատակազմին դիմելու գործընթացները:*
	17	*Ընդլայնել լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորությունները:*

5.9. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		Քայլեր		Ընթացիկ վիճակը	Ժամանակահատված
12	Իրականացնել ընդունելության արդյունքների վերլուծություն	12.1	Իրականացնել ընդունելության քննությունների որակական վերլուծություններ	Պլանավորման փուլ	2018 թ.-ի I եռ.-ից
13	Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և ուսումնասիրել դրանց արդյունավետությունը, օժանդակել ուսանողների կողմից խնդիրների վերհանման նախաձեռնողականությանը	13.1	Մշակել և կիրառել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից
		13.2	Կազմակերպել ուսանողների լայն շերտերի և ռեկտորի ու ռեկտորատի անդամների հետ հանդիպումներ	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2016թ. III եռ.-ից
		13.3	Օժանդակել կառավարման մարմիններում ընդգրկված ուսանողների ակտիվ մասնակցությանը	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2016թ. III եռ. –ից
14	Զարգացնել ուսանողների հետազոտական գործունեությունը և ուժեղացնել հետազոտություն - ուսումնառություն կապը	14.1	Մշակել և կիրառել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի խրախուսման ընթացակարգ՝ ուսանողներին հետազոտական, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու համար	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
		14.2	Մշակել և ներդնել հանրապետական և միջազգային գիտաժողովներին ուսանողների մասնակցությունը խրախուսող կանոնակարգ	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
15	Օժանդակել ուսանողների և շրջանավարտների աշխատանքային զբաղվածությանը	15.1	Ստեղծել և կիրառել մեխանիզմներ աշխատաշուկայի պահանջների և թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը շրջանավարտներին հասանելի դարձնելու համար	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2016թ. I եռ.-ից
		15.2	Ստեղծել և կիրառել մեխանիզմներ բուհի շրջանավարտների ակադեմիական տվյալները աշխատաշուկայի ներկայացուցիչներին հասանելի դարձնելու համար	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2018 թ. I եռ.-ից
		15.3	Վեր հանելով գործատուների և շրջանավարտների կրթական կարիքները՝ կազմակերպել լրացուցիչ դասընթացներ	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. II եռ.-ից
		15.4	Կազմակերպել հանդիպումներ գործատուների, զբաղվածության կենտրոնների գործակալությունների հետ, մասնակցել ու աջակցել աշխատանքի տոնավաճառների կազմակերպմանը	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2016թ. I եռ.-ից
16	Կանոնակարգել վարչական աշխատակազմին դիմելու գործընթացները	16.1	Մշակել և կիրառել ուսանողների՝ վարչական աշխատակազմին դիմելու կանոնակարգ	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից

17	**Ընդլայնել լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հրարավորությունները**	17.1	Մշակել խորհրդատվությունների (լրացուցիչ) իրականացման համակարգ	Իրականաց-ման փուլ	2018թ. II եռ.-
		17.2	Ներդնել խորհրդատվությունների (լրացուցիչ) իրականացման համակարգ	Պլանավոր-ման և մեկ-նարկման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. II եռ.-ից

12.1. Իրականացվել են վերլուծություններ ՇՊՀ ընդունվածների ընդունելության քննությունների միջին ցուցանիշների տեսանկյունից (համեմատական վերլուծություններ՝ ըստ մասնագիտությունների, և ընդհանուր ցուցանիշների մասով՝ վերջին 3 ուստարիների համար): Սակայն մտադիր ենք իրականացնել նաև որակական լուրջ վերլուծություններ:

13.1. ՇՊՀ-ի նոր կառուցվածքում առկա է Ուսանողների աջակցության բաժին, որը գլխավորապես զբաղվելու է ուսանողների տարբեր կարիքների վերհանմամբ:

Բացի այդ այժմ (2017 թ.-ի դեկտեմբեր ամսից) Որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից նախաձեռնվել և իրականացվում է կամավոր ուսանողների հավաքագրում որպես որակի աջակիցներ: Նրանք, բացի այլ գործառույթներից, բարձրացնելու են թե՛ իրենց և թե՛ ուսանողների այլ խմբերի կարիքներ՝ միաժամանակ քննարկելով և առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

13.2. Տարբեր հարցերով պայմանավորված ուսանողների հետ հանդիպումներ են ունենում ինչպես ռեկտորը, այնպես էլ ռեկտորատի անդամները (պրոռեկտորներ, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, ուսումնագիտական-խորհրդատվական կենտրոն-գրադարանի տնօրեն, դեկաններ, իրավախորհրդատու):

13.3. Գիտական խորհրդում ընդգրկված ուսանողները բավական ակտիվություն են ցուցաբերում՝ տարբեր հարցեր բարձրացնելով և շատ դեպքերում նաև համապատասխան լուծումներ առաջադրելով, և դա օժանդակվում է ղեկավարների կողմից:

Այսպես. Գիտական խորհրդում ուսանողի կողմից հարց է բարձրացվել այն մասին, որ 4-րդ կուրսի ուսումնական պլանով նախատեսված կուրսային աշխատանքները ավարտական կուրսերում ավելորդ ծանրաբեռնվածություն են ստեղծում ուսանողների համար, և առաջարկել է հնարավորության սահմաններում վերջին կուրսում դրանք սահմանափակել: Այս հարցը լուրջ ուշադրության է արժանացել, և առաջադրվել է խնդրին լուծում տալ:

Բերվածը օրինակներից մեկն է: Սակայն աշխատանքներ են տարվում ՈՒԽ-ի, ՈՒԳԸ-ի և համապատասխան կառույցների կողմից ուսանողների նախաձեռնողականությունն ու ներգրավվածությունն առավել բարձրացնելու համար:

14.1. ՇՊՀ-ի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում պահանջ է ներկայացված խմբում առնվազն մեկ ուսանող ընդգրկելու համար:

Բացի այդ, ռեկտորի նախաձեռնությամբ ներդրվելու է նաև հետազոտական ներբուհական դրամաշնորհ ուսանողների համար, որի դեպքում խումբը կազմված է լինելու ուսանողներից և ղեկավարվելու է մի դասախոսի կողմից:

14.2. ՈՒԳԸ-ի կողմից մշակվել է համապատասխան փաստաթուղթ, որը առաջիկայում ներկայացվելու է Գիտական խորհրդի հաստատմանը:

15.1. Տարածվում են աշխատանքի հայտարարություններ ուսանողների շրջանում /հայտարարությունների տախտակին, էլեկտրոնային եղանակով/:

15.2. Ստորագրվել է հուշագիր ԱՅ ԷՅ ԲԻ բիզնես ակադեմիայի հետ:

Վերջինս գլխավորապես նպատակ ունի.

- կատարելագործելու բուհական շրջանավարտների և պոտենցիալ երիտասարդ ձեռնարկատերերի բիզնես գիտելիքները
- ուղղորդել երիտասարդներին՝ ընտրելու կարիերայի ճիշտ ուղի՝ կիրառելով իրենց մասնագիտական ներուժը:

15.3. Նախատեսվում է իրականացնել 2018 թ.-ի III եռամսյակից:

15.4. 2016 թվականին Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի Բուհ գործատու համագործակցության կենտրոնը Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ իրականացրել է «Հմուտ և մրցունակ երիտասարդ» ծրագիրը: Ծրագիրն իրականացվել է «Գյումրին 2016թ. երիտատասարդական մայրաքաղաք»-ի շրջանակներում ՀՀ Սպորտի և երիտասարդության նախարարության աջակցությամբ:

Ծրագրի նպատակն էր նպաստել ուսանողների՝ աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը անհատական և աշխատանքային հմտությունների զարգացման միջոցով: Ծրագրին մասնակցել են Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի բակալավր 4-րդ և մագիստրատուրա 1-ին կուրսերի 30 ուսանող:

Ծրագրի շրջանակներում ուսանողները ուսումնասիրել են թեմաներ, որոնք վերաբերում էին էլեկտրոնային գրագիտությանը, կոնֆլիկտների հաղթահարմանն ու բանակցությունների վարման հմտություններին, կրթությունից դեպի աշխատաշուկա անցմանը, ինքնակենսագրականի մշակմանը, աշխատաշուկայի և գործատուի պահանջներին, խոսքի էթիկային, կարիերայի և առաջխաղացման հնարավորություններին և այլն:

Դասընթացներն ընթացել են մայիսի 3-ից հունիսի 17-ն ընկած ժամանակահատվածում, և վարել են ոլորտի տարբեր փորձագետներ:

Այժմ, կիրառելով առկա բոլոր հնարավոր կապերը՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը հաղորդվում է ուսանողներին: Կազմակերպվում են հանդիպումներ գործատուների հետ (Microsoft ընկերություն, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ և այլն):

Նախատեսվում է այս ուղղությամբ լուրջ աշխատանքներ ծավալել:

16.1. Որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից իրականացվում է հետազոտություն գործող մոտեցումների պարզաբանման տեսանկյունից և նախատեսվում է առաջիկայում կազմել համապատասխան փաստաթուղթ, որը պետք է կարգավորի ուսանողների վարչական աշխատակազմին դիմելու գործընթացը:

17.1. Բուհում նախատեսվում է կազմակերպել 2 տեսակի խորհրդատվություններ՝ ծրագրային հիմնական և ծրագրային լրացուցիչ: Խորհրդատվությունների իրականացումը կազմակերպելու է Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանը՝ համագործակցելով ուսումնական ստորաբաժանումների հետ: Խորհրդատվություններն անցկացվելու են ինչպես դեմ առ դեմ, այնպես էլ հեռավար ձևաչափերով (նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ): ՇՊՀ-ի ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի քաղաքականության և ընթացակարգերի ուղեցույցում պարզաբանվելու և կանոնակարգվելու են խորհրդատվությունների տեսակները, գործառույթները, իրականացման ընթացակարգը և այլ մանրամասներ: Ընթացակարգի մշակումն ընթացքի մեջ է:

17.2. Նախատեսվում է այս համակարգն առաջիկայում ներդնել:

6. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

6.1. ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԵՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՏԵՂՈՂ) ԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

2017-2018 ուստարի





ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ՝ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Ամբիոն	ՊԴ կազմ	ՊԴ կազմ՝ ըստ գիտական աստիճանների			ՊԴ կազմ՝ ըստ գիտական կոչումների		
			Գիտ. դոկտոր	Գիտ. թեկնածու	Առանց գիտ. աստիճանի	Պրոֆեսոր	Դոցենտ	Առանց գիտ. կոչման
	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ							
1.	Մաթեմատիկա, ֆիզիկա տեղեկատվական տեխնոլոգիա	40	3	20	17	3	14	23
2.	Աշխարհագրություն կենսաբանություն և քիմա	32	3	22	7	2	19	11
3.	Գործարարություն և վարչարարություն	11		5	6		2	9
	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ							
4.	Հայոց լեզու և գրականություն	26	2	16	8		18	8
5.	Ռուսաց լեզու և գրականություն	11	1	8	2	1	8	2
6.	Անգլերեն լեզու և գրականություն	16	2	3	11	2	2	12
7.	Միջմշակութային հաղորդակցություն և զբոսաշրջություն	8		2	6		1	7
8.	Արվեստ	16	1	5	10	1	5	10
	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ							
9.	Պատմություն և փիլիսոփայություն	15		8	7		7	8
10.	Իրավագիտություն և քաղաքագիտություն	12		4	8		3	9
11.	Հոգեբանություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք	23	1	6	16	1	3	19
	Մանկավարժության ֆակուլտետ							
12.	Մանկավարժություն	15	2	10	3	2	4	9
13.	Ֆիզիկական դաստիարակություն տեսություն և մեթոդիկա	14		3	11	2	2	10
14.	Ռազմական ամբիոն	7		2	5		1	6
	ԸՆԴԱՄԵՆԸ	**246**	**15**	**114**	**117**	**14**	**89**	**143**

Համալսարանում գործող 14 ամբիոններից 9-ում գործունեություն ծավալող պրոֆեսորադասախոսական կազմի 60%-ից ավելին չունեն գիտական աստիճան կամ կոչում: Ուսումնասիրելով ամբիոնների ՊԴ կազմի տարիքային բաշխվածությունը՝ ըստ գիտական աստիճանի/կոչման, նկատելի են լուրջ խնդիրներ:



	ՊԴ կազմ	Գիտական աստիճան կամ կոչում չունեցողներ	Գիտական աստիճան կամ կոչում ունեցողներ
Մինչև 35 տարեկան	45	35	10
35-ից 65 տարեկան	163	65	98
65-ից բարձր	38	11	27
Ընդամենը	246	111	135

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ԿԱՄ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ



Մինչև 35 տարեկան 45 աշխատակիցներից 35-ը չունի գիտական աստիճան կամ կոչում: ՊԴ կազմի գիտական աստիճան կամ կոչում չունեցող անձանց 90%-ը 65 տարեկանից փոքր է, իսկ ՊԴ կազմի 65 տարեկանից բարձր 38 աշխատակիցներից 11-ը չունի գիտական աստիճան կամ կոչում: Վերլուծությունը մտահոգիչ է ՊԴ կազմի գիտական կոչում և աստիճան ունենալու կայունության տեսակետից: Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան ռազմավարություն:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ՝ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ (ՎԵՐՋԻՆ 5 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ)

Ուստարի	ՊԴ կազմ	Գիտական աստիճան			Գիտական կոչում		
		Դոկտոր	Գիտ. թեկնածու	Առանց գիտ. աստ.	Պրոֆ.	Դոց.	Առանց գիտ. կոչ.
2013-2014	257	15	121	121	13	85	159
2014-2015	246	16	122	108	12	91	143
2015-2016	247	15	121	111	12	89	146
2016-2017	246	15	116	115	14	88	144
2017-2018	246	15	114	117	14	89	143





6.2. ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

2017-2018 ուստարի

N	Պաշտոն	Անուն Ազգանուն	Աստիճան, կոչում
	Ռեկտորի աշխատակազմ		
1	ռեկտոր	Մինասյան Սահակ Գարուշի	Տնտես. գիտ. թեկնածու
2	գիտական քարտուղար	Պետրոսյան Կարինե Ռահիմի	Գիտ. թեկնածու, դոցենտ
3	ռեկտորի խորհրդական	Շահպարոնյան Սերգեյ Ռաֆիկի	
4	ռեկտորի օգնական	Հովհաննիսյան Անահիտ Հովհաննեսի	

5	ռեկտորի գործավար	Հարթենյան Կիմա Անուշավանի	
Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոն			
6	կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր	Ֆարմանյան Անահիտ Ժորայի	Գիտ. թեկնածու, դոցենտ
7	գլխավոր մասնագետ	Մարգարյան Լիլիթ Մկրտիչի	Գիտ. թեկնածու, դոցենտ
8	գլխավոր մասնագետ	Հարությունյան Ասյա Արթուրի	
9	Առաջատար մասնագետ	Սահակյան Անի Սուրենի	
10	Առաջատար մասնագետ	Բերդիկյան Հասմիկ Վահանի	
11	Առաջատար մասնագետ	Սապսզյան Նելլի Գրիգորի	
12	Առաջին կարգի մասնագետ	Պապիկյան Լիլիթ Անուշավանի	
Ուսումնամեթոդական գործ. կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոն			
13	կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր	Սերոբյան Երվանդ Սերյոժայի	Գիտ. թեկնածու, դոցենտ
14	կենտրոնի փոխտնօրեն	Ավետիսյան Նազելի Աշոտի	Գիտ. թեկնածու, դոցենտ
15	գլխավոր մասնագետ	Շուխյան Ինեսսա Ժորայի	
16	գլխավոր մասնագետ	Զարգարյան Էլվիրա Վազգենի	
17	Առաջատար մասնագետ	Գրիգորյան Անի Սամվելի	
18	Առաջատար մասնագետ	Գևորգյան Լուսինե Վահրամի	
19	Առաջատար մասնագետ	Գևորգյան Արաքսյա Սամվելի	
20	Առաջին կարգի մասնագետ	Գրիգորյան Զարինե Սլավիկի	
21	Առաջին կարգի մասնագետ	Նիկողոսյան Քրիստինե Գագիկի	
Որակի ապահովման և կառավարման կենտրոն			
22	Կենտրոնի տնօրեն	Սարգսյան Արմենուհի Հակոբի	Գիտ. թեկնածու, դոցենտ
23	Գլխավոր մասնագետ	Հարոյան Քնարիկ Ռաֆիկի	
Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարան			
24	Տնօրեն	Խաչատրյան Թերեզա Արթուրի	
25	գլխավոր մասնագետ	Աղուզումցյան Գուրգեն Աղասու	
26	Առաջատար մասնագետ	Ավետիսյան Գայանե Հովհաննեսի	
27	Առաջին կարգի մասնագետ	Թադևոսյան Վարդուհի Իշխանի	
28	Առաջին կարգի մասնագետ	Գասպարյան Քնարիկ Էդիկի	
29	Առաջին կարգի մասնագետ	Մուրադյան Ազատուհի Կարապետի	
30	Առաջին կարգի մասնագետ	Գրիգորյան Լիլիթ Ալբերտի	
Նորարարական և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին			
31	բաժնի վարիչ	Ասատրյան Գևորգ Մնացականի	
32	գլխավոր մասնագետ	Սողոյան Սպարտակ Սերյոժայի	Դոկտոր, պրոֆեսոր
33	Առաջատար մասնագետ	Մուրադյան Վահրամ Գագիկի	Գիտ. թեկնածու
34	Առաջատար մասնագետ	Հայրապետյան Աննա Սամվելի	
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժին			
35	Բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ	Քալաջյան Ռաֆֆի Վաղինակի	
36	գլխավոր մասնագետ-գլխավոր ֆինանսիստ	Պետրոսյան Գոհարիկ Վաղինակի	
37	Առաջատար մասնագետ	Ղուկասյան Անահիտ Հենրիկի	
38	Առաջատար մասնագետ	Գասպարյան Սիրուշ Ժորայի	
39	Առաջատար մասնագետ	Մարտիրոսյան Լիանա Գագիկի	
Իրավաբանական ծառայությունների, փաստաթղթերի պահպանման և արխիվացման հատուկ բաժին			
40	Բաժնի վարիչ	Միրզոյան Նարեկ Լյովայի	
41	Գլխավոր մասնագետ	Ոսկանյան Արփինե Ռաֆայելի	

42	Առաջատար մասնագետ	Մանուկյան Կարեն Արտաշեսի	
43	Առաջատար մասնագետ	Էլոյան Անժելա Վանոյի	
Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժին			
44	Գլխավոր մասնագետ	Մարտիկյան Աննա Վահանի	
45	Առաջատար մասնագետ	Աղաբաբյան Մերի Ռազմիկի	
46	Առաջատար մասնագետ	Գևորգյան Մարտին Վարագի	
Անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժին			
47	Գլխավոր մասնագետ	Խաչատրյան Վարդուհի Ալբերտի	
48	Առաջատար մասնագետ	Մնոյան Սիրանուշ Հովհաննեսի	
49	Առաջատար մասնագետ	Հարությունյան Կատյա Աշոտի	
50	Առաջին կարգի մասնագետ	Դանիելյան Նելլի Ալեքսանի	
51	Աշխատակազմի ղեկավարի գործավար	Հարությունյան Լիլիթ Արշակի	
52	Մանկավարժության ֆակուլտետի դեկան	Մարդոյան Ռուզաննա Արամայիսի	Դոկտոր, պրոֆեսոր
53	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան	Մելիքյան Թամարա Հմայակի	Գիտ. թեկնածու, դոցենտ
54	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ	Պողոսյան Բագրատ Ժորայի	Գիտ. թեկնածու, դոցենտ
55	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկանի ԺՊ	Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի	Գիտ. թեկնածու, դոցենտ



6.3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՄԱՐ

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի 5) ենթակետի համաձայն բուհի պրոֆեսորադասախոսական կազմը պարտավոր է ոչ պակաս, քան հինգ տարին մեկ սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում:

2017Թ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ ԱՆՑԱԾ ՊԴ ԿԱԶՄ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

ԱՄԲԻՈՆՆԵՐ	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՐԳԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ	ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	0	6
Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա	4	5
Գործարարություն և վարչարարություն	1	0
ԸՆԴԱՄԵՆԸ՝	**6**	**11**
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
Հայոց լեզու և գրականություն	1	1
Ռուսաց լեզու և գրականություն	0	0
Անգլերեն լեզու և գրականություն	3	0
Միջմշակութային հաղորդակցություն	4	0
Արվեստ	0	2
ԸՆԴԱՄԵՆԸ՝	**8**	**3**
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
Մանկավարժություն	3	1
Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա	0	1
ԸՆԴԱՄԵՆԸ՝	**3**	**2**
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ		
Պատմություն և փիլիսոփայություն	2	1
Իրավագիտություն և քաղաքագիտություն	2	0
Հոգեբանություն, սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք	31	4
ԸՆԴԱՄԵՆԸ	**35**	**5**
Ռազմական	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	**52**	**21**



Ներկայացնենք ՊԴ կազմի վերջին երեք տարիների վերապատրաստումները:

ՏԱՐԻ	ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ԸՆԴԱՄԵՆԸ
2015 թ.	**45**	**26**	**71**
2016 թ.	**59**	**44**	**103**
2017 թ.	**51**	**21**	**73**



6.4. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ» ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի այս չափանիշը գնահատվել է բավարար՝ նշելով հետևյալ թերությունները.

1. Մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ ձևակերպված չափանիշներ

դեռևս չկան: Կան դասախոսներ, որոնք դասավանդում են բովանդակային առումով իրարից խիստ տարբերվող առարկաներ: Սա նաև խոչընդոտ է կրթության որակի ապահովման համար:

2. Որոշ մասնագիտությունների գծով ուսանողների թվաքանակը շատ ցածր է. կրթական ծրագրերի հատուկ պահանջները վերլուծված չեն:
3. Քիչ ուսանողներ ունեցող մասնագիտությունները պահելը խոցելի է դարձնում բուհի առջև դրված ռազմավարական նպատակների իրականացումը, քանի որ այս դեպքում կատարվում է բուհի մարդկային ռեսուրսների ոչ նպատակային օգտագործում:
4. Հարկ է ուշադրություն դարձնել նաև մասնագիտական վերապատրաստումներին:
5. Մասնագիտական առաջընթացի ապահովման տեսակետից բուհում դեռևս չկան հստակ մեխանիզմներ:
6. Դասախոսների վերապատրաստման գործընթացի կազմակերպման համար արտաքին ռեսուրսներ ներգրավված չեն:
7. Վերջին 3 տարիների ընթացքում նկատելի է երիտասարդ դասախոսների թվի նվազում: Այս խնդիրը բուհական մակարդակով լուծման անհրաժեշտություն ունի:
8. Բացակայում է բուհի ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի գործունեության որակի ապահովմանն ուղղված քաղաքականություն:
9. Կանոնակարգված չեն, թե ինչ մոտեցումներ են ցույց տրվում դրական կամ բացասական գնահատական ստացած դասախոսներին:
10. ՊԴ անձնակազմի մոտ պետք է ձևավորված լինի ինքնագնահատման մեխանիզմ, որը դեռևս բացակայում է:

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	**18**	*Մշակել դասախոսներին ներկայացվող մասնագիտական պահանջներ՝ ըստ համապատասխան ՄԿԾ-ների:*
	19	*Կանոնակարգել դասախոսների մասնագիտական կարիքների ու բացթողումների վերհանման գործընթացը և մշակել ու ներդնել մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների զարգացմանն ուղղված վերապատրաստումների համակարգ:*
	20	*Մշակել մեխանիզմներ՝ նպատակաուղղված երիտասարդ դասախոսներով բուհի համակազմը համալրելուն:*
	21	*Մշակել և ներդնել պաշտոնների անձնագրեր պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի համար:*
	22	*Մշակել քաղաքականություն, որը ուսումնաօժանդակ և վարչական համակազմի գործունեությունը կնպատակաուղղի որակի ապահովմանը:*

6.5. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		Քայլեր		Ընթացիկ վիճակը	Ժամանա-կահատված
18	**Մշակել ըստ ՄԿԾ-ների դասախոսներին ներկայացվող մասնագիտական պահանջներ**	18.1	Լրամշակել և կիրառել պրոֆեսորա-դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ընտրության կանոնակարգը՝ սահմանելով ըստ ՄԿԾ-ների մասնագի-տական որակներին ներկայացվող չափանիշներ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
		18.2	Լրամշակել և կիրառել դասախոսների ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերը	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից
19	**Կանոնակարգել դասախոսների մասնագիտական կարիքների ու բացթողումների վերհանման գործընթացը և մշակել ու ներդնել մասնագիտական և մանկավարժական կոմպետենցիաների զարգացմանն ուղղված վերապատրաստումների համակարգ:**	19.1	Լրամշակել և կիրառել պրոֆեսորադա-սախոսական կազմի պարբերաբար գնահատման ընթացակարգ	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
		19.2	Ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանման և ինքնագնահատման մեխանիզմ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
		19.3	Զարգացնել համագործակցությունը առաջավոր հայաստանյան, արտասահ-մանյան բուհերի և գիտական կազմա-կերպությունների հետ մասնագիտական վերապատրաստումների նպատակով	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018 թ. II եռ.-ից
		19.4	Կազմակերպել վերապատրաստումներ՝ դասախոսի մասնագիտական կարիքներին համապատասխան	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից
		19.5	Կազմակերպել վերապատրաստումներ՝ նպատակաուղղված դասախոսի մանկավարժական կոմպետենցիաների զարգացմանը	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
20	**Մշակել մեխանիզմներ երիտասարդ դասա-խոսներով բուհը համալրելու նպատակով**	20.1	Մշակել և գործառության մեջ դնել երի-տասարդ կադրերի ընտրության քաղա-քականություն՝ սկսած մագիստրա-տուրայի կրթական աստիճանից	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից
21	**Մշակել և ներդնել պաշտոնների անձ-նագրեր պրոֆեսո-րադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար**	21.1	Մշակել և գործառության մեջ դնել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի համար գործունեության պահանջներին համապատասխան պաշտոնների անձնագրեր	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
22	**Մշակել քաղաքականու-թյուն, որը ուսումնա-օժանդակ և վարչական համակազմերի գործունեությունը կնպատակաուղղի որակի ապահովմանը:**	22.1	Մշակել ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի գործունեության գնահատման ընթացակարգ	Պլանավոր-ման փուլ	2018թ. I եռ.
		22.2	Ներդնել ուսումնաօժանդակ և վարչական համակազմերի գործունեության գնահատման ընթացակարգը	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. II եռ.-ից

18.1. Պլանավորման փուլում է:

18.2. Գիտական խորհրդի 2017թ.-ի հոկտեմբերի 2-ի № 18/3 որոշման համաձայն փոփոխության է ենթարկվել պրոֆեսորադասախոսական անձնակազմի վճարման համակարգը, որն արդեն կիրառվում է: Սակայն այն որոշ լրամշակման կարիք ունի այն առումով, որ գիտահետազոտական գործունեության ծավալումը լինի անհրաժեշտություն:

19.1. Որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից վերանայվել է ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաների գնահատման հարցաթերթիկը, կազմվել են ցուցումներ հարցաթերթիկի վերաբերյալ:

Այժմ կազմվելու է նաև պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման ընթացակարգ:

19.2. Որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից մշակվելու է պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանման և ինքնագնահատման մեխանիզմ:

19.3. Պլանավորման փուլում է:

19.4. Պլանավորման փուլում է:

19.5. Պլանավորման փուլում է:

20.1. Պլանավորման փուլում է:

21.1. Այժմ գործընթացն ընթացքի մեջ է և պաշտոնների անձնագրերը կազմվում են:

22.1. Ըստ Գիտական խորհրդի աշխատանքային պլանի՝ պլանավորված է իրականացնել 2018 թ.-ի I եռամսյակում:

22.2. Մշակելուց հետո 2018 թ.-ի II եռամսյակից այն կներդրվի:

7. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

7.1. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2017թ. պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն ամփոփված են 154 գիտական հոդվածներում, 21 թեզիսներում, 4 ուսումնամեթոդական աշխատանքներում և 3 մենագրություններում:

2017 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ՝ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

ԱՄԲԻՈՆՆԵՐ	ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ՖԻԶԻԿԱ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ	46	40
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՄԻԱ	20	31
ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	7	11
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	16	26
ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	11	11
ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	8	16
ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	5	8
ԱՐՎԵՍՏ	15	16
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ	32	15
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	2	12
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	7	22
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ		
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ	12	15
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ	7	14
ՌԱԶՄԱԿԱՆ	0	7
ԸՆԴԱՄԵՆԸ	188	244

2017 թվականին գիտամեթոդական գործունեությամբ չի զբաղվել պրոֆեսորադասախոսական կազմի 148 աշխատակից՝ ավելի քան 61%-ը: Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությունը գիտամանկավարժական է, հետևաբար գիտական գործունեության ընգրկվածության ընդլայնման նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր:

2017 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ



2017 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ

ԱՄԲԻՈՆՆԵՐ	Միջազգային վարկանիշավորում ունեցող գիտական ամսագրում հոդված	ՀՀ ԲՈՀ-ի ցուցակում կամ РИНЦ համակարգում ընդգրկված գիտական ամսագրում հոդված	ՀՀ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրում հոդված	ՇՄՀ Գիտական տեղեկագրում հոդված	Միջազգային գիտաժողովի ժողովածուում հոդված	Միջազգային գիտաժողովի ժողովածուում թեզիս	Հանրապետական գիտաժողովի ժողովածուում հոդված	Հանրապետական գիտաժողովի ժողովածուում թեզիս	Ուսումնամեթոդական աշխատանք	Գիտական մենագրություն	Այլ	Ընդամենը
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ												
ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ՖԻԶԻԿԱ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ	3	3	14	10	5	9	0	0	0	2	0	46
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՄԻԱ	0	0	10	6	0	0	3	0	0	0	1	20
ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	0	0	5	0	2	0	0	0	0	0	0	7
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ												
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ	0	1	12	1	4	2	0	2	1	1	8	32
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	2
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	0	3	1	0	1	0	2	0	0	0	0	7
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ												
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	0	1	5	2	1	0	1	0	0	0	6	16
ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	0	3	1	0	7	0	0	0	0	0	0	11
ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	2	0	4	1	0	0	0	0	0	0	1	8
ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	0	0	3	1	0	0	0	0	0	0	1	5
ԱՐՎԵՍՏ	1	0	3	0	0	0	4	0	0	0	7	15
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ												
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ	1	0	2	0	0	2	0	6	1	0	0	12
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ	0	0	3	1	1	0	0	0	1	0	1	7
ՌԱԶՄԱԿԱՆ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	7	11	63	22	21	13	10	8	4	3	26	188

2017 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԻ



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ 2013 – 2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



2013 թվականին համալսարանի ՊԴ կազմի կողմից հրատարակվել էր 201, 2014 թվականին՝ 187, իսկ 2015 թվականին՝ 165 գիտամեթոդական աշխատանք: 2013 թվականից մինչև 2015 թվականը գիտամեթոդական աշխատանքների քանակը նվազել է 36-ով, որն առաջին հայացքից բավականին անհանգստացնող էր, քանի որ պրոֆեսորադասախոսական կազմը գրեթե փոփոխության չէր ենթարկվել: Մինչև 2013 թվականը բուհը կազմակերպում էր

պրոֆեսորադասախոսական կազմի ամենամյա գիտաժողովներ: Գիտաժողովին ներկայացված բոլոր հոդվածները ենթարկվում էին ներքին գրախոսման համալսարանի ամբիոնների կողմից, որի արդյունքում տպագրվում էին առանձին նյութերի ժողովածուի մեջ: Գիտաժողովի նյութերի ժողովածուի մեջ տպագրված հոդվածները չէին ճանաչվում ԲՈՀ-ի կողմից: 2013 թվականից բուհը մշակեց նոր քաղաքականություն՝ ուղղված հոդվածների որակին, այլ ոչ թե քանակին: Հիմնական նպատակ դրվեց հոդվածների տպագրումը իրականացնել բարձր վարկանիշ ունեցող մասնագիտական պարբերականներում կամ նեղ մասնագիտական ժողովածուներում: 2013 թվականին հիմնվեց բուհի Գիտական տեղեկագիրը, որն ընդգրկված է ԲՈՀ-ի ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում, ինչպես նաև մշակվեց «Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման» ընթացակարգ, ըստ որի բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում տպագության համար դասախոսին միանվագ տրամադրվում է հավելավճար:

Վերջին երկու տարիներին հոդվածների աճը ցույց է տալիս, որ բուհի որդեգրած քաղաքականությունը ճիշտ է՝ պահպանելով որակը ավելացնել քանակը: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացված գիտական աշխատանքները 2014 թվականից սկսած հիմնականում տպագրվում են բարձր վարկանիշ ունեցող կամ նեղ մասնագիտական ամսագրերում:

Սակայն արդյունքները բավարար չեն, քանի որ գիտական աշխատանքները հիմնականում տպագրվում են նույն անձանց կողմից: Նաև առկա է այն հանգամանքը, որ գիտական աստիճան և կոչում ստանալուց հետո դադարում են գիտական կամ մեթոդական աշխատանքներ իրականացնել, ինչը մտահոգիչ է, որը, սակայն, համապետական խնդիր է: Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացվող գործունեությունը գիտամանկավարժական է, հետևաբար անհրաժեշտ է մշակել պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմերի այնպիսի քաղաքականություն և ընթացակարգեր, որտեղ պարտադիր մաս պետք է կազմի գիտակամեթոդական գործունեությունը:

7.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2013 թվականից համալսարանում հրատարակվում է Գիտական տեղեկագիրը, որն ընդգրկված է ԲՈՀ-ի ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում: Գիտական տեղեկագիրը լույս է տեսնում երկու պրակով (Ա, Բ)՝ տարեկան մեկ անգամ: Ա պրակում լույս են

տեսնում մաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտությունների, տնտեսագիտության և աշխարհագրության ուղղությամբ, իսկ Բ-ում՝ հումանիտար և հասարակական գիտությունների, դասավանդման մեթոդիկաների ուղղությամբ գիտական հոդվածները։

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԴ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ



7.3. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ

Արդեն չորրորդ տարին է (2014, 2015, 2016, 2017)՝ համալսարանը գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խրախուսման նպատակով պրոֆեսորադասախոսական կազմին տրամադրում է հավելավճար՝ դուրս գալով «Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման» ընթացակարգում (հաստատված 27 սեպտեմբերի 2014 թ. նիստում) ամրագրված գիտական գործունեության տեսակներից։

2017 թվականին իրականացված գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խրախուսման նպատակով պրոֆեսորադասախոսական կազմին տրամադրվել է **3.166.000 (երեք միլիոն հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամ՝ առանց հարկման։**

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓՆ ԸՍՏ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ

ԱՄԲԻՈՆՆԵՐ	ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՀՀ ԴՐԱՄՈՎ
ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ՖԻԶԻԿԱ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ	911.550
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՄԻԱ	275.700
ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	139.800
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	225.000
ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	265.000
ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	175.000
ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	51.250

ԱՐՎԵՍՏ	130.000
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ	565.000
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	0
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	121.600
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ	
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ	120.000
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ	166.100
ՌԱԶՄԱԿԱՆ	0
ԸՆԴԱՄԵՆԸ	3.166.000

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԴ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 2014 – 2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՎԵԼԱՎԱՃԱՐ



Չորս տարիների վիճակագրությունը ցույց է տալիս, որ ընթացակարգը ծառայում է համալսարանի որդեգրած քաղաքականությանը, սակայն վերջինս ունի վերանայման կարիք՝ դուրս գալով ՀՀ բուհերի վարկանիշավորման համակարգում գիտական գործունեության տեսակների գնահատման ցուցիչների կշռից:

7.4. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

- ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ԹԵՄԱՆԵՐ

Հաշվետու տարում համալսարանում իրականացվել է երկու թեմա.

1. **Վերջավոր էլեմենտների մեթոդի զարգացումը և կիրարկումը միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների տեսությունների եզրային խնդիրների թվային լուծումների կառուցման համար (Թեմատիկ-15T-2C138)**

   Թեման ղեկավարվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանի կողմից: Թեմայի շրջանակներում գործունեություն են ծավալել ամբիոնի չորս աշխատակիցներ, այդ թվում՝ ասպիրանտներ: Թեման իրականացվել է 2015-2017 թվականների ընթացքում:

2. **Բյուրեղային նյութերում կառուցվածքային արատների հայտնաբերման նոր ռենտգենաղիֆրակցիոն մեթոդների և տեխնիկական միջոցների մշակումը**

Թեման ղեկավարվել է տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Դրմեյանի կողմից: Թեմայի շրջանակներում գործունեություն են ծավալել ամբիոնի մեկ աշխատակից և համալսարանի մեկ ուսանող: Թեման իրականացվել է 2015-2017 թվականների ընթացքում:

- **ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՌԴ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՏԵՂ ԱՋԱԿՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Համալսարանում իրականացվել է մեկ թեմա.

1. **Ամորֆ-բյուրեղային կառուցվածքով պոլիմերային նյութերի կոնտինուալ դինամիկական մոդելի մշակումը բարձր հաճախականությամբ գրգռումների դեպքում (Հայ-ռուսական-15RF-063)**

Թեման ղեկավարվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանի կողմից, որի շրջանակներում գործունեություն են ծավալել ամբիոնի երեք աշխատակիցներ: Թեման իրականացվել է 2015-2017 թվականների ընթացքում:

- **ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԾՐԱԳԻՐ**

Համալսարանում իրականացվում է մեկ ծրագիր.

1. **«Նանո և միկրո տեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի պահպանման և զարգացման»** ծրագիր

Ծրագիրը ղեկավարվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանի կողմից, որի շրջանակներում գործունեություն են ծավալում ամբիոնի երկու աշխատակիցներ: Ծրագիրն իրականացվել է 2016 և 2017 թվականներին և շարունակվում է 2018 թվականին:

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված առավել բարձր արդյունավետությամբ աշխատող 100 գիտնականների մրցույթի արդյունքում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանն արդեն հինգերորդ տարին է՝ ընդգրկված է նշված հարյուրյակի մեջ:

7.5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

Համալսարանը իր միջոցների հաշվին 2016 թվականի հոկտեմբերից հայտարարել է պայմանագրային թեմատիկ ֆինանսավորվող դրամաշնորհի մրցույթ՝ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների կողմից իրականացվող գիտական (գիտամեթոդական) գործունեության համար: Դրամաշնորհը համալսարանի գիտական գործունեության ներքին ֆինանսավորման ձևերից է և միտված է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական համակազմի գիտական գործունեության զարգացմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացում հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանը: Դրամաշնորհը տրամադրվում է համալսարանի բոլոր մասնագիտությունների հետ սերտ առնչվող հիմնարար և կիրառական գիտական հետազոտություն իրականացնելու համար 3-4 անձից կազմված հետազոտական (գիտական թեմայի) խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված մինչև 3 գիտական թեմաների (նախագծերի) համար՝ 12 կամ 24 ամիս ժամկետով՝ առավելագույնը համապատասխանաբար 4 և 8 միլիոն ՀՀ դրամ: Խմբում պարտադիր պետք է ընդգրկվի բարձր առաջադիմությամբ ՇՊՀ-ի առնվազն 1 ուսանող (բակալավրիատի 3-4-րդ կուրսի կամ մագիստրատուրայի կամ հետազոտողի կրթական ծրագրով սովորող):

Գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի մրցույթի 2016թ. սեպտեմբեր ամսին տրված հայտարարությանը համապատասխան Շիրակի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ներկայացվել է 7 հայտ:

Ներկայացված հայտերից ներքոնշյալ երեք թեմաները ներբուհական խորհրդի կողմից տեխնիկական ստուգման և արտաքին փորձաքննության փուլերի արդյունքում ներկայացվել են ֆինանսավորման:

N	ԱՄԲԻՈՆ	ԹԵՄԱ	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ԴՐԱՄ
1	Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա	Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը	2 տարի	8 000 000
2	Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա	Բնագիտական առարկաների «Դասավանդման մեթոդիկա» դասընթացների ծրագրերի բարելավում՝ «Ինտեգրված թեմատիկ միավորներ» թեմայի ներառումով	1 տարի	4 000 000
3	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ֆիզիկայի խնդիրների լուծման ներկայացումը շարժուն տեսապատկերներով	2 տարի	8 000 000

Ներբուհական դրամաշնորհի մասին տեղեկատվությունը և 2017թ. ընթացքում խմբերի կողմից ներկայացված եռամսյա հաշվետվությունները տեղադրված են ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջում՝ http://gspi.am/pages/532.html http://gspi.am/pages/537.html :

2018 թվականին ֆինանսավորվող ներբուհական դրամաշնորհի հայտարարությունը արդեն տրված է: Մրցույթի արդյունքները կամփոփվեն մինչև 2018 թվականի հունվար ամսվա վերջ:

7.6. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի այս չափանիշը գնահատվել է *անբավարար*՝ նշելով հետևյալ թերությունները.

1. Հստակեցված չեն բուհի գիտահետազոտական ուղղությունները:
2. Վերջին 3 տարվա կտրվածքով հրատարակվող հոդվածների և թեզիսների քանակն անկում է ապրել, ինչը չի կարելի համարել դրական: Հետազոտության զարգացմանը չի նպաստում բուհի կողմից գիտությանը տրամադրվող ֆինանսական միջոցների սղությունը: Չկա գիտական առանձին ստորաբաժանում, որը կհամակարգեր վերոբերյալ գործընթացը:
3. Պլանավորման փուլում են գտնվում հետազոտությունների ոլորտին առնչվող միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը: Գիտության ոլորտի զարգացման ծրագիրը չի խարսխված այդ ոլորտում բուհի անցած ուղու և առկա արդյունքների վրա, որոնք արտացոլված չեն ՌԾ-ում:
4. Բուհի մակարդակով գիտության ոլորտի ռազմավարական կառավարման համակարգը բացակայում է:
5. Հետազոտությունների իրականացման և զարգացման հստակ քաղաքականություն դեռ ձևակերպված չէ, և առկա չեն համապատասխան ընթացակարգեր: Հստակեցված չէ պատասխանատվությունների շրջանակը:
6. Սահմանափակ են գիտական դրամաշնորհային ծրագրերին և կոնֆերանսներին մասնակցության հնարավորությունները:
7. 2012-2015 թթ նկատվում է բուհի աշխատակիցների կողմից հրատարակվող աշխատանքների նվազում, ինչը վկայում է հետազոտական գործունեության պասիվացման մասին:
8. Նոր ասպիրանտների հավաքագրումն ու պահպանումը հաստատության համար առկա մարտահրավեր է:
9. Բուհի գիտական ռեսուրսը թույլ չի տալիս ունենալ սեփական աստիճանաշնորհող խորհուրդ:

10. ՌԾ-ում ամրագրված է հետազոտական աշխատանքների միջազգայնացման կարևորությունը, սակայն այդ ուղղությամբ կատարվող քայլերը սահմանափակվում են զուտ միջազգային որոշ ամսագրերում հրատարակվող հոդվածներով: Բուհում միջազգային մակարդակով համատեղ հետազոտություններ չեն կատարվում, բացակայում են միջազգային գիտական ծրագրերն ու համատեղ թեմաներն արտասահմանյան բուհերի համապատասխան ամբիոնների և ինստիտուտների հետ:
11. Սակավ են դեպքերը, երբ ԳՊՄԻ-ն սեփական նախաձեռնությամբ աջակցում է անձնակազմի միջազգային գիտաժողովներին մասնակցությունը:
12. Չնայած առկա որոշ աշխատանքներին բակալավրիատում ուսանողական հետազոտական աշխատանքները դեռևս չեն հանդիսանում ուսումնառության բաղկացուցիչ մասը, որը կարող է բացասաբար ազդել կրթական վերջնարդյունքների վրա: Բուհում հետազոտական աշխատանք են դիտարկում ուսանողների կողմից կուրսային աշխատանքները, սակայն դրանք հիմնականում ունեն ռեֆերատիվ բնույթ: Չի նկատվում նաև բակալավրիատում կատարվող հետազոտական աշխատանքի շարունակականությունը մագիստրատուրայում, ինչը կարող է նպատել հետազոտական բաղադրիչի՝ առավել արդյունավետ իրականացմանը: Պատշաճ նկարագրված չեն մագիստրոսական թեզերի, որպես մագիստրոսական կրթական ծրագրերի գիտական հիմնական բաղկացուցիչի, թեմատիկայի ձևավորմանը և ընտրությանը ներկայացվող պահանջները:

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	**23**	*Հստակեցնել բուհի գիտահետազոտական ուղղությունները: Ներդնել բուհի մակարդակով գիտության ոլորտի ռազմավարական կառավարման համակարգ:*
	24	*Մշակել և ներդնել հետազոտական աշխատանքների միջազգայնացման քաղաքականություն:*
	25	*Բակալավրիատի կրթական ծրագրում ներդնել ու զարգացնել հետազոտական բաղադրիչը: Հստակեցնել մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջները:*
	26	*Նպաստել ՀՀ այլ բուհերի և գիտական կենտրոնների հետ գիտական գործունեության զարգացմանը՝ համատեղ գիտական թեմաների իրականացման և դրսից հրավիրված մասնագետների կողմից կազմակերպված պրոբլեմային թեմաներով սեմինարների անցկացմամբ (հատկապես՝ մագիստրատուրայում) և այլն:*

7.7. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		Քայլեր		Ընթացիկ վիճակը	Ժամանա-կահատված
23	Հստակեցնել բուհի գիտահետազոտական ուղղությունները: Ներդնել բուհի մակարդակով գիտության ոլորտի ռազմավարական կառավարման համակարգ:	23.1	Հստակեցնել մասնագիտական ամբիոններում հետազոտական գործունեության ուղղությունները	Պլանավոր-ման փուլ	2018թ. I եռ.-2018թ. II եռ.
		23.2	Ընդլայնել գիտական դրամաշնորհային ծրագրերին և գիտաժողովներին մասնակցության հնարավորությունները	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2017 թ.-ի II եռ.-ից
		23.3	Բարելավել գիտահետազոտական գործունեության ծավալումը խթանող ընթացակարգը	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018 թ.-ի II եռ.-ից
		23.4	Մշակել և գործառության մեջ դնել կարճաժամկետ (1-2 տարի) ներքին ֆինանսավորմամբ գիտական թեմատիկ ծրագրեր	Իրականաց-ման և բարելավ-ման փուլ	Մեկնարկը՝ 2016թ. III եռ.-ից
24	Մշակել և ներդնել հետազոտական աշխատանքների միջազգայնացման քաղաքականություն	24.1	Մշակել մեխանիզմներ միջազգային համատեղ հետազոտական աշխատանքների իրականացման համար	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ.I եռ.-ից
		24.2	Կիրառել մշակված մեխանիզմները միջազգային համատեղ հետազոտական աշխատանքների իրականացման և հետագա զարգացման համար	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից
		24.3	Մշակել և ներդնել միջազգային գիտաժողովներին զեկուցումներով մասնակցության և գիտական պարբերականներում հետազոտական աշխատանքների արդյունքների հրատարակման աջակցության մեխանիզմներ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից
25	Բակալավրիատի կրթական ծրագրում ներդնել ու զարգացնել հետազոտական բա-ղադրիչը: Հստակեցնել մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջները	25.1	Մշակել և ներդնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցության քաղաքականություն և ընթացակարգեր	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից
26	Նպաստել ՀՀ բուհերի և գիտական կենտրոնների հետ գիտական գործունեության զարգացմանը	26.1	Կազմակերպել հանրապետական և միջազգային գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ՝ արդիական գիտական թեմաներով	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. II եռ.-ից
		26.2	Համագործակցել հայաստանյան առաջատար բուհերի և գիտական կենտրոնների հետ՝ համատեղ գիտական թեմաների իրականացման նպատակով	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից

23.1. Գործընթացն ընթացքի մեջ է:

23.2. Մշակվել և 2016 թ.-ից ներդրվել է համալսարանի կողմից ֆինանսավորվող ներբուհական դրամաշնորհը:

Գիտաժողովներին մասնակցության հնարավորությունների ընդլայնման համար մեխանիզմները մշակվում են:

23.3. Բուհում 2014 թվականից գործում է Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգը, որի մասին ներկայացված է 7.3 ենթաբաժնում, սակայն վերջինս բարելավման կարիք ունի:

23.4. Ներդրվել են ներքին ֆինանսավորմամբ կարճաժամկետ (1-2 տարի) գիտական թեմատիկ ծրագրեր (այս մասին ներկայացված է 7.5 ենթաբաժնում):

24.1. Բուհում 2015-2017 թվականների ընթացքում իրականացվել է գիտական հետազոտություն ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի և ՌԴ-ի համատեղ աջակցությամբ (ներկայացված է 7.4 բաժնում): Սակայն բուհում դեռ մեխանիզմներ չկան միջազգային համատեղ հետազոտական աշխատանքների իրականացման համար:

24.2. Պլանավորման փուլում է:

24.3. Ըստ Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգի խրախուսվում է վերջնարդյունքը (հավելավճար է տրամադրվում միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածուում, ՀՀ ԲՈՀ-ի, ՌԴ ԲՈՀ-ի կողմից ընդունելի պարբերականներում կամ ազդեցության գործոն ունեցող միջազգային գիտական ամսագրերում տպագրված հոդվածների համար): Միջազգային գիտաժողովներին զեկուցումներով մասնակցության աջակցման հստակ մեխանիզմներ դեռևս մշակված չեն և չեն գործում, սակայն առանձին դեպքերում աջակցություն է ցուցաբերվում՝ նկատի ունենալով գիտական ներդրման արժեքը և կարևորությունը:

25.1. ՇՊՀ-ի մագիստրատուրայում ամփոփիչ ատեստավորման համար ներկայացվում է մագիստրոսական թեզ, ինչը ուսանողի հետազոտական աշխատանքի արդյունքն է: Բացի այդ մի շարք մասնագիտությունների ուղղությամբ բակալավրիատի կրթական մակարդակում ևս ամփոփիչ ատեստավորումն իրականացվել է ավարտական աշխատանքի ներկայացմամբ:

Ուսումնառության ընթացքում ուսանողների կողմից ներկայացված կուրսային և անհատական աշխատանքները ևս պարունակում են հետազոտական էլեմենտ: Գիտական խորհրդի 2017 թ.-ի դեկտեմբերի 28-ի նիստում հաստատվել է ՇՊՀ-ի մագիստրատուրայի և բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը, ըստ որի 2018 թվականից բակալավրիատի ամփոփիչ ատեստավորումը պարտադիր կերպով լինելու է ավարտական աշխատանքով:

Ապավվելու է նաև ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, իսկ այնուհետև նաև թեկնածուական թեզերի թեմաների շարունակականությունը:

Բացի այդ ՇՊՀ-ի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգում պահանջ է ներկայացված խմբում առնվազն մեկ ուսանող ընդգրկելու համար և ռեկտորի նախաձեռնությամբ ներդրվելու է նաև հետազոտական ներբուհական դրամաշնորհ ուսանողների համար, որի դեպքում խումբը կազմված է լինելու ուսանողներից և ղեկավարվելու է մի դասախոսի կողմից:

Այսպիսով, այս մեխանիզմները առավել քան բավարար են ապահովելու համար հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցությունը:

26.1. Այժմ կազմվել է 2018 թվականին ՇՊՀ-ում կազմակերպվելիք գիտաժողովների և գիտական սեմինարների ծրագիրը: Նախատեսվում է կազմակերպել մեկ միջազգային, երկու հանրապետական գիտաժողովներ և մի շարք սեմինարներ:

ՇՊՀ-ում կազմակերպվել և կազմակերպվում են ամենամյա հանրապետական ուսանողական գիտաժողովներ:

26.2. Պլանավորման փուլում է: Հարկավոր է մշակել հայեցակարգ՝ առաջնահերթ քաղաքի, մարզի գիտական ներուժի ընդհանրական կիրառման և հանրապետական այլ առաջատար բուհերի և գիտական կենտրոնների հետ համագործակցության:

8. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

8.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՇԵՆՔԵՐ, ԼՍԱՐԱՆՆԵՐ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ, ԴԱՀԼԻՃՆԵՐ)

Շինությունների ծավալային ցուցանիշներ (քառակուսի մետր)

Շինությունների ծավալները աճել են վերջին 2 տարիներին՝ 2016 թ.-ին 2750 մ²-ով (≈ 17%-ով 2015 թվականի նկատմամբ), իսկ 2017 թ.-ին ևս 3069 մ²-ով (≈ 19%-ով 2015 թվականի նկատմամբ): Ընդհանրապես վերջին 2 տարիներին շինությունների ծավալներն աճել են 5819 մ²-ով (≈ 36%-ով 2015 թվականի նկատմամբ):

Այժմ բուհն իր գործունեությունը ծավալում է մի քանի մասնաշենքերում: Բուհը (ներառյալ՝ քոլեջը) ունի 12 լաբորատորիա (քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության և համակարգչային), 3 արվեստանոց, 2 արհեստանոց, 1 լինգաֆոնային լսարան, 3 լսարան պրոյեկտորով և էկրանով (որոնցից մեկը նաև համակարգչային լաբորատորիա), 1 ընթերցասրահ, 3 հեռաուսուցման լաբորատորիա (որոնցից մեկը՝ դահլիճը 150 նստատեղով), ավելի քան 10 մեծ լսարան, 5 տասնյակից ավել սովորական լսարաններ, 2 սպորտդահլիճ և այլն:

Նշենք նաև, որ կառուցվել է հյուրատուն հրավիրյալ դասախոսների համար (10 մահճակալ):

2016 թ.-ի սեպտեմբերից Ռազմական ամբիոնի և քոլեջի համար ուսումնառությունն այժմ կազմակերպվում է համապատասխան հարմարություններով լսարաններում:

8.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

N	Տեխնիկական սարքավորումներ	2013-2014	2014-2015	2015-2016	2016-2017
1	Տպիչ	77	88	92	93
2	Համակարգիչ	273	298	299	304
3	Դյուրակիր համակարգիչ (պլանշետ, նոթբուք, նեթբուք, լապթոպ)	5	9	13	13
4	Շարժական գրատախտակ	7	8	8	8
5	Պրոյեկտոր	9	10	11	11
6	Պրոյեկտորի էկրան	8	8	8	8
7	*Ընդամենը*	379	421	431	432

Տեխնիկական սարքավորումներ՝ ըստ ուստարիների

(մինչև 2016-2017 ուստարին)



2017-2018 ուստարվա I կիսամյակում համալրված համակարգչային տեխնիկան





Նկատելի է աննախադեպ աճ վերջին ուստարվա ընթացքում ≈ 20%՝ ըստ թվաքանակի, սակայն հարկ է նշել, որ ձեռք բերված տեխնիկան նաև շատ արժեքավոր է ու անհրաժեշտ՝ ուսումնառությունը արդի, նորարարական մեթոդներով իրականացնելու համար (մանրամասները պարզաբանում է նախորդ դիագրամը):

8.3. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

Համալրված գրականություն՝ ըստ ուստարիների

Ստորաբաժանումներ	2013-2014	2014-2015	2015-2016	2016-2017	2017-2018 I կիս.	Ընդամենը
Բնագիտաաշխարհագրության ֆակուլտետ	13	20	32			65
Պատմաբանասիրական ֆակուլտետ			24	8		32
Ֆիզմաթ ֆակուլտետ			5			5
Մանկավարժության ֆակուլտետ				20		20
Ֆիզդաստիարակության ֆակուլտետ	10					10
Գրադարան	1025	494	93	153	24	1789
Ընդամենը՝	1048	514	154	181	24	1921



Մինչև 2013 թվականը ինստիտուտի գրադարանային ֆոնդն ընդհանրապես չի հաշվառվել, այսինքն ոչ գույքագրում է իրականացվել, ոչ էլ նոր ստացված գրականությունն է մուտքագրվել հաշվապահություն:

Միայն 2013 թվականից են սկսել հաշվառել միայն նոր ստացված գրականությունը (առանց ունեցածի հաշվառման), բայց առանց գույքագրման անցկացման:

Այժմ ռեկտորի հրամանով ստեղծվել են հանձնաժողովներ գրադարանային ֆոնդի հաշվառման, գնահատման և գույքագրման աշխատանքների իրականացման և հետագա օգտագործման համար ոչ պիտանի դարձած գրքերի դուրսգրման աշխատանքների կատարման համար:

Գույքագրման աշխատանքները սկսվել են սույն թվականի նոյեմբերի 3-ից: Գույքագրման, հաշվառման և գնահատման աշխատանքների արդյունքները ստանալու են համապատասխան փաստաթղթավորում:

Բացի այդ ՇՊՀ-ի կառուցվածքային փոփոխության արդյունքում /ըստ Հոգաբարձուների խորհրդի 19.04.2017, N 3/1 որոշման/ նախկին Գրադարանը վերափոխվել է Ուսումնագիտական-խորհրդատվական կենտրոն-գրադարանի, հաստատվել է կենտրոնի կանոնադրությունը, որի համաձայն ընդլայնում է իր գործառույթները կենտրոնի նպատակին համապատասխան (Կենտրոնի նպատակը համալսարանի ներքին և արտաքին շահառուների կրթական, գիտական ու մասնագիտական որակները զարգացնելը, ստեղծարար ու նորարարական մտածողություն ձևավորելը, ուսանողակենտրոն և գիտելիքահեն արդյունավետ կրթության մշակույթ ապահովելն է՝ բուհի գրադարանատեղեկատվական միջոցների ու խորհրդատվությունների տրամադրմամբ, ուսումնառության այլընտրանքային ձևերի կիրառմամբ):

8.4. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ» ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի այս չափանիշը գնահատվել է բավարար՝ նշելով հետևյալ թերությունները.

1. Լսարանային ֆոնդի անբավարարության պատճառով դասերն անցկացվում են 2 հերթափոխով, ինչն իր բացասական ազդեցությունը կարող է ունենալ ուսումնական գործընթացի կազմակերպման վրա:
2. Գրադարանն ունի գրականության պակաս, հատկապես համեմատաբար վերջերս հիմնադրված ոչ մանկավարժական ՄԿԾ-ների համար: Առկա չէ նաև էլեկտրոնային քարտարան: Բուհի կայքում գրադարանի ենթաէջը դատարկ է, ոչ մի տեղեկություն չի պարունակում:
3. Էլեկտրոնային գրադարանի մշակման գործընթացը դեռ սաղմնային փուլում է:
4. Անբավարար են գիտահետազոտական աշխատանքներին ուղղված ֆինանսական միջոցները:
5. Ֆինանսական միջոցների պլանավորման և բաշխման գործող քաղաքականության արդյունավետության գնահատման մեխանիզմները դեռևս գնահատված չեն, ինչը թուլացնում է բուհի կողմից ֆինանսական միջոցների բաշխման արդյունավետությունը:

6. Առանձին կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն առկա չէ ծախսերի նախահաշվում:
7. Կիրառական բնույթի դասընթացների իրականացման տեսակետից դեռ կան անելիքներ՝ ռեսուրսային բազայի հարստացման ուղղությամբ:
8. Կատարված հարցումները չեն ընդգրկում տամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության ամբողջական գնահատումը, դիտարկված չեն ֆինանսական ռեսուրսների ներդրման արդյունավետության հարցերը:
9. Իրականացված հարցումներից բացի այլ վերլուծական մեխանիզմներ չեն կիրառվում, օրինակ՝ պարբերական մոնիթորինգ և այլն: Փորձագիտական խումբը չնկատեց բուհի այլ ներքին շահակիցների շրջանում կատարված հարցումներ՝ տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ:

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	**27**	*Ֆինանսական անկախության և կայունության նպատակով ապահովել ֆինանսական արտաքին աղբյուրների բազմազանությունը:*
	28	*Բուհի ֆինանսական պլանավորումն ու բաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով ՄԿՕ-ների պահանջները:*
	29	*Բարելավել գրադարանային ենթակառուցվածքները՝ զարգացնելով նոր տեխնոլոգիաների կիրառումը:*
	30	*Զարգացնել ՏՏ ծառայությունների շրջանակը, ինչը կբարելավի բուհի կառավարման համակարգը, կնպաստի հեռավար ուսուցման ներդրմանը և այլ ոլորտների զարգացմանը:*
	31	*Բարելավել ռեսուրսների գնահատման մեխանիզմները:*
	32	*Ընդլայնել շինությունների ծավալները: Բարելավել ուսումնական գործընթացի կազմակերպումը:*
	33	*Հատուկ կարիքներ ունեցող անձանց համար ստեղծել համապատասխան պայմաններ կրթական միջավայրը հասանելի դարձնելու նպատակով:*

8.5. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		**Քայլեր**		**Ընթացիկ վիճակը**	**Ժամանակա-հատված**
27	**Ապահովել ֆինանսական արտաքին աղբյուրների բազմազանությունը**	27.1	Փոփոխել բուհի կազմակերպաիրավական ձևը	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2016թ. IV եռ.-ից
		27.2	Լեզուների կենտրոնի լաբորատորիայի տեխնիկական հագեցվածության ապահովում և վճարովի ծառայությունների մատուցում	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից
		27.3	Մարզադահլիճների հիմնանորոգում, մարզասարքերով վերազինում և	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից

			վճարովի ծառայությունների մատուցում		
		27.4	Սոցիալ-հոգեբանական աշխատանքի կենտրոնի ստեղծում և վճարովի ծառայությունների մատուցում	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից
		27.5	Համակարգչային գրագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ծրագրավորման լեզուների մոդուլների մշակում և վճարովի ուսուցման կազմակերպում	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից
		27.6	Տուրիստական գործակալության հիմնում և վճարովի ծառայությունների մատուցում	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. IV եռ.-ից
		27.7	Կիրառական արվեստի լաբորատորիաների (փայտամշակում, մետաղամշակում, գորգագործություն, խեցեգործություն, գեղանկարչություն, հագուստի մոդելավորում) վերանորոգում և վճարովի պատվերների ընդունում	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից
		27.8	Վճարովի այլ ծառայությունների մատուցում	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից
28	**Պլանավորել ֆինանսական բաշխումն ըստ ՄԿԾ-ների պահանջների**	28.1	Մշակել և կիրառել ֆինանսական բաշխման մեխանիզմ՝ ըստ ստորաբաժանումների և ՄԿԾ-ների պահանջների	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
29	**Բարելավել գրադարանային ծառայությունները**	29.1	Գրադարանային ֆոնդի հաշվառման, գնահատման և գույքագրման աշխատանքների իրականացում	Իրականացման փուլ	2017թ. IV եռ.-2018թ. I եռ.
		29.2	Շահագործել էլեկտրոնային գրադարանը	Պլանավորման փուլ	2018թ. II եռ.-2018թ. III եռ.
		29.3	Ստեղծել Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանում առկա գրքերի էլեկտրոնային շտեմարան	Իրականացման փուլ	2016թ. III եռ.-2018թ. IV եռ.
		29.4	Ձեռք բերել ոչ մասնագիտական կրթական ծրագրերով նախատեսված մասնագիտական գրականություն	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018 թ.-ի III եռ.-ից
		29.5	Կիրառել նորագույն տեխնոլոգիաներ գրադարանային ծառայության արդյունավետության բարձրացման նպատակով	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. IV եռ.-ից
		29.6	Ներդնել էլետրոնային քարտարաններ	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. IV եռ.-ից
		29.7	Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի աշխատակիցների վերապատրաստում	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից
30	**Զարգացնել ՏՏ ծառայությունների շրջանակը՝ բուհի կառավարման**	30.1	Ստեղծել և շահագործել համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ հեռավար ուսուցման երեք լաբորատորիա	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից

	համակարգի բարելավման և հեռավար ուսուցման ներդրման նպատակով	30.2	Կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ՝ հեռավար ուսուցում իրականացնելու նպատակով	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
31	**Բարելավել ռեսուրսների գնահատման մեխանիզմները:**	31.1	Բարելավել ռեսուրսների գնահատման համար կազմված հարցարանները	Պլանավորման փուլ	2018թ. II եռ.
		31.2	Մշակել և ներդնել ռեսուրսների գնահատման վերլուծական մեխանիզմներ	Պլանավորման փուլ	2018թ. II եռ.
32	**Ընդլայնել շինությունների ծավալները: Բարելավել ուսումնական գործընթացի կազմակերպումը:**	32.1	Ընդլայնել շինությունների ծավալները	Իրականացման և բարելավման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. II եռ.-ից
		32.2	Բարելավել լսարանային ֆոնդը և արդյունավետ կիրառել	Իրականացման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. III եռ.-ից
33	**Ստեղծել համապատասխան պայմաններ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների ուսումնառության համար**	33.1	Վերակառուցել և վերազինել լսարանները անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար	Պլանավորման փուլ	Մեկնարկը՝ 2019թ.I եռ.-ից

27.1. 2016 թ.-ի դեկտեմբերի 2-ից բուհը փոխել է իր կազմակերպաիրավական ձևը՝ ՊՈԱԿ-ից անցում հիմնադրամի:

27.2. Պլանավորվում է իրականացնել:

27.3. Մարզադահլիճները հիմնանորոգվել են և վերազինվել մարզասարքերով, իսկ վճարովի ծառայությունների մատուցումը դեռ պլանավորման փուլում է:

27.4. Պլանավորվում է իրականացնել:

27.5. Պլանավորվում է իրականացնել:

27.6. Պլանավորվում է իրականացնել:

27.7. Վերանորոգվել են կիրառական արվեստի լաբորատորիաները (փայտամշակում, մետաղամշակում, գորգագործություն, խեցեգործություն, գեղանկարչություն, հագուստի մոդելավորում), սակայն դեռ վճարովի ծառայութունների մատուցում չի իրականացվում:

27.8. Դահլիճը և հյուրատան սենյակները տրվում են նաև վարձակալության հիմունքներով, ճաշարանը սպասարկում է համալսարանը և հյուրատունը:

28.1. Մշակվել և հաստատվել է «ՇՊՀ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման, հաստատման և փաստացի տվյալների (կատարողականի) վերլուծության ընթացակարգ» փաստաթուղթը /հաստատված Գիտական խորհրդի 2018 թվականի փետրվարի 5-ի նիստում/:

29.1. Գործընթացն իրականացվում է Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի աշխատակիցների, ինչպես նաև կամավոր ուսանողների (այդ թվում նաև ուսնողական խորհրդի անդամ-ուսանողների) օրնիբուն աշխատանքի շնորհիվ՝ պայմանավորված ժամկետների սղությամբ:

29.2. Պլանավորման փուլում է:

29.3. Գործընթացն ընթացքի մեջ է՝ http://library.gspi.am/

29.4. Պլանավորվում է հետազոտություն իրականացնել և գրականություն ձեռք բերել աստիճանաբար՝ նկատի ունենալով առաջնահերթությունը:

29.5. Պլանավորման փուլում է:

29.6. Պլանավորման փուլում է:

29.7. Վերապատրաստվել են Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի երկու աշխատակից.

N	Ազգանուն, անուն	Կարգավիճակը ՈՒԳԽԿԳ-ում	Վերապատրաստման մոդուլի անվանումը և հակիրճ նկարագիրը	Փաստաթղթային հիմք
1.	Խաչատրյան Թերեզա	ՈՒԳԽԿԳ-ի տնօրեն	**Pilot Training Module on Access to Libraries and Society for Learners with Special Needs in the framework of Erasmus+ LNSS Project /November 29-December 18, 2017/**	Վկայական
2.	Ավետիսյան Գայանե	Առաջատար մասնագետ	**Գրադարանավարների վերապատրաստման մեկշաբաթյա դասընթաց 2017 թ. նոյեմբերի 6-10-ը Հայաստանի ազգային գրադարանում:**	Հավաստագիր
3.	Ավետիսյան Գայանե	Առաջատար մասնագետ	**Շիրակի մարզային գրադարանի Մեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնում 02.10.2017թ.-31.10.2017թ. անցել է 60 ժամ ընդհանուր տևողությամբ մասնագիտական խորացման տեսական և գործնական պարապմունքներ:**	Հավաստագիր

30.1. Համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ հեռավար ուսուցման 2 լաբորատորիաներն արդեն ստեղծված են (ըստ ՆՈՐԿԵՆՏ ծրագրի) և շահագործվում են:

30.2. ՆՈՐԿԵՆՏ ծրագրի հայտարարած մրցույթի արդյունքում ընտրվելու են համապատասխան խորհրդատուներ: Նախ մշակվելու և ներդրվելու է հեռաուսուցման դասընթացի բովանդակությունը, իրականացվելու են վերապատրաստումներ այդ ուղղությամբ, ապա նաև՝ ներառական կրթության կազմակերպում, կայուն տուրիզմի զարգացում ու մարզմշակութային միջոցառումների կազմակերպում ու անցկացում բովանդակություններով:

31.1. Պլանավորվում է իրականացնել:

31.2. Պլանավորվում է իրականացնել:

32.1. Շինությունների ծավալների ընդլայնմանն անդրադարձել ենք 8.1. բաժնում:

32.2 8.1. բաժնում ներկայացված է նաև այժմյան լսարանային ֆոնդը, որը բարելավված է և նպատակային կիրառվում է ուսումնառության կազմակերպման համար:

Այժմ համալսարանում առկա է լսարանային ծանրաբեռնվածության համակարգողի հաստիքը, և ունենք աշխատակից: Արդյունքում լսարանային ֆոնդը կառավարվում է առավել նպատակային: Ներդրվելու է նաև էլեկտրոնային հարթակ, ինչը առավելագույնս կկարգավորի գործընթացը:

33.1. Պլանավորման փուլում է:

9. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

9.1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՔԻ ՀԵՏԵՎՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.
1829	18249	27720	43747	73236	1688



Shsu.am կայքի այցելուներ



Նշենք, որ 2013-ից առ այսօր gspi.am կայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների ընդհանուր քանակը 214 է, իսկ Շիրակի պետական համալսարանի նոր shsu.am կայքում (որը գործածության մեջ է դրվել 2017 թ.-ի սեպտեմբերից)՝ արդեն 43:

9.2. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

	2013-2014	2014-2015	2015-2016	2016-2017	2017-2018 1-ին կիսամյակ
ՇՊՀ-ի մասին տպագիր մամուլում հրապարակված նյութերի քանակ	28	16	15	18	17
ՇՊՀ-ի մասին ինտերնետային կայքերում հրապարակված նյութերի քանակ	72	38	87	105	86
ՇՊՀ-ի մասին հեռուստաընկերություններով եթեր հեռարձակված տեսանյութերի քանակ	54	27	46	57	24
Մամուլի հաղորդագրությունների քանակ	38	17	21	28	16
Լուսանկարահանված միջոցառումների քանակ	132	70	108	112	56
Տեսանկարահանված միջոցառումների քանակ	36	48	63	56	31
Միջոցառումների տեսանկարահանման տևողություն (րոպեներով)	720	570	625	635	270



9.3. ԿԱՅՔՈՒՄ ԵՎ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋՈՒՄ ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (2016-2017 ՈՒՍՏԱՐԻ ԵՎ 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ I ԿԻՍԱՄՅԱԿ)

2016-2017 ուստարի

1. Գիտելիքի օրը ԳՊՄԻ-ում- 01.09.2016

2. «Դեպի Հայք» ծրագրով Ավստրալիայից Հայաստան ժամանած կամավոր Ռազմիկ Բալյանը ԳՊՄԻ-ում- 08.09.2016
3. ԳՊՄԻ- առաջին կուրսի ուսանողների հետ հանդիպումը ՈՒԽ-ի անդամների հետ- 28.09.2016
4. Ռազմական ամբիոնի նոր մասնաշենքի բացում- 08.10.2016
5. 1-ին կուրսեցիների «Մեր երազանքների երկիր Հայաստան» միջոցառում- 08.10.2016
6. «Ներառական կրթության հիմնախնդիրները» խորագրով հանրապետական գիտաժողով- 14.10.2016
7. «Ինչպե՞ս խոսել, որ Ձեզ լսեն» և «ինչպե՞ս ստեղծել խմբակ ու հասնել հաջողության» թեմաներով թրեյնինգ ԳՊՄԻ-ի ուսանողների համար- 15.10.2016
8. «ԳՊՄԻ 2016» խորագրով ինտելեկտուալ փառատոն- 16.10.2016
9. «Արդի սպառնալիքներ և մարտահրավերներ հայ-ռուսական ռազմավարական դաշինքի համար» խորագրով համաժողով- 21.10.2016
10. Ռեկտորի ԺՊ Սահակ Մինասյանի մամուլի ասուլիս- 27.10.2016
11. «ՀՈՒԱՄ կրթական ավտոբուս»-ը ԳՊՄԻ-ում 4.11- 7.11.2016
12. Քնարկում «Ներքին Սաքսոնիայում և Հայաստանում ՏԻՄ ընտրությունների անաչառ լուսաբանում» խորագրով-10.11.2016
13. Վալերի Խաչատրյանի «Աղոթք առ սեր» ցուցահանդեսը- 11.11.2016
14. Հանդիպում- քննարկում «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»-ի մեդիափորձագետների հետ 16.11.2016
15. «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» մրցույթ-վիկտորինա՝ բնագիտաաշխարհագրական ֆակուլտետում 17.11.2016
16. Շիրակի մայր բուհի ռեկտորը շնորհավորեց ու պարգևատրեց լավագույն ուսանողներին- 18.11.2016
17. Ինտելեկտուալ շաբաթ ԳՊՄԻ-ում- 14.11-18.11.2016
18. Նելլի Ադամյանի «Քերոլի հեքիաթների խորհուրդները» գրքի շնորհանդեսը- 18.11.2016
19. Մանկավարժություն և մեթոդիկա և սոցիալական մանկավարժություն կուրսերի ուսանողների բաց դասը թիվ 41 դպրոցում- 18.11.2016
20. «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի ներկայացուցիչները ԳՊՄԻ-ում- 23.11.2016
21. Մանկավարժության ֆակուլտետի ուսանողների պարապմունքը Գյումրու «Երեխաների տանը»- 25.11.2016
22. «Ապրելու խորհուրդը» խորագրով միջոցառում- 28.11.2016
23. Ռազմական ամբիոնի «Նվիրիր արյուն, նվիրիր կյանք» նախաձեռնությունը- 01.12.2016
24. ՇՊՀ-ի ռեկտորի ԺՊ Սահակ Մինասյանի մամուլի ասուլիսը- 06.12.2016
25. Շիրակի թեմի առաջնորդի դասախոսությունը ՇՊՀ-ում- 06.12.2016
26. Նվարդ Մելքոնյանի դասախոսությունը ՇՊՀ-ում- 09.12.2016
27. ՀԵՀ-ի ՇՄ-ի և «ԷյԷմ» իրավաբանական ընկերության ներկայացուցիչները ՇՊՀ-ում 10.12.2016
28. ՇՊՀ ուսանողների ամառային պլեներային պրակտիկայի աշխատանքների ցուցահանդես- 12.12.2016
29. «Նահապետ»՝ Սարգիս Պետրոսյանի մասին պատմող տեսաֆիլմ- 13.12.2016

30. Բաց դաս անցկացրին «Երեխաների խնամքի և պաշտպանության N2 գիշերօթիկ հաստատության» սաների հետ- 14.12.2016
31. «Comus»- ԳՊՄԻ- տեսաֆիլմ 14.12.2016
32. Դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադա ՇՊՀ-ում 16.12-17.12.2016
33. Հայ-վրացական միջմշակութային երկխոսության շրջանակներում հանդիպում ՇՊՀ-ում- 17.12.2016
34. Մանկավարժական պրակտիկայի հաշվետու միջոցառում Գյումրու թիվ 7 դպրոցում 19.12.2016
35. Մասնագիտական կողմնորոշման այց ՇՊՀ-ի ավագ դպրոց- 20.12.2016
36. Ամանորյա միջոցառում ՇՊՀ-ի մշակույթի վարժարանում- 24.12.2016
37. ՇՊՀ-ի տարեմուտի տոնական միջոցառում- 26.12.2016
38. Անցնող ուստարին Շիրակի մայր բուհում. ամփոփում- 27.12.2016
39. Համագործակցության հուշագիր՝ ՇՊՀ- ԷՅ ԷՄ իրավաբանական ընկերություն- 28.01.2017
40. Սիրո տոներին ընդառաջ բանավեճ ՇՊՀ-ում- 09.02.2017
41. ՇՊՀ-ի հյուրն է ՀՀ ԶՈւ ՇՊ տեղակալ գեներալ-լեյտենանտ Ստեփան Գալստյանը- 09.02.2017
42. Դահուկասպորտի կեսդարյա ավանդույթները ՇՊՀ-ում- 09.02.2017
43. Ամփոփվեց ՇՊՀ ի լավագույն ուսանող ընթերցող մրցույթը- 21.02.2017
44. «Երեխաների պաշտպանության եւ անվտանգության ապահովման քաղաքականության» փաստաթղթի քննարկում- 20.02.2017
45. Բարեկենդանի տոնին նվիրված միջոցառում ՇՊՀ-ում 27.02.2017
46. ՇՊՀ ՈՒԽ-ը՝մարզային լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին "Հայկյան 2016"- 28.02.1017
47. ՇՊՀ-ի ուսանողները «Շիրակ Կենտրոն» հկ-ի գրասենյակում- 06.03.2017
48. ՇՊՀ-ի ռեկտորի պաշտոնում միաձայն ընտրվեց Սահակ Մինասյանը- 07.03.2017
49. Ներբուհական դրամաշնորհի մրցույթի արդյունքների ամփոփում- 09.03.2017
50. ՇՊՀ-ի ներկայացուցիչները՝ «Բարև երկիր» հաղորդման հյուրեր-14.03.2017
51. Համագործակցության համաձայնագիր՝ ՇՊՀ- «Դասավանդի՛ր, Հայաստան»- 22.03.2017
52. Սահակ Մինասյանի հանդիպումը ավարտական կուրսերի ուսանողների հետ- 23.03.2017
53. ՇՊՀ-ը Ջավախքը հայրենիքին կապող օղակ- 22.03.2017
54. «Տվյալների օգտագործումը SPSS ծրագրային փաթեթի միջոցով» դասընթաց ՇՊՀ-ում- 30.03.2017
55. Տեմպուսի «ARMENQA» ծրագրի շրջանակներում քննարկում- 30.03.2017
56. Ինտեգրված ուսուցման թեմայով դասընթաց ՇՊՀ-ում- 01.04.2017
57. ՆՈՐԿԵՆՏ ծրագրի շահառուների առաջին աշխատաժողովը- 24.03.2017
58. Համագործակցություն արտասահմանյան համալսարանների հետ՝ ուսանողների փոխանակման ծրագրերով- 04.04.2017
59. DAAD-ի ներկայացուցիչները ՇՊՀ-ում- 06.04.2017
60. «Իմ Դպրոց» կայքի պատասխանատուները ՇՊՀ-ում- 06.04.2017
61. «Հույզեր և հույսեր» խորագրով ցուցահանդես- 07.04.2017

62. «Էրազմուս +» ծրագրի բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետները ՇՊՀ-ում- 13.04.2017
63. ՇՊՀ-ի մշակույթի վարժարանը ներառական կրթություն իրականացնող դպրոց- 14.04.2017
64. Գործնական աշխատանք «Հուզական ներգործության կազմակերպման վարպետությունը» թեմայի շրջանակում- 14.04.2017
65. «Միջնադարի հանճարեղ սուրբը՝ Գրիգոր Նարեկացի»: Հ.Հարոյանի դասախոսությունը- 17.04.2016
66. «Թուրքիայի ժխտողական քաղաքականության էվոլյուցիան». Ռ. Մելքոնյանի դասախոսությունը ՇՊՀ-ում- 18.04.2017
67. ՇՊՀ-ն «Առավոտ լուսո» հաղորդման հյուր- 14.04.2017
68. Ամենամյա հանրապետական ուսանողական գիտաժողով ՇՊՀ-ում- 21.04.2017
69. Հիշում ենք և պահանջում- 24.04.2017
70. DAAD-ի ներկայացուցիչները ՇՊՀ-ում- 27.04.2017
71. Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետները ՇՊՀ-ում- 27.04.2017
72. Ֆրանկոֆոնիայի օրեր ՇՊՀ-ում- 27-28.04.2017
73. Ապրիլը ՇՊՀ-ում. Ամփոփ- 03.05.2017
74. ՇՊՀ-ի ուսանողների պրակտիկան եզրափակվեց սպորտլանդիայով- 04.05.2017
75. «Նոյան Տապան» միջազգային միջմշակութային կրթական նախագծի ամփոփում- 28.04-05.05.2017
76. «Պրեզենտացիա Պլյուս» ոչ ֆորմալ կոնֆերանս ՇՊՀ-ում- 08.05.2017
77. Հաղթանակի օր: ՇՊՀ-ն «Մայր Հայաստան» հուշահամալիրում- 09.05.2017
78. TEMPUS ARMENQA ծրագրի ամփոփիչ համաժողով ԵՊՀ-ում- 17.05.2017
79. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հկ-ի ներկայացուցիչները ՇՊՀ-ում- 24.05.2017
80. ՇՊՀ ՈՒԽ նախագահի ընտրություն- 25.05.2017
81. ՇՊՀ-ն և նրա ենթակառույցները մասնակցեցին հանրապետական շաբաթօրյակին- 27.05.2017
82. ՇՊՀ-ի թիմը «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղի Գյումրիի ուսանողական լիգայի հաղթող- 28.05.2017
83. «Աշխարհը երեխաների աչքերով» հունիսմեկյան միջոցառում- 01.06.2017
84. Մայիսը ՇՊՀ-ում. ամփոփ – 02.06.2017
85. ՇՊՀ-ի ֆրանսերեն լեզվի ամբիոն- տեսաֆիլմ- 05.06.2017
86. ՇՊՀ-ում էին «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի ներկայացուցիչները- 16.06.2017
87. ՇՊՀ ֆակուլտետների դեկանների ընտրություն- 06.07.2017
88. ՇՊՀ-ի ուսանողների պրակտիկան Ազատան հնավայրում- 21.07.2017
89. «Բազե 2017», ՇՊՀ թիմի ընտրություն- 24.07.2017
90. ՇՊՀ-ի առաջին մագիստրոս շրջանավարտները- 04.08.2017
91. ՇՊՀ-ն տուն նվիրեց անօթևան ընտանիքին- 04.08.2017

2017-2018 ուստարի, 1-ին կիսամյակ

1. Գիտելիքի օրը ՇՊՀ-ի ավագ դպրոցում- 01.09.2017
2. «ՇՊՀ» ֆուտզալի նորաստեղծ ակումբը սկսեց մարզումները- 08.09.2017
3. «Դեպի Հայք» ծրագրի կամավորը ՇՊՀ-ում- 13.09.2017
4. ՇՊՀ-ի ավագ դպրոցում նշվեց Անկախության տոնը- 21.09.2017
5. Մարո Մադոյանը արժանացավ ՇՊՀ-ի ոսկե մեդալի- 23.09.2017
6. Բացվեց Ռազմիկ Մադոյանի անվան լսարան- 23.09.2017
7. ՇՊՀ ռեկտոր Սահակ Մինասյանի հարցազրույցը ԶԼՄ-ներին- 26.09.2017
8. ՀՊՄՀ-ի ուսանողների այցը ՇՊՀ- 04.10.2017
9. Վորլդ Վիժն Հայաստանի «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի շրջանակներում հանդիպում- 06.10.02017
10. ՇՊՀ-ի ավագ դպրոցում ազդարարվեց ինտելեկտուալ տարվա բացումը- 08.10.2017
11. Տեսահամաժողով. Կրետեյ-Գյումրի- 09.10.2017
12. Սեմինար ՇՊՀ ավագ դպրոցում "CV գրելու հմտությունները" թեմայով- 13.10.2017
13. ՇՊՀ- Շիրակ ՖԱ. ֆուտզալ- 14.10.2017
14. ՇՊՀ ռեկտորը պատասխանում է ուսանողների հարցերին և մամուլի հրապարակումներին- 16.10.2017
15. Ա. Քամյուի «Անկում» վիպակի ներկայացում-քննարկում- 19.10.2017
16. Հեծանվային երթ՝ ՇՊՀ-ի ավագ դպրոցի աշակերտների նախաձեռնությամբ- 20.10.2017
17. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը 20 տարեկան- 20.10.2017
18. Ուսանողական մարզական խաղեր. հնգամարտ- 24.10.2017
19. Հարիսայի փառատոն ՇՊՀ-ի ավագ դպրոցում- 26.10.2017
20. ՇՊՀ-Չարբախ. ֆուտզալ- 29.10.2017
21. «Ինչ, որտեղ, երբ» ներբուհական առաջնություն- 04.11.2017
22. ՇՊՀ-ԼԵՈ. ֆուտզալ- 11.11.2017
23. ՇՊՀ ռեկտոր Ս. Մինասյանի դասախոսությունը-13.11.2017
24. ՇՊՀ-ում մեկնարկեց «Ուսանողական շաբաթ»-ը- 13.11.2017
25. SS փորձագետ Տիգրան Քոչարյանի դասախոսությունը- 14.11.2017
26. Վոլեյբոլի ներբուհական առաջնություն- 14-16.11.2017
27. «Ժամանակի մեքենա» արկղիկ- 14-20.11.2017
28. ՇՊՀ-ում շարունակվում է «Ուսանողական շաբաթ»-ը- 15.11.2017
29. Շախմատի առաջնություն ՇՊՀ-ում- 15.11.2017
30. «Բարեգործական բուֆետ» ակցիա ՇՊՀ-ում- 16.11.2017
31. Քիմիական ցուցադրական փորձեր ՇՊՀ-ում- 17.11.2017
32. ՇՊՀ-Կապան. ֆուտզալ- 18.11.2017
33. «Ինչ, որտեղ, երբ» ռեյտինգային առաջնություն- 18.11.2017
34. Հայկ Մամիջանյանի դասախոսությունը ՇՊՀ-ում- 19.11.2017
35. «Ինտելեկտուալ weekend ՇՊՀ-ում 18-19.11.2017
36. Պարզաբանում է ՇՊՀ ռեկտոր Սահակ Մինասյանը. մամուլի ասուլիս- 20.11.2017

37. Սամբոյի աշխարհի առաջնության մազրիկների պարգևատրում-20.11.2017
38. ՇՊՀ-ում պարգևատրվեցին լավագույնները- 20.11.2017
39. Ուսանողական մարզական խաղեր. հրաձգություն- 22.11.2017
40. ՇՊՀ-Ալավերդի. ֆուտզալ- 25.11.2017
41. Շաղրինսկու պետհամալսարանի ներկայացուցիչները ՇՊՀ-ում 27-30.11.2017
42. «Ուսանողների ներգրավումը կրթության որակի ապահովման գործընթացներում». քննարկում ՇՊՀ-ում- 29.11.2017
43. Փոխըմբռնման հուշագիր՝ ՇՊՀ, Կոմպասս, Ջինիշյան հիմնադրամ-30.11.2017
44. «Բանավեճ, քննարկում և փոփոխություն» ծրագրի ներկայացում- 30.11.2017
45. ՇՊՀ ավագ դպրոցում կայացավ բանավեճի ակումբի 1-ին հանդիպումը- 01.12.2017
46. Շիրակ ՖԱ-ՇՊՀ. ֆուտզալ- 03.12.2017
47. Ուսանողական մարզական խաղեր. բասկետբոլ- 04.12.2017
48. Խաղաղության կրթություն. քննարկում ՇՊՀ-ում- 04.12.2017
49. Կրետեյ-Գյումրի 3-րդ տեսագիտաժողով- 04.12.2017
50. Մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ուսանողների դասը Սոցիալ-կրթական կենտրոնում- 06.12.2017
51. «ՖՈՏՈպատմություն. անց 29 տարի» ցուցահանդես- 07- 29.12.2017
52. Անց 29 տարի- 07.12.2017
53. ՆԶՊ ուսանողների պրակտիկայի ավարտին կազմակերպած միջոցառում- 09.12.2017
54. «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ՇՊՀ ավագ դպրոցում-10.12.2017
55. ՇՊՀ-ՎՊՀ. ֆուտզալ-10.12.2017
56. Հրաձգության ներբուհական առաջնություն ՇՊՀ-ում-11.12.2017
57. «Քիմիա... հարցեր, փորձեր, պատմություններ» միջոցառման մասնակիցների պարգևատրում- 12.12.2017
58. Արհեստակցական կազմակերպության համագումար- 12.12.2017
59. Բրենդավորման թեմայով քննարկում ՇՊՀ-ում- 12.12.2017
60. Գյումրու թիվ 1 ավագ դպրոցում պրակտիկայի ավարտին ինտելեկտուալ մրցույթ- 13.12.2017
61. Անգլերեն լեզու և գրակ. բաժնի ուսանողների ցուցադրական դասը- 14.12.2017
62. Մանկավարժական պրակտիկայի ավարտին «Անի» նախակրթարանում ցուցադրական պարապմունք- 15.12.2017
63. Այցելություն ՀԿ-ի «Տարեցների ցերեկային խնամքի կենտրոն»-15.12.2017
64. «We Share» ծրագրի ներկայացում-16.12.2017
65. «Ամերիկյան կյանքի փորձառություն. թույլատրելին և անթույլատրելին». քննարկում ՇՊՀ-ում 16.12.12
66. Այցելություն Գյումրու «Երեխաների խնամքի կենտրոն» և «Երեխաների տուն» հաստատություններ-18.12.2017
67. ՀՀ ԿԳՆ Լ. Մկրտչյանը պարգևատրեց ՇՊՀ թիմին ուսանողական հանրապետական խաղերում 3-րդ տեղը գրավելու համար- 19.12.2017
68. Նազենի Հովհաննիսյանը ՇՊՀ-ում- 21.12.207
69. «Meet your neighbour» միջազգային ծրագրի ներկայացում ՇՊՀ-ում- 22.12.2017

70. Արկադի Տեր-Թադևոսյանը՝ լեգենդար Կոմանդոսը ՇՊՀ-ում- 25.12.2017

71. Ս. Մինասյանի ամանորյա շնորհավորանքը- 29.12.2017

72. 2017-18 ուստարվա 1-ին կիսամյակը ՇՊՀ-ում. ամփոփ- 29.12.2017

9.4. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



9.5. ԳՊՄՀ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի այս չափանիշը գնահատվել է բավարար՝ նշելով հետևյալ թերությունները.

1. Քննարկումներին ուսանողների մասնակցությունը բավականին պասիվ է:
2. Ամբիոնների և ֆակուլտետների հաշվետվությունները հինականում ունեն փաստեր նրկայացնելու բնույթ և ոչ բոլոր դեպքերում են պարունակում խորքային վերլուծություններ:
3. Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ամրագրված քաղաքականություն և ընթացակարգեր բուհը դեռ չունի, և այն գտնվում է պլանավորման փուլում:

4. Արտաքին շահակիցներն իրենց հարցադրումները հիմնականում կատարում են ֆեյսբուքի պաշտոնական էջով, և այդ տեսակետից բուհի պաշտոնական կայքը դեռևս չունի մեծ դերակատարում:
5. Առկա չեն գնահատականներ և վերլուծություններ հասարակությանը մատուցած ծառայությունների վերաբերյալ:

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	**34**	*Բուհի ներքին հաշվետվողականության համակարգում զարգացնել վերլուծական բաղադրիչը:*
	35	*Հստակեցնել և զարգացնել հասարակության հետ հետադարձ կապերի մեխանիզմները:*
	36	*Մշակել և ներդնել հասարակությանը մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ:*

9.6. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		**Քայլեր**		**Ընթացիկ վիճակը**	**Ժամանա-կահատված**
34	**Բուհի ներքին հաշվետվողականության համակարգում զարգացնել վերլուծական բաղադրիչը**	34.1	Բարելավել հաշվետվությունների ձևաչափերը՝ որակական և քանակական վերլուծությունների նկատառումով	Բարելավ-ված	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
35	**Հստակեցնել և զարգացնել հասարակության հետ հետադարձ կապերի մեխանիզմները**	35.1	Մշակել և ներդնել հասարակության հետ արդյունավետ հետադարձ կապի հաստատման քաղաքականություն և մեխանիզմներ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
36	**Մշակել և ներդնել հասա-րակությանը մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմներ**	36.1	Մշակել և ներդնել հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների գնահատման մեխանիզմներ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից

34.1. Հաշվետվությունների ձևաչափերը բարելավվել են՝ ներառված է որակական ու քանական վերլուծություններ վերջին 5 տարիների ցուցանիշների մասով:

35.1. Այժմ արտաքին շահակիցները հարցադրումներ կարող են կատարել ոչ միայն ֆեյսբուքի պաշտոնական էջով, այլև պաշտոնական կայքէջով:

Հասարակության հետ արդյունավետ հետադարձ կապի հաստատման քաղաքականություն և մեխանիզմներ դեռևս մշակվելու են:

36.1. Պլանավորման փուլում է:

10. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

10.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանը 2013 թվականից մինչ օրս Եվրամիության Տեմպուս և Էրազմուս պլյուս ծրագրերի միջոցով իրականացրել է կարողությունների զարգացմանը միտված թվով 7 ծրագիր, որից 2-ն ընթացքի մեջ է: Մնացած 5 ծրագրերն ավարտվել են, որոնցից 1-ը՝ հաշվետու տարում:

1) ARMENQA ԾՐԱԳԻՐ

(2014-2017թթ.)

Ծրագրի հիմնական նպատակը.

Խթանել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների զբաղվածությունը և դյուրացնել հայաստանյան որակավորումների ճանաչումն ազգային և միջազգային աշխատաշուկայում:

Ծրագրի խնդիրները.

- որակավորումների ազգային շրջանակի մշակում՝ համապատասխան մեթոդաբանական, կանոնակարգային, ենթաօրենսդրական բազաների ստեղծման օգնությամբ,
- պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների զարգացում կրթական վերջնարդյունքների ուղղությամբ,
- ՈԱԾ-ի մշակում **«Իրավագիտություն», «Ֆիզիկա», «Կրթություն», «Ճարտարագիտություն», «Գյուղատնտեսություն»** ոլորտներում:
- ուսումնական ծրագրերը վերջնարդյունքներով ներկայացնելու մեթոդաբանական բազայի ստեղծում:

Ծրագրի համակարգումն իրականացվում է Շվեդիայի Լինշոփինգ համալսարանի կողմից:

Ծրագրի հայաստանյան գործընկերներն են.

1. Երևանի պետական համալսարան (Yerevan State University)
2. Հայաստանի պետական մանկավարժական համալսարան (Armenian State Pedagogical University)
3. Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան (Yerevan State University of Languages and Social Sciences)

4. Հայաստանի ազգային ագրարային համալսարան (Armenian National Agrarian University)
5. Հայաստանի պետական ճարտարապետության և շինարարության համալսարան (Armenian State University of Architecture and Construction)
6. Գավառի պետական համալսարան (Gavar State University)
7. Ռուս-հայկական համալսարան (Russian-Armenian University)
8. ՀՀ կրթության և գիտության նախարարություն (Ministry of Education and Science of Armenia)
9. Ակադեմիական ճանաչելիության և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (National Information Center for Academic Recognition and Mobility)
10. Հայաստանի գործատուների միություն (Union of Employers of Armenia)

Ծրագրի արտասահմանյան գործընկերներն են.

1. Լինշոփինգի համալսարան, Շվեդիա (Linkoping University, Sweden)
2. Օսնաբրուկի համալսարան, Գերմանիա (Osnabruk University, Germany)
3. Գենթի համալսարան, Բելգիա (Ghent University, Belgium)
4. Ռումինիայի ազգային որակավորումների կենտրոն, Ռումինիա (National Qualification Authority of Romania, Romania)

Հաշվետու տարում ավարտվեց ծրագիրը, որի ավարտին ունեցանք համալսարանի հետագա զարգացման համար շատ կարևոր արդյունքներ:

Ծրագրի վերջնարդյունքները.

1. մշակվեց և ՀՀ Կառավարության կողմից հաստատվեց **Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ),**
2. մշակվեց և ՀՀ ԿԳՆ նախարարության հաստատմանը ներկայացվեց **«Իրավագիտություն», «Ֆիզիկա», «Կրթություն», «Ճարտարագիտություն», «Գյուղատնտեսություն»** ոլորտների **Որակավորումների Ոլորտային Շրջանակները (ՈՈՇ),**
3. **մշակվեց և հրատարակվեց ՈԱՇ-ին և ՈՈՇ-ին համապատասխան մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) մշակման մի շարք մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ և հայեցակարգեր:**
    - «Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում» ձեռնարկը դասախոսների համար,

- «ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի 101 եզրույթներ» բացատրական բառարանը ՄԿԾ մշակողների համար,
- «ՀՀ բարձրագույն կրթության ՈԱԾ-ի մակարդակների (որակավորումների) և ՀՀ բարձրագույն կրթության հինգ ՈՈԾ-ի մակարդակների (որակավորումների) նկարագրիչներ» ուղեցույցը ՄԿԾ մշակողների համար,
- ՀՀ բարձրագույն կրթության ՈԱԾ-ի 2016-2020թթ. իրականացման ռազմավարությունը բարձրագույն կրթության կառավարիչների համար,
- ՀՀ բարձրագույն կրթության ՈԱԾ-ի գործադրման պատասխանատու մարմնի գործունեության հայեցակարգ,
- ՈԱԾ-ի հակիրճ ուղեցույցները ուսանողների, գործատուների և պրոֆեսորադասախոսական կազմի համար։

4. Եվրոպական գործընկերների կողմից կազմակերպվեցին մի շարք վերապատրաստումներ, որոնց մասնակցեց բուհի պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմերի ավելի քան մեկ տասնյակ ներկայացուցիչ,
5. Բուհում 2016-2017 ուստարում կազմակերպվեցին ներքին եռափուլ վերապատրաստումներ ՈԱԾ-ին և ՈՈԾ-ին համապատասխան ՄԿԾ-ների մշակման, վերջնարդյունքների ձևակերպման, վերջնարդյունքներին միտված դասավանդման և գնահատման մեթոդների ընտրության վերաբերյալ։ Բուհում ներքին վերապատրաստում անցան պրոֆեսորադասախոսական կազմի ավելի քան 50 ներկայացուցիչ՝ յուրաքանչյուր ամբիոնից առնվազն երկուսը։
6. Ծրագրի շրջանակում հրատարակված ուղեցույցների, ձեռնարկների և հայեցակարգերի տպագիր 70 օրինակ տրամադրվեց համալսարանի բոլոր ֆակուլտետներին և ամբիոններին։

Ծրագրի արդյունքում վերանայման փուլում են բուհի ՄԿԾ-ները։ Գիտական խորհրդի կողմից հաստատվեց ՄԿԾ-ների մասնագրի և դասընթացի նկարագրիչների մշակման ուղեցույց։ Համալսարանում թողարկվող մասնագիտությունների ուղղությամբ ըստ վերջնարդյունքների մշակված են բոլոր մասնագրերը և մեկ առարկայական նկարագիր՝ վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և գնահատման մեթոդներով։ ՄԿԾ-ի ամբողջական փաթեթի կազմումը և հաստատումը դեռևս ընթացքի մեջ է։

2) BOOSTԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԽԹԱՆՈՒՄ
(2016-2019 թթ.)

Ծրագրի հիմնական նպատակը.

Ազգային և ինստիտուցիոնալ քաղաքականության շրջանակի և գործիքների մշակման միջոցով ամրապնդել և խթանել Հայաստանում բարձրագույն կրթության միջազգային ուղղվածությունը՝ համաձայն Երևանի կոմյունիկեի և եվրոպական բարձրագույն կրթական տարածքի 2020 թվականի շարժունության ռազմավարության սկզբունքների:

Ծրագրի խնդիրները.

- մշակել ազգային քաղաքականության շրջանակը և գործիքակազմը՝ Հայաստանում բարձրագույն կրթության միջազգայնացմանն օժանդակելու նպատակով,
- ստեղծել բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային հարթակ և միջազգայնացման գործընթացի քարտեզագրման և համեմատության առցանց գործիքներ,
- զարգացնել բուհերի, ԿԳ նախարարության և սոցիալական գործընկերների միջազգային համագործակցության բաժնի աշխատակազմի կարողությունները ռազմավարական կառավարման, մարքեթինգի և միջմշակութային մարտահրավերների, ինչպես նաև կրեդիտային շարժունության իրականացման հարցում,
- ստեղծել կամ զարգացնել հայաստանյան բուհերում միջազգային համագործակցության գրասենյակներ և ծառայությունների մատուցման կենտրոններ:

Ակնկալվող արդյունքները.

Միջազգայնացման ազգային ռազմավարության մշակման արդյունքում ծրագիրը կնպաստի Հայաստանի բարձրագույն կրթության առավել նոր, հեռանկարային և գլոբալ ընդգրկմանը: Այն կամրապնդի Հայաստանի բարձրագույն կրթության, վերապատրաստման և հետազոտական համակարգի սկզբունքները՝ համաձայն միջազգային և ներպետական իրավական շրջանակների:

Ծրագրի համակարգումն իրականցվում է Հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից:

Ծրագրի հայաստանյան գործընկերներն են.

1. ՀՀ կրթության և գիտության նախարարություն (Ministry of Education and Science of Armenia)
2. Հայկական պետական մանկավարժական համալսարան (Armenian State Pedagogical University)
3. Հայաստանի ամերիկյան համալսարան (American University of Armenia)
4. Երևանի պետական կոնսերվատորիա (Yerevan State Conservatory)
5. Վանաձորի պետական համալսարան (Vanadzor State University)
6. Ազգային տեղեկատվական կենտրոն (National Information Centre)

Ծրագրի արտասահմանյան գործընկերներն են.

1. Կատալոնիայի պոլիտեխնիկական համալսարան, Իսպանիա (Universitat Politecnica de Catalunya, Spain)
2. Բարձրագույն տեխնիկական համալսարան, Պորտուգալիա (Instituto Superior Tecnico, Portugal)
3. Տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտ, Շվեդիա (Royal Institute of Technology, Sweden)
4. Ռովերա և Վերջիլիի համալսարան, Իսպանիա (Universitat Rovira I Virgili, Spain)
5. Տալինի տեխնոլոգիական համալսարան, Էստոնիա (Tallin University of Technology)

Ծրագիրն իրականացվում է ինստիտուցիոնալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում՝ ներառելով ռազմավարական պլանավորման վերաբերյալ սեմինարներ և վերապատրաստումներ, ինչպես նաև միջազգային հարաբերությունների և կառուցվածքային բարեփոխումների կառավարման սկզբունքների իրագործում Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Իսպանիայի, Շվեդիայի, Պորտուգալիայի և Էստոնիայի եվրոպական գործընկերները ռազմավարության, մարքեթինգի և միջազգային համագործակցության ոլորտում ունեցած իրենց առաջադեմ փորձը կփոխանցեն հայաստանյան գործընկերներին:

Ծրագիրը մեկնարկվեց 2017 թվականի փետրվարի վերջին, որտեղ մանրամասն ներկայացվեցին ծրագրի քայլերը, աշխատանքային փաթեթները, նախատեսվող վերջնարդյունքները: Ծրագրի շրջանակներում հայաստանյան գործընկերները, այց կատարելով Շվեդիայի տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտ, ծանոթացել են եվրոպական գործընկեր բուհերում և երկրներում գործող միջազգայնացման ռազմավարությանը և գործողություններին: Ծրագրի այս փուլում ՀՀ ԿԳ նախարարությունը և հայաստանյան բուհերը եվրոպական գործընկերների օգնությամբ մշակելու են միջազգայնացման ազգային ռազմավարություն: Ազգային ռազմավարության հիման վրա հայաստանյան յուրաքանչյուր բուհ կմշակի իր միջազգայնացման զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը:

2017 թվականին ծրագրի շրջանակում անցկացվել են աշխատաժողովներ և վերապատրաստումներ, որոնց բուհից մասնակցել է 5 ներկայացուցիչ.

N	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ՔԱՂԱՔ, ԵՐԿԻՐ	ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ
1.	Հովիկ Մելքոնյան Հասմիկ Բերդիկյան	Մեկնարկային հանդիպում	ՀՊՄՀ, Երևան, Հայաստան	20.02.2017-21.02.2017
2.	Ասյա Հարությունյան	HARMONY և BOOST ծրագրերի համադրելիության քննարկում	ՀՊՄՀ, Երևան, Հայաստան	25.05. 2017
3.	Սահակ Մինասյան Ասյա Հարությունյան	Ուսումնական այց Շվեդիայի տեխնոլոգիայի թագավորական ինստիտուտ	Ստոկհոլմ, Շվեդիա	6.06.2017-10.06.2017
4.	Անահիտ Ֆարմանյան Ասյա Հարությունյան Հասմիկ Բերդիկյան	Ազգայինն բաց կոնֆերանս «Ազգային մակարդակում միջազգայնացման ՌԾ-ի ներկայացում»	ՀԱՀ, Երևան, Հայաստան	20.11.2017-21.11. 2017

3) A B I O N E T

ԲԻՈ-ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ (2017 - 2020 թթ.)

Ծրագրի հիմնական նպատակը.

ԲԻՈ-ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆՈՒՄ (ABIONET):

Ակնկալվող արդյունքները.

Հիմնել բիոտեխնոլոգիական կրթության միջազգային գերազանցության ցանց հայաստանյան և եվրոպական համալսարանների միջև՝ կոնսորցիումի շրջանակներում մշակելով և իրականացնելով ուսումնական ծրագիր/դասընթաց կիրառական բիոգիտության ոլորտում:

Ծրագրի համակարգումն իրականացվում է Հունաստանի Սալոնիկի տեխնոլոգիական ինստիտուտի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ	ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ
1. Շիրակի պետական համալսարան (ՇՊՀ)	1. Սալոնիկի տեխնոլոգիական ինստիտուտ, Հունաստան (համակարգող)
2. Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)	2. Դրեզդենի տեխնոլոգիական համալսարան, Գերմանիա
3. Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ)	3. Պորտուգալիայի կաթոլիկե համալսարան, Պորտուգալիա
4. Գավառի պետական համալսարան (ԳՊՀ)	4. Տերամոյի համալսարան, Իտալիա
5. ՀՀ Կրթության և գիտության նախարարություն (ԿԳՆ)	

Ծրագրի մեկնարկային հանդիպումը տեղի է ունենալու 2018 թվականի փետրվարին՝ Հունաստանի Սալոնիկի համալսարանում:

ՎԵՐՋԻՆ ՀԻՆԳ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲՈՒՀԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

N	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ	ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿ	ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԵԿԵՐՆԵՐ
1.	TEMPUS-PICQA Promoting Internationalization and Comparability of Quality Assurance in Higher Education Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման միջազգայնացման և համադրելիության խթանումը	2010-2013	Կրթության որակի ապահովում և արտաքին հավաստի համակարգերի մշակում ու ներդրում	• Որակի ապահովման կենտրոնի հիմնում • 14 վերապատրաստված աշխատակից	ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՂՈՐՏՈՒՄ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ (ASIIN) ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ • ՀՀ կրթության և գիտության նախարարություն • Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ • Երևանի պետական բժշկական համալսարան • Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան • Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ • Մյունիխի տեխնիկական համալսարան, Գերմանիա • Կրթության ոլորտում հետազոտությունների միջազգային կենտրոն Ֆրանսիա • Ալիկանտեի համալսարան, Իսպանիա • Նիդեռլանդական համալսարանների որակի ապահովում, Նիդեռլանդներ • Ռոտերդամի կիրառական գիտությունների համալսարան, Նիդեռլանդներ • Կոբլենց-Լանդաու համալսարան, Գերմանիա • Վրաստանի կրթության և գիտության նախարարություն • Կրթության հավատարմագրման ազգային կենտրոն, Վրաստան • Իլիայի պետական համալսարան, Վրաստան • Քութաիսիի իրավագիտության և տնտեսագիտության համալսարան, Վրաստան • Շոթա Ռուսթավելիի անվան պետական համալսարան, Վրաստան • Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարան, Վրաստան
2.	TEMPUS-ARARAT Armenian Coordination Agency “University-Employer” «Համալսարան-գործատու» հայկական համակարգող գործակալություն	2012-2016	Մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին «Բուհ-գործատու համագործակցության կենտրոն»-ի ստեղծում և գործարկում, Որակավորումների ոլորտային շրջանակների մշակում մանկավարժություն, տնտեսագիտություն և	• Համապատասխան նյութատեխնիկական բազայով զինված «Բուհ-գործատու համագործակցության կենտրոն»-ի ստեղծում • 4 տիպի հարցաթերթիկների մշակում և կիրառում ուսանողների, շրջանավարտների, դասախոսների և գործատուների շրջանակներում • մշակված ոլորտային շրջանակներ • ծրագրի արդյունքների կայունությունը	ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ • ՀՀ կրթության և գիտության նախարարություն • ՀՀ էկոնոմիկայի նախարարություն • Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ • Հայաստանի գործատուների հանրապետական միություն • Հայաստանի բանկերի միություն • Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիա • Հայկական պետական մանկավարժական համալսարան • Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան • Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան • Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ • Գավառի պետական համալսարան • Գորիսի պետական համալսարան • Սիսիանի

			տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղությամբ	երաշխավորելու վերաբերյալ հուշագրերի ստորագրում մասնակից բուհերի կողմից վերապատրաստված 7 աշխատակից և 3 ուսանող	ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ • Կոբլենց-Լանդաու համալսարան, Գերմանիա • Հետազոտությունների և նախաձեռնությունների Եվրոպական կենտրոն, Իտալիա • Ինֆորմացիոն համակարգերի կառավարման ինստիտուտ, Լատվիա • Համաշխարհային համալսարանական ծառայություն – Ավստրիական հանձնաժողով, Ավստրիա • Ալիկանտեի համալսարան, Իսպանիա • Մարիա Կյուրի-Սկլադովսկայայի համալսարան, Լեհաստան
3.	TEMPUS-HEN-GEAR Higher Education Network for Human Capital Assessment and Graduates Employability in Armenia Բարձրագույն կրթության ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակությանը	2012-2015	Շրջանավարտների տվյալների բազայի ստեղծում, որը հայաստանյան և եվրոպական գործատուներին իրենց պահանջներին համապատասխան շրջանավարտների անձնական և ակադեմիական տվյալների հասանելիության և ընտրության հնարավորություն է ընձեռում	• Երկլեզու (հայերեն, անգլերեն) հարցաթերթիկի մշակում, • նախապես մշակված մեթոդաբանության հիման վրա ուսանողների տվյալների բազայի հարթակի ստեղծում, կիրառում • ուսանողների տվյալների բազաներից ստացված տեղեկատվության վերլուծություն՝ հասանելի հաշվետվություններով • ծրագրի արդյունքների կայունությունը երաշխավորելու վերաբերյալ հուշագրերի ստորագրում մասնակից բուհերի կողմից • վերապատրաստված 7 աշխատակից	ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԻՏԱԼԻԱՅԻ ԲՈԼՈՆԻԱ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ALMALAUREA ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ • ՀՀ կրթության և գիտության նախարարություն • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ • Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միություն • Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիա • Երևանի պետական համալսարան • Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա • Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան • Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան • Հայաստանի ազգային ագրարային համալսարան • Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան • Գավառի պետական համալսարան ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ • Ալմա Լաուրեա, Իտալիա • Հուելվայի համալսարան, Իսպանիա • Լաս Պալմաս դե Գրան Կանարյա համալսարան, Իսպանիա • Մինհոյի համալսարան, Պորտուգալիա
4.	TEMPUS-SuToMa Development of New Modules for International Bachelor And Master Programmes In Sustainable Tourism Management Կայուն տուրիզմի կառավարման ոլորտում միջազգային բակալավրական և մագիստրոսական ծրագրերի նոր մոդուլների մշակում	2012-2016	Բակալավրի և մագիստրոսի 12 մոդուլների մշակում վերջնարդյունքներով, վերջնարդյունքներին համապատասխան դասագրքերի կազմում, էլեկտրոնային (elearning) ուսուցման հարթակի ստեղծում	• 12 մոդուլների մշակում համապատասխան վերջնարդյունքների և հասանելի ծրագրի հարթակում • ծրագրի կայունությունն ապահովելու նպատակով ՇՊՀ-ի Կառավարում և Տուրիզմ կրթական ծրագրերում 2015-2016 ուստարվանից 4 մոդուլների ներդրում • ծրագրի արդյունքների կայունությունը	ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԱԴԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ • ՀՀ էկոնոմիկայի նախարարություն • Երևանի պետական համալսարան • Հայաստանի ազգային ագրարային համալսարան • Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան • Երևանի պետական լեզվաբանական համալսարան • Բեռլինի Հյուրերի տուն ՍՊԸ • Հյուր Սերվիս ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ • Ուռմսի կիրառական գիտությունների համալսարան, Գերմանիա • Բարձրագույն կրթության CHE կենտրոն, Գերմանիա

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի այս չափանիշը գնահատվել է բավարար՝ նշելով հետևյալ թերությունները.

1. Միջազգայնացման գործընթացն իրականացվում է միայն արտաքին ֆինանսավորման աղբյուրներ ունեցող ծրագրերի շրջանակներում, այլ ոչ թե սեփական նախաձեռնությամբ, ներդրումներով և ռեսուրսներով:
2. Բավարար ակտիվացված չէ բուհի ինքնուրույն և անկախ միջազգային գործունեությունը:
3. Արտաքին կապերի հաստատումը խրախուսող ընթացակարգեր առկա չեն:
4. Արտաքին կապերի բաժինը աշխատանքը կազմակերպում է 2013 թ. հաստատված կանոնադրությամբ, որը առավել ընդհանրական է:
5. Չնայած դասախոսների մեծամասնությունը տիրապետում է որևէ օտար լեզվի, որը կարող է բավարար լինել ընդհանուր հաղորդակցման համար, այնուամենայնիվ սա անբավարար է մասնագիտական հաղորդակցման և օտար լեզվով մասնագիտական դասընթացների անցկացման համար, որոնց կազմակերպումն անհրաժեշտ է ուսանողների փոխանակման ծրագրերի տեսակետից:

Չափանիշի բարելավմանն ուղղված	**37**	*Քայլեր ձեռնարկել սեփական նախաձեռնությամբ և ներդրումային միջազգային ծրագրերի գործարկման ուղղությամբ:*
	38	*Ներքին շահառուների շրջանում խթանել օտար լեզուների իմացության մակարդակը՝ արտաքին համագործակցության և օտարալեզու կրթական ծրագրերի ներդրման նպատակով:*

փորձագիտական խորհրդատվություն	**39**	*Ակտիվացնել համագործակցությունը ՀՀ բուհերի և տարբեր գիտական կենտրոնների հետ:*

10.5. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		Քայլեր		Ընթացիկ վիճակը	Ժամանակահատ-ված
37	**Բուհի ֆինանսական և մարդկային ռեսուրսների օգտագործմամբ խթանել արտաքին ծրագրերի ներդրումը**	37.1	Մշակել և ներդնել միջազգայնաց-մանը նպաստող քաղաքականու-թյուն և ընթացակարգեր	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝2018թ. II եռ.-ից
		37.2	Մշակել մեխանիզմներ արտաքին կապերի գործունեության արդյու-նավետության գնահատման նպատակով	Պլանավոր-ման փուլ	2018թ. I եռ.
38	**Խթանել օտար լեզուների իմացությունը ներքին շահառուների շրջանում**	38.1	Կազմակերպել օտար լեզուների իմացության մակարդակների բարձրացմանն ուղղված շարունակական դասընթացներ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝2018թ. III եռ.-ից
		38.2	Մշակել և ներդնել ՄԿԾ-ների դասընթացներ օտար լեզուներով	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. III եռ.-ից
39	**Ակտիվացնել համագործակցությունը ՀՀ բուհերի և տարբեր գիտական կենտրոնների հետ**	39.1	Կնքել համագործակցության պայմանագրեր նմանատիպ կրթական ծրագրեր իրականաց-նող առաջավոր հայաստանյան բուհերի և գիտական ու այլ կենտրոնների հետ	Պլանավոր-ման փուլ	2018թ. II եռ.-ից
		39.2	Նպաստել համագործակցության պայմանագրերի իրականացմանը	Պլանավոր-ման փուլ	2018թ. II եռ.-ից

37.1. Մշակման փուլում է:

37.2. Պլանավորված է՝ ըստ Գիտական խորհրդի աշխատանքային պլանի:

38.1. Պլանավորման փուլում է և փոխկապակցված է 27.2 կետի հետ:

38.2. Ուսումնասիրված են պրոֆեսորադասախոսական կազմի ՄԿԾ-ով նախատեսված դասընթացները օտար լեզուներով դասավանդելու հնարավորությունները: Նախապատրաստվում ենք մշակել օտար լեզուներով նկարագրեր, ԹՕՊ-եր և ներդնել օտար լեզուներով (ռուսերեն և անգլերեն) դասընթացներ և կրթական ծրագրեր:

39.1. Պլանավորման փուլում է:

39.2. Պլանավորման փուլում է:

11. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

11.1. ԳՊՄԻ-Ի ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳՊՄԻ-ում 2011թ.-ի հունիսին արտաքին կապերի և բարեփոխումների բաժնի կազմում TEMPUS ծրագրի աջակցությամբ հիմնվել է Որակի ապահովման և վերահսկման կենտրոնը, որը մեկ տարի անց վերանվանվել է Որակի ապահովման կենտրոն՝ հանդես գալով որպես առանձին ինքնուրույն կառուցվածքային միավոր: ՈԱԿ-ը ուղղակիորեն ենթարկվում է բուհի կառավարման մարմիններին: Առաջին փուլում կենտրոնի գործունեության հիմնական նպատակն էր ստեղծել մասնագիտական խումբ, որը կկարողանար բուհի ներսում տարածել և ձևավորել որակի մշակույթ: ՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ԳԽ-ին կից ստեղծվել և գործել է (կանոնակարգին համապատասխան) Որակի ապահովման և վերահսկման հանձնաժողով: ՈԱԿ-ի գործունեությունն իրականացվել է կանոնադրությանն համապատասխան (2014թ.-ին լրամշակված): ԳՊՄԻ-ի Գիտական խորհրդի 2014թ. մայիսի 23-ի նիստի որոշմամբ գործածության մեջ է դրվել և գործել որակի ապահովման ներքին համակարգի ուղեցույցը:

ԳՊՄԻ-ում գործել է որակի կառավարման հետևյալ մոդելը. ՈԱԿ-ի աշխատանքները ապակենտրոնացնելու և ֆակուլտետներում մեծ արդյունավետությամբ կազմակերպելու նպատակով կատարվել է ՈԱԿ-ի աշխատանքային գործունեության ապակենտրոնացում. ստեղծվել են որակի ապահովման ֆակուլտետային կենտրոններ, որոնց աշխատանքները իրականացվում են ամբիոնների որակի ապահովման պատասխանատուների և ուսանողների միջոցով՝ որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուների համակարգմամբ: Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուներն իրենց գործունեությունը ծավալել են ամբիոնի պատասխանատուների և տարբեր կրթական աստիճանների ուսանողների մասնակցությամբ:

ԳՊՄԻ-ում այսօր գործել է ՈԱ վարչական կառույց՝ ՈԱԿ, 8 հիմնական հաստիքով՝ տնօրեն, մասնագետ, որակի ապահովման ֆակուլտետային 6 պատասխանատուներ: ՈԱԿ-ի աշխատանքներին ուղղակիորեն մասնակցել են նաև ՈԱ-ի ամբիոնների պատասխանատուները: ՈԱԿ-ի համակարգի մեջ ընդգրկված են եղել նաև ուսանողներ՝ առանձին ՄԿԾ-ներ ներկայացնող:

ՈԱԿ-ի կողմից պարբերական հարցումներ են իրականացվել «Ուսանողների կողմից ՊԴ-ի կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատման» վերաբերյալ:

Անցկացվել են հարցումներ նաև 1. ԳՊՄԻ-ի գիտական գրադարանից ուսանողների և դասավանդողների բավարարվածության, 2. ԳՊՄԻ կառավարման համակարգի և վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման, 3. ԳՊՄԻ մանկավարժական պրակտիկայից ուսանողների բավարարվածության, 4. ՈԱԿ-ի կողմից իրականացվող ստուգումներից ՊԴ կազմի բավավարվածության և այլ հարցերի վերաբերյալ:

ԳՊՄԻ-ի գործունեության թափանցիկությունը և տեղեկատվության տրամադրումը ներքին և արտաքին շահակիցների համար ապահովվել է տարբեր կառույցների համատեղ աշխատանքի արդյունքում: Արտաքին շահակիցների շրջանում որակի մասին տեղեկատվության տարածումն իրականացվել է բուհի կառավարման համակարգում նրանց մասնակցության միջոցով, ինչպես նաև մի շարք մեխանիզմներով:

Ինստիտուտի գործընթացների որակի ապահովման մասին տեղեկատվության տարածման արդյունավետությունն ապահովելու համար գործել են նաև հետադարձ կապի ապահովման միջոցները ԳՊՄԻ-ի կայքէջում, ֆեյսբուքյան էջում և այլն:

Ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատման վերաբերյալ իրականացված պարբերական հարցումների արդյունքները վերլուծվել են ըստ առանձին դասախոսների, վերլուծության արդյունքները ներկայացվել են համապատասխան ամբիոններ՝ քննարկելու նպատակով:

2016-2017 ուստարում իրականացվել է նաև ընդհանրական վերլուծություն ըստ ամբիոնների:

Ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատման հարցումների վելուծությունների արդյունքներ՝ ըստ ամբիոնների

	Ֆակուլտետներ և համապատասխան ամբիոններ	Գեր.	Լավ	Բավ	Վատ
	Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետ				
1	Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	92,99%	6,18%	0,83%	0,00%
2	Դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	76,10%	19,07%	3,37%	1,46%
3	Կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	75,80%	15,62%	6,35%	2,23%
		81,63%	**13,63%**	**3,51%**	**1,23%**
	Մանկավարժության ֆակուլտետ				

1	Կերպարվեստի, երաժշտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	95,86%	3,14%	1,00%	0,00%
2	Հոգեբանության ամբիոն	75,56%	15,13%	7,08%	2,23%
3	Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոն	85,83%	10,84%	2,73%	0,60%
4	Նախադպրոցական և տարրական կրթության մանկավարժության ամբիոն	86,84%	10,81%	2,31%	0,04%
		86,02%	**9,98%**	**3,28%**	**0,72%**
	Պատմաբանասիրական ֆակուլտետ				
1	Հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ու լրագրության ամբիոն	87,12%	7,43%	3,93%	1,53%
2	Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	72,91%	16,50%	7,32%	3,28%
3	Պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	80,09%	11,78%	5,41%	2,72%
		80,04%	**11,90%**	**5,55%**	**2,51%**
	Օտար լեզուների ֆակուլտետ				
1	Անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	81,75%	13,14%	3,75%	1,35%
2	Արտասահմանյան գրականության ամբիոն	80,42%	14,13%	4,11%	1,34%
3	Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	78,61%	16,00%	3,19%	2,21%
4	Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	81,94%	12,05%	4,85%	1,16%
		80,68%	**13,83%**	**3,97%**	**1,52%**
	Ֆիզիկական դաստիարակության և ՆՋՊ ֆակուլտետ				
1	Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	84,80%	13,39%	1,65%	0,16%
2	Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	80,16%	15,32%	3,75%	0,77%
		82,48%	**14,35%**	**2,70%**	**0,47%**
	Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետ				
1	Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն	78,86%	11,21%	5,57%	4,36%
2	Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոն	87,63%	8,67%	2,89%	0,81%
3	Տնտեսագիտության ամբիոն	88,16%	9,44%	2,02%	0,39%
4	Ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն	91,08%	7,87%	1,00%	0,06%
		86,43%	**9,29%**	**2,87%**	**1,41%**
1	**Փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոն**	57,67%	32,44%	8,03%	1,86%

11.2. ՇՊՀ-Ի ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՇՊՀ-ի կառուցվածքային փոփոխության արդյունքում /ըստ Հոգաբարձուների խորհրդի 19.04.2017, N 3/1 որոշման/ Որակի ապահովման կենտրոնը վերափոխվել է Որակի ապահովման և կառավարման կենտրոնի (ՈԱԿԿ), որը գործում է 2017 թվականի հունիսի 1-ից: Հաստատվել է կենտրոնի կանոնադրությունը, որի համաձայն կենտրոնն ընդլայնում է իր գործառույթները կենտրոնի նպատակին համապատասխան (Կենտրոնի հիմնական նպատակը ա) Համալսարանում որակի ներքին կառավարման շարժիչ սկզբունքի ձևավորումը, բ) որակի կառավարման ու ապահովման մեխանիզմների գործադրումը (ապահովելով նոր՝ առանձին ինքնակարգավորման մեխանիզմներ), գ) ինչպես նաև որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է՝ որակի արտաքին ապահովման չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան):

Այժմ ՈԱԿԿ-ում աշխատում են կենտրոնի տնօրենը, գլխավոր մասնագետը, ֆակուլտետների և ամբիոնների որակի համակարգողները,

Որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից այժմ մշակվում է ***ՇՊՀ-ի որակի ապահովման և կառավարման հայեցակարգ*** փաստաթուղթը, որը ներկայացվելու է գիտական խորհրդի հաստատմանը: Փաստաթուղթը ներառելու է ՇՊՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի նպատակներն ու խնդիրները, որակի ապահովման քաղաքականությունը, որակի ներքին ապահովման և կառավարման համակարգի կազմակերպական կառուցվածքը (տե՛ս ՇՊՀ-ի **որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական սխեմա**) և պարզաբանելու է որակի ապահովման գործընթացներն ու ընթացակարգերը:

Ամբիոնների ներկայացմամբ և ռեկտորի հաստատմամբ ստեղծվել են ամբիոնների որակի հանձնախմբեր, որոնցում ընդգրկված են նաև Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչներ (գործառույթները պարզաբանվելու են վերը նշված փաստաթղթում), ինչպես նաև ամբիոնի որակի համակարգողը: Ամբիոնում որակի պատասխանատուն ամբիոնի վարիչն է: Ամբիոնի որակի ապահովման գործընթացների համակարգման գործառույթները կատարում է ամբիոնի որակի համակարգողը, ով մասնակցում է ՈԱԿԿ-ի նիստերին, քննարկումներին, ապահովում տեղեկատվության փոխանցումը դասախոսներին և նրանց ներգրավվածությունը համալսարանի կառավարման և որակի ապահովման գործընթացներին, կատարում որակի ապահովման գործընթացներին աջակցող այլ գործառույթներ:

Ֆակուլտետում որակի պատասխանատուն ֆակուլտետի դեկանն է: Ֆակուլտետի խորհուրդն իր վրա կրում է ֆակուլտետում որակի մշտադիտարկման, վերահսկման և ապահովման մարմնի գործառույթները: Ֆակուլտետի որակի համակարգողը մասնակցում է ՈԱԿԿ-ի նիստերին, քննարկումներին, ապահովում տեղեկատվության փոխանցումը ուսանողներին և նրանց ներգրավվածությունը համալսարանի կառավարման և որակի ապահովման գործընթացներին, կատարում որակի ապահովման գործընթացներին աջակցող այլ գործառույթներ:

Քոլեջում ևս առկա է քոլեջի որակի հանձնախումբ: Հանձնախումբը գործում է իր գործառույթներին համապատասխան: Այժմ իրականացվում է ինքնավերլուծություն, քանի որ նոր ուսումնական տարում դիմելու ենք ՈԱԱԿ քոլեջի ինստիտուցիոնալ (ենթակառուցվածքային) հավատարմագրման նպատակով: Քոլեջի որակի համակարգողը մասնակցում է ՈԱԿԿ-ի նիստերին, քննարկումներին, ապահովում տեղեկատվության փոխանցումը քոլեջի դասախոսներին ու ուսանողներին՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը համալսարանի կառավարման և որակի ապահովման գործընթացներին, կատարում որակի ապահովման գործընթացներին աջակցող այլ գործառույթներ:

ՈԱԿԿ-ի տնօրենը համակարգում է ինչպես ֆակուլտետների ու ամբիոնների, այնպես էլ քոլեջի որակի համակարգողների աշխատանքները:

ՈԱԿԿ-ում վերանայվում են նաև հարցումների իրականացման հարցարանները, մշակվում են մեխանիզմներ, որոնք թույլ կտան ապահովել իրականացվող հետազոտությունների հավաստիություն, թափանցիկություն, հուսալիություն, և հետազոտությունների վերլուծական արդյունավետ մեխանիզմներ, որոնց արդյունքները կապահովեն Դեմինգի հայտնի շրջափուլի (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում) իրագործումը:

Մի շարք ուսանողական խմբերի հետ ՈԱԿԿ-ի տնօրենի հանդիպումների արդյունքում ձևավորվել է որակի աջակիցների կամավորների ուսանողական խումբ: Խմբի հետ կազմակերպվում են քննարկումներ տարբեր գործընթացների և հարցերի վերաբերյալ, վեր են հանվում խնդիրներ (հաճախ՝ առաջարկվում նաև լուծումների տարբերակներ), որոնք ներկայացվում են համապատասխան մարմիններին:

Ստեղծվել են ՈԱԿԿ-ի ֆեյսբուքյան էջը, որը դեռ նոր է գործելու, և ՇՊՀ-ի կայքում համպատասխան էջը, որը համալրման փուլում է. այստեղ առկա է լինելու նաև հետադարձ կապի ապահովման հնարավորություն:

ՇՊՀ-ի որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական սխեմա



11.3. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ՉԱՓԱՆԻՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական զեկույցի այս չափանիշը գնահատվել է բավարար՝ նշելով հետևյալ թերությունները.

1. Ցածր է հեռակա բաժնի ուսանողների ներգրավվածության և ակտիվության աստիճանը, ինչը մտահոգիչ է հատկապես այն տեսանկյունից, որ շատ մեծ թվով ուսանողներ սովորում են հեռակա ուսուցման համակարգում:
2. Արտաքին շահակիցները նույնպես պետք է մասնակցեն ՈԱ գործընթացներին, սակայն այս մասնակցության մակարդակը դեռ բավարար չէ:
3. Որոշ գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլը դեռ փակված չէ, ինչպես նաև կարիք կա մշակելու ընթացակարգեր, որոնցով կապահովվեն գնահատման և բարելավման գործընթացները:

4. Որակի ներքին ապահովման համակարգում վերջին 3 տարիների ընթացքում կատարված են որոշ բարեփոխումներ, սակայն համակարգի պարբերաբար վերանայման քաղաքականություն դեռևս մշակված չէ: Մասնավորապես ինչու և երբ պետք է վերանայվի ՈԱ համակարգը, ինչ փոփոխությունների այն կբերի և ի վերջո ինչքանով դա կնպաստի կրթական ծրագրի բարելավմանը, ուսանողների բավարարվածությանը, նրանց ներգրավվածությանը հետազոտական աշխատանքներում և այլն:
5. Տվյալների հավաքագրման, տարածման և կառավարման գործընթացներն ընդհանուր առմամբ համակարգված են, սակայն դեռևս ուսումնասիրված չէ դրանց արդյունավետությունը:

Չափանիշի բարելավմանն ուղղված փորձագիտական խորհրդատվություն	**40**	*Որակի ապահովման գործընթացներում ներգրավել արտաքին շահառուների:*
	41	*Մշակել որակի ապահովման համակարգի գործունեության մշտադիտարկման և վերլուծության մեխանիզմներ:*
	42	*Բարելավել բուհում իրականացվող հարցումների և տվյալների հավաքագրման ու վերլուծման գործընթացները՝ ներդնելով դրանց իրականացման հավաստիության մեխանիզմներ:*

11.4. ԳՊՄԻ-Ի ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Գործողություն		**Քայլեր**		**Ընթացիկ վիճակը**	**Ժամանակա-հատված**
40	**Որակի ապահովման գործ-ընթացներում ներգրավել արտաքին շահառուների:**	40.1	Ապահովել որակի ապահովման համակարգում արտաքին շահառուների մասնակցությունը	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. IV եռ.-ից
41	**Մշակել որակի ապահովման համակարգի գործունեության մշտադիտարկման և վերլուծության մեխանիզմներ:**	41.1	Բարելավել որակի ապահովման ներքին համակարգը	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2017թ. III եռ.-ից
		41.2	Մշակել և կիրառել որակի ապահովման համակարգի մշտադիտարկման, գնահատման և վերանայման քաղաքականություն և մեխանիզմներ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. II եռ.-ից
42	**Բարելավել բուհում իրականացվող հարցումների և տվյալների հավաքագրման ու վերլուծման գործընթացները՝ ներդնելով դրանց իրականացման հավաստիության մեխանիզմներ**	42.1	Բարելավել հարցումների իրականացման մեխանիզմները	Իրականաց-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
		42.2	Կիրառել տվյալների հավաքա-գրման բազմազան մեխանիզմներ	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
		42.3	Բարելավել հավաքագրված տվյալ-ների վերլուծման գործընթացը	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. I եռ.-ից
		42.4	Տվյալների հավաքագրման գործընթացում ներգրավել ուսումնառության բոլոր համակարգերի ուսանողների	Պլանավոր-ման փուլ	Մեկնարկը՝ 2018թ. II եռ.-ից

40.1. Որակի ապահովման համակարգում արտաքին շահառուների մասնակցությունը դրսևորվում է տարբեր կերպ և տարբեր մակարդակներում. Ռազմավարական ծրագրի մշակման գործընթացում ընդգրկված են գործատուներ և շրջանավարտներ, ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկման և գնահատման գործընթացում ևս (Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, իրականացման և հաշվետվողականության ընթացակարգի) ապահովվելու է արտաքին շահառուների ներգրավվածությունը, մասնագիտական կրթական ծրագրերը մշակելու համար ստեղծված հանձնախմբերում ընդգրկված են գործատուներ և շրջանավարտներ, ՈԱԿԿ-ի հետ համագործակցելու համար այժմ ձևավորվում է շրջանավարտների խումբ և այլն:

41.1. Որակի ապահովման նոր համակարգի սեղմ նկարագիրը ներկայացվեց 11.1. բաժնում:

41.2. Պլանավորման փուլում է:

42.1. Իրականացման փուլում է: Այս մասին անդրադարձ եղել է 11.1. բաժնում:

42.2. Պլանավորման փուլում է: Օրինակ այժմ ՈԱԿԿ-ի կողմից կազմվում է ՊԴ կազմի մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական իրավասությունների գնահատման ընթացակարգ, որում նախատեսվում է գնահատումն իրագործել մի քանի մոտեցումների կիրառմամբ՝ ուսանողների շրջանում հարցումների իրականացում, ՊԴ կազմի ինքնագնահատում և կարիքների վերհանում և ՊԴ կազմի փաստաթղթային փաթեթների ստուգում:

42.3. Պլանավորման փուլում է: ՈԱԿԿ-ի համապատասխան մասնագետը զարգացնում է կարողություններն այդ ոլորտում (նախատեսվում է նաև վերապատրաստումների մասնակցություն): Վերլուծություններ իրականացնող մասնագետը համագործակցում է հետազոտություններ իրականացնող մասնագետի հետ՝ ապահովելու համար հետագա վերլուծության առավել արդյունավետություն: Գործընթացներին ապահովվելու է ուսանողների ներգրավվածությունը:

42.4. Նախատեսվում է հարցումներին ներգրավել ոչ միայն առկա բակալավրիատի և մագիստրատուրայի, այլև հեռակա բակալավրիատի ուսանողներին:

12. ՇՊՀ-Ի ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ԵՎ ՔՈԼԵՋ

12.1. ՇՊՀ-Ի ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

2017-2018 ուստարում ՇՊՀ-ի ավագ դպրոցը, մշակույթի վարժարանը միավորվել են, միավորված դպրոցները անվանվել են ՇՊՀ-ի ավագ դպրոց: Դպրոցին անհատույց օգտագործման է տրվել Գյումրու թիվ 3 լուծարված ավագ դպրոցի շենքը, որտեղ էլ կազմակերպվում և իրականացվում է ուսումնական գործընթացը: Այսօր դպրոցն ունի 331 աշակերտ, 20 դասարան, 5 հոսք՝ ընդհանուր, հումանիտար, ֆիզմաթ, կենսաքիմ., տնտեսագիտական: 2017-2018 ուստարում ՇՊՀ-ի ավագ դպրոցը կունենա 47 շրջանավարտ: 2017-2018 ուստարում ևս ավագ դպրոցի համար կազմակերպվել են անվճար պարապմունքներ բուհի և դպրոցի լավագույն դասավանդողների մասնակցությամբ: Նման փորձը օգնում է, որ ՇՊՀ-ի ավագ դպրոցի, ինչպես նաև այլ դպրոցներից ներգրավված դիմորդները հաղթահարեն միասնական կամ ներբուհական քննությունների մրցութային շեմը:

Կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ դպրոցում առկա լաբորատոր գույքը բավարար չէ պահանջվող մակարդակով ուսումնական գործընթաց իրականացնելու համար: Այդ պատճառով անհրաժեշտ է համալսարանի լաբորատոր հենքը օգտագործել նաև ավագ դպրոցի համար: Վերջինիս իրականացման պատասխանատվությունը պետք է կրեն մասնագիտական ամբիոնները:

Դպրոցը չունի նաև սպորտային դահլիճ: Այդ բացը պետք է լրացվի ՇՊՀ հիմնական մասնաշենքի երկու դահլիճների շահագործմամբ՝ գտնելով արդյունավետ մեխանիզմներ:

12.2. ՇՊՀ-Ի ՔՈԼԵՋ

Հաշվետու տարում ՇՊՀ միջին մասնագիտական բաժինը վերանվանվեց քոլեջ: ՇՊՀ քոլեջի ուսանողների ընդհանուր թվաքանակն 182 է, որից 49-ը՝ պետպատվեր:

2017 թվականին քոլեջներում բարձր առաջադիմություն ցուցաբերած և բուհ ընդունված 35 ուսանողներից 22-ը ՇՊՀ-ի քոլեջից են:

Հաշվետու տարում քոլեջը մասնակցել է ՄԿՈՒՀԱԿ-ի և ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպած վերապատրաստումներին և դասընթացներին:

ՇՊՀ-Ի ՔՈԼԵՋԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ՝ ԸՍՏ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ

№	Մասնագիտությունը	Որակավորումը	Ուսման տևողությունը
1	Նախադպրոցական կրթություն	Դաստիարակ՝ նախադպրոցական կրթության	3 տարի
2	Սոցիալական աշխատանք	Սոցիալական աշխատող	3 տարի
3	Շուկայաբանություն	Շուկայաբան	3 տարի
4	Թարգմանություն -արխիվավարություն	Թարգմանիչ-արխիվավար	4 տարի
5	Թարգմանություն - գործավարություն	Թարգմանիչ-գործավար	4 տարի
6	Թարգմանություն - մաքսավարություն	Թարգմանիչ-մաքսավար	4 տարի
7	Զբոսաշրջություն	Մասնագետ՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման	3 տարի/նոր/ 3.6 տարի /հին/

2016 -2017 ուստարին ՇՊՀ–ի միջին մասնագիտական կրթության բաժինը ուսումնական գործընթացը սկսեց կազմակերպված: Օգոստոսին ավարտվել էր ընդունելությունը, որի արդյունքում բաժինը համալրվեց 56 ուսանողներով, և որոնցով պայմանավորված, ձևավորվեցին 4 առաջին կուրսերը՝ 1-ին նախադպրոցական՝ 21 ուսանող, 1-ին սոցիալական աշխատանք՝ 20 ուսանող, 1-ին շուկայաբանություն՝ 9 ուսանող, 1-ին զբոսաշրջություն ՝ 6 ուսանող:

Ընդունելության արդյունքում համալրվեցին բոլոր անվճար տեղերը:

Ուսումնական տարին սկսվեց 18 կուրսերով՝ թվով 191 ուսանողներ, որոնցից 146-ը՝ առկա, իսկ 45-ը՝ հեռակա:

Միջին մասնագիտական բաժին ընդունվում են առանց ընդունելության քննությունների՝ վկայականների և ատեստատների մոգերով, մրցութային կարգով:

Միջին մասնագիտական կրթության ծրագրով ավարտած շրջանավարտներին տրվում է պետական նմուշի դիպլոմ եռալեզու հավելվածով, իսկ բարձր առաջադիմությամբ ավարտած շրջանավարտներն իրավունք ունեն իրենց ուսումը շարունակելու բուհի համապատասխան բաժինների II կուրսերում հեռակա, բացի այս տարվա IV կուրսեցիներից, որոնք իրավունք ունեն ուսումը շարունակելու բուհերում առկա ուսուցմամբ:

Վերանայվեցին կատարված նախնական դասաբաշխումը, ծրագրերը և ուսումնական պլանները:

Միջին մասնագիտական բաժնում աշխատում են 28 դասախոսներ, որոնցից երկուսը դասախոսական կազմը համալրեցին այս ուստարում (Աբրահամյան Նարինե (փոխարինող), Ադամյան Անահիտ (փոխարինող)): Դասախոսական կազմի միջին տարիքը չի գերազանցում 35-ը: Բաժնում աշխատում են իրենց գործին նվիրված և գիտակ դասախոսներ, որոնք իրենց մասնագիտական գիտելիքները և մանկավարժական հմտությունները սիրով փոխանցում են երիտասարդներին, նրանք էլ մեծ պատասխանատվությամբ ընդունում են, ակտիվ աշխատում և

ձգտում հետ չմնալ փորձառու դասախոսներից: Միջին մասնագիտական կրթության բաժնում աշխատանքը թիմային է: Աշխատում ենք մեծ սիրով, ամենակարևորը՝ հանրույթը համերաշխ է և ձգտող:

Կա դասախոս–ուսանող ձևավորված ճիշտ մոդել, որը մեր աշխատանքի հաջողության գրավականն է:

Միջին մասնագիտական բաժնում կրթական գործընթացը կազմակերպվում է ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի պլանավորման չափորոշիչներին համահունչ որակի ապահովմամբ, մոդուլային ծրագրերի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի բարելավման ուղղություններով:

Տարվա ընթացքում վերանայվել և բարելավվել են ուսումնական պլանները: Տարին մեկ անգամ ՄԿՈՒՀԱԿ–ի կողմից կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ. ամեն տարի վերապատրաստվում է 10 դասախոս: Քանի որ մարզում վերապատրաստումը իրականացվում է մեզ մոտ, ուստի մեր դասախոսներից շատերը վերապատրաստումներին մասնակցում են 2-րդ և 3-րդ անգամ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկու կիսամյակով:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո կատարվում է ռոտացիա, նշանակվում է կրթաթոշակ:

Քիչ է վճարովի համակարգում սովորող ուսանողների քանակը, բայց այդ քիչ թվաքանակի պարագայում էլ ղեկավարության կողմից միշտ կատարվում են վարձավճարների զեղչեր (համապատասխան տոկոսաչափով)՝

1. Կարապետյան Աշխեն Բագրատի, Թարգ./մաքսավարություն 4-րդ կուրս, 1-ին կիսամյակ 50 %, 2-րդ կիսամյակ 40 %
2. Մաքեյան Լաուրա Սամվելի, Սոցիալական աշխատանք 1-ին կուրս, 70 %
3. Հովհաննիսյան Ռիմա Ռոբերտի, Սոցիալական աշխատանք 1-ին կուրս, 50 %
4. Ջվակերյան Կարինե Կարենի, Սոցիալական աշխատանք 1-ին կուրս, 60 %
5. Քոչարյան Սերյոժա Արտուշի, Սոցիալական աշխատանք 3-րդ կուրս հեռակա, 50 %
6. Թորոսյան Անի Արտաշեսի, Ն/դ 2-րդ կուրս հեռակա 50 %
7. Հովհաննիսյան Սաթենիկ Արտյոմի, Ն/դ 3-րդ կուրս հեռակա, 50 %

Ուսանողների տարեկան ծանրաբեռնվածությունը 1368 ժամ է (1-ին կիսամյակ՝ 648 ժամ, 2-րդ կիսամյակ՝ 720 ժամ):

Ուստարվա ամբողջ աշխատանքը բաշխվում է համապատասխան ուսումնական

պարապմունքների, պրակտիկաների և ամփոփիչ ստուգումների: Ամփոփիչ ստուգումների ժամանակ (քննություններ) ուսանողներն ազատվում են դասընթացներից, իսկ մոդուլի արդյունքների ամփոփումը կատարվում է արդյունքների վերջին դասաժամերին:

Տարեվերջին 1-ին կուրսեցիները հանձնում են ավարտական քննություններ, որոնք համարվում են իրենց ատեստատի ամփոփիչ ավարտական քննություններ: Սրան զուգահեռ՝ մեծացել է հմտացման գործընթացը, որին նպաստում է գործնական աշխատանքների ճիշտ կազմակերպումը, ինչպես նաև պրակտիկայի արդյունավետությունը:

Ուսումնական ծրագրերում մոդուլների տեսական և գործնական բաղադրիչների տարանջատումը կատարվել է ՄԿՈՒԶԱԿ-ի պահանջներին համապատասխան, յուրաքանչյուր փոփոխություն կատարվելու դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն:

Գնահատումը կատարվում է 10-բալային համակարգով:

Մեկ ուսանող՝ Արթուր Թորոսյանը 2-րդ շուկայաբանություն /ըստ ճյուղերի/ չի մասնակցել պրակտիկաներին: 129 պետ/պատվեր ուսանողներից 92-ը ստանում են կրթաթոշակ: Երկու ուսանողներ՝ Անահիտ Մանուկյանը և Խաչատուր Չոլաքյանը ստանում են կրթաթոշակ Սոց. նախարարությունից:

Տարին ավարտեցինք 177 ուսանողներով: 15 ուսանողներ տարբեր պատճառներով կիսատ թողեցին ուսումը:

Կազմակերպված ձևով անցկացվեցին 1-ին կուրսեցիների և ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման քննությունները, որի մասին են վկայում 1-ին կուրսեցիների և պետականի արդյունքները (աղյուսակ 2):

Լավ է հաճախումների հարցը: Մշտապես բացակայող ուսանողներ չունենք: Ճիշտ է, եղան ուսանողներ, որոնք բացակայեցին, սակայն պատճառը ջրծաղիկի և գրիպի ինֆեկցիաներն էին:

Ինչպես տեսնում ենք, արվում է ամեն ինչ այսօրվա ուսանողի համար, հեշտացվել է մուտքը քոլեջ, մեզ մոտ հանված են նաև կիսամյակային քննությունները (2-րդ կուրսից բարձր):

Սրան զուգահեռ՝ մեծացել է հմտացման գործընթացը, որին նպաստում են գործնական աշխատանքների ճիշտ կազմակերպումը, ինչպես նաև պրակտիկաների արդյունավետությունը:

Միջին մասնագիտական բաժնի պրակտիկաները մշտապես կազմակերպվում են մեր ղեկավարության, գործատուի և ուսումնական պլաններին համապատասխան: Որտեղ էլ որ անցկացվել են պրակտիկաները, միշտ էլ գործատուն գոհ է եղել: Ասածս կփաստեն գործատուների կողմից տրված բնութագրերը: Անցկացվել են գեղեցիկ, մեթոդապես զինված բաց պարապմունքներ: Ակտիվ են աշխատում և 'ուսանողները, և' մեթոդիստները:

Միջին մասնագիտական բաժնում միջին մակարդակի ուսանողը ստանում է անհրաժեշտ գիտելիքներ, ավելացնում է գիտելիքների մակարդակը և, ինչու չէ, կարող է ուսումը շարունակել բուհում:

Վերահսկվում է մատենավարության գործընթացը. եղած թերություններն անմիջապես շտկվում են:

Կարողությունների ձևավորմանը միտված ուսումնական գործընթացի իրականացումն ու կազմակերպումը, բնականաբար, ունեն մեծ առավելություններ: Նախ՝ դրանք թելադրում են ուսանողների համակողմանի զարգացում, գիտելիքների խորացում, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ձևավորում և հարստացում: Այս գործընթացը ենթադրում է ստեղծագործական աշխատանք, ուժերի գերլարում, տքնանք, աշխատասիրություն, որը, բնականաբար, տալիս է իր դրական արդյունքը:

Դասավանդումն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ են բազում նախապայմաններ, ես ամենից շատ կկարևորեի դասավանդող առարկայի (մոդուլի) խոր ու բազմակողմանի իմացությունը՝ զուգորդված դասավանդման նպատակների, խնդիրների և դրանց կենսագործունեությանն ուղղված եղանակների, ձևերի ու մեթոդների նպատակահարմար ընտրություն կատարելու հետ:

Դասավանդման 3 կարևորագույն հիմնախնդիրները՝ «ի՞նչ սովորեցնել», «ինչու՞ սովորեցնել» և «ինչպե՞ս սովորեցնել», պետք է դառնան այսօրվա կրթական գործընթացի հիմնահարցերը: Հենց այս հիմքի վրա էլ կատարվել են 263 դասալսումներ և քննարկումներ: Կազմակերպվել են բաց դասեր: Ակտիվ են աշխատում որակի հանձնաժողովի անդամները:

Համաձայն կառավարության 2015թ. հուլիսի 8-ի №752 որոշման միջին մասնագիտական բաժնից 2016-2017 ուստարում 23 ուսանող ցանկություն է հայտնել ուսումը շարունակելու բուհում.

Միջին մասնագիտական բաժնում ունենք գործող կաբինետներ, սակայն դրանք կարծես թե այնքան էլ չթարմացվեցին, բացի ձեռարվեստի կաբինետից:

Պատերը հեղեղված են պատի թերթերով:

Ունենք բավականին հարուստ գրադարան, բայց սակավ է մասնագիտական գրականությունը: Գրադարանային ֆոնդը հագեցած է նախկին բաժիններին համահունչ:

Մեծ է բուհի աջակցությունը բաժնին: Առաջինն այն է, որ այսօր մեր ուսանողը դաս է անում տաք ջեռուցվող լսարաններում՝ առանց վերարկուների. դա մեծ ձեռքբերում է, տարիներ առաջ դա երազանք էր թվում: Այս ձեռքբերումներով հանդերձ՝ ինչպես ցանկացած

աշխատանք ունի իր առավելությունները և թերությունները, այնպես էլ մեր աշխատանքներում կլինեն թերություններ և բացթողումներ: Որտեղ աշխատանք, այնտեղ էլ՝ թերություն: Մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք մեր ուսանողների կրթական մակարդակին, դասախոսները պիտի զինվեն խորը գիտելիքներով, մեթոդներով: Այսօրվա ուսանողը պահանջատեր է և շատ լավ է գնահատում իրեն դասավանդողի գիտելիքները:

Այս տարի ստեղծեցինք կարիերայի կենտրոն, կատարեցինք վերլուծություն շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Մեր ուսանողները, ակտիվ մասնակցելով պրակտիկաներին, առաջարկ են ստացել որպես կամավորներ աշխատելու «Երեխաների սոցիալական հոգածության կենտրոն»-ում, «ԵՆԿ»-ում, սոց. ծառայությունում:

Միջին մասնագիտական բաժինը 2018 թվականին դիմում է ներկայացնելու հավատարմագրվելու համար: Այդ ուղղությամբ կատարվում է մեծ աշխատանք: Ստեղծվել են հանձնաժողովներ՝ լեզվի, բնագիտական, մանկավարժություն՝ մասնավոր մեթոդիկաներով: Կազմվել և վերանայվել են բոլոր ծրագրերը, թեմատիկ պլանավորումները: Յուրաքանչյուր դասախոս մինչև օգոստոսի 25–ը կազմել և հանձնաժողովին է հանձնել համապատասխան մոդուլների փաթեթները:

13. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2017 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի հոդվածների փաստացի կատարողականի վերլուծություն (հազար դրամ)							
հ/հ	Դրամական միջոցների մուտքեր (եկամուտների հոդվածներ)	Հղում	2017թ. գումարն ըստ նախահաշվի	Փաս-տացի	Ըստ հաշվարկի պակաս ստացված առ 01.01.2018թ. (սյ.5-սյ.4)	Ըստ հաշվարկի ավել ստացված առ 01.01.2018թ. (սյ.5-սյ.4)	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
1	2	3	4	5	6	7	8
1	Ընդամենը, այդ թվում՝		1 205 330	1 132 391	-101 122	28 183	-72 939
1,1	Եկամուտներ վճարովի ուսուցման վճարներից	հավելված 1	650 000	581 226	-68 774	0	-68 774
Պարզաբանում. Նշված շեղումը՝ 68,774 հազ.դրամ, պայմանավորված է ուսման վարձերի հավաքագրման անկումով: Մասնավորապես, 2017թ.-ին ուսման վարձերից հաշվեգրված եկամուտը կազմել է 532,537 հազ.դրամ, 2017թ.-ին վերաբերող մասով փաստացի հավաքագրվել է 470,267 հազ.դրամ (առ 01.01.2018թ. չհավաքագրված մնացորդը (դեբիտորական պարտքը) կազմել է 62,270 հազ.դրամ): Միաժամանակ 2017թ.-ին փաստացի հավաքագրված 581,226 հազ.դրամ ուսման վարձից 110,959 հազ.դրամը վերաբերում է նախորդ տարիների պարտքի մարմանը:							
1,2	Եկամուտներ պետական բյուջեից	հավելված 2	465 000	484 190	0	19 190	19 190
1,3	Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	հավելված 3	80 330	50 370	-32 348	2 388	-29 960
	ՕՀԳ-ից		*63 000*	*30 652*	*-32 348*	*0*	*-32 348*
	Թեմատիկ ծրագրի շրջանակներում		*17 330*	*19 718*	*0*	*2 388*	*2 388*
1,4	Ոչ գործառնական եկամուտներ		10 000	16 605	0	6 605	6 605
	Պասիվ եկամուտներ (տոկոսներ ավանդներից)		*6 500*	*12 415*	*0*	*5 915*	*5 915*
	Կրեդիտ պարտքերից և այլ ծառայություններից		*3 500*	*4 190*	*0*	*690*	*690*

հ/հ	Դրամական միջոցների ելքեր (ծախսերի հոդվածներ)	Հղում	2017թ. գումարն ըստ նախահաշվի	Փաս-տացի	Ըստ հաշվարկի պակաս ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Ըստ հաշվարկի ավել ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
1	2	3	4	5	6	7	8
1	Աշխատանքի վարձատրությանն ուղղված և դրան հավասարեցված միջոցներ, այդ թվում՝	հավելված 5	828 650	896 083	0	-67 433	-67 433
	Բուֆետների աշխատողների աշխատավարձ		*0*	*2 699*	*0*	*-2 699*	*-2 699*
	Ներբուհական ծրագրի շրջանակներում վճարված աշխատավարձ		*0*	*8 500*	*0*	*-8 500*	*-8 500*
	Դպրոցի աշխատողների աշխատավարձի տարբերություն		*0*	*17 904*	*0*	*-17 904*	*-17 904*
	Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա կատարված վճարումներ		*0*	*14 079*	*0*	*-14 079*	*-14 079*
	Արձակման նպաստ		*0*	*5 641*	*0*	*-5 641*	*-5 641*
	Գիտական գործունեության համար տրամադրվող հավելավճար		*0*	*1 099*	*0*	*-1 099*	*-1 099*
	ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված լրացուցիչ աշխատավարձ (հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ, պարգևատրումներ)		*0*	*17 511*	*0*	*-17 511*	*-17 511*

Պարզաբանում.

Աշխատավարձի մասով գերածախսը՝ 67,433 հազ.դրամ, գոյացել է այնպիսի գործոնների ազդեցությամբ, որոնք չէին կարող նախատեսվել նախահաշիվը կազմելիս: Վերոնշյալ չնախատեսված ծախսերն այդ գումարի նկատմամբ ունեցել են հետևյալ տեսակարար կշիռները՝

1. դպրոցի աշխատողների աշխատավարձի տարբերություն (մոտ 27%),
2. լրացուցիչ աշխատավարձ (մոտ 26%),
3. քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա կատարված վճարումներ (մոտ 20%),
4. ներբուհական ծրագրի շրջանակներում վճարված աշխատավարձ (մոտ 13%),
5. արձակման նպաստ (մոտ 8 %), բուֆետների աշխատողների աշխատավարձ (մոտ 4 %),
6. գիտական գործունեության համար տրամադրվող հավելավճար (մոտ 2 %):

Հարկ է նշել, որ բուֆետների աշխատողների աշխատավարձն ամբողջությամբ նախատեսվում է փոխհատուցել դրանց գործունեությունից ստացված հասույթի հաշվին:

հ/հ	Դրամական միջոցների ելքեր (ծախսերի հոդվածներ)	Հղում	2017թ. գումարն ըստ նախահաշվի	Փաս-տացի	Ըստ հաշվարկի պակաս ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Ըստ հաշվարկի ավել ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
1	2	3	4	5	6	7	8
2	Կրթաթոշակի ծախսեր	հավելված 6	26 000	27 426	0	-1 426	-1 426
Պարզաբանում. Շեղումը՝ 1,426 հազ.դրամ, ամբողջությամբ փոխհատուցվել է բյուջեից:							
3	Վճարումներ պետական բյուջե	հավելված 7	15 000	14 802	198	0	198
4	Կոմունալ վճարումներ, այդ թվում՝	հավելված 8	32 400	35 468	1 929	-4 997	-3068
	Բնական գազ		*19 100*	*24 047*	*0*	*-4 947*	*-4947*
	Էլ. Էներգիա		*10 500*	*8 979*	*1 521*	*0*	*1521*
	Ջրամատակարարում, ջրահեռացում		*2 000*	*1 592*	*408*	*0*	*408*
	Աղբահանություն		*500*	*550*	*0*	*-50*	*-50*
	Դեռատիզացիա		*300*	*300*	*0*	*0*	*0*
Պարզաբանում. Կոմունալ ծախսերի մասով գերածախսը՝ 3,068 հազ.դրամ (դրական և բացասական շեղումների բացասական տարբերությունը՝ 4,997-1,929), հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով՝ 2016-2017թթ. ջեռուցման սեզոնի երկարաձգում և թիվ 3 դպրոցի շենքի ներառում հիմնադրամի կազմի մեջ:							

հ/հ	Դրամական միջոցների ելքեր (ծախսերի հոդվածներ)	Հղում	2017թ. գումարն ըստ նախահաշվի	Փաս-տացի	Ըստ հաշվարկի պակաս ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Ըստ հաշվարկի ավել ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
1	2	3	4	5	6	7	8
5	Փոստի և հեռահաղորդակցության ծառայություններ	հավելված 9	2 600	2 544	56	0	56
6	Գրասենյակային ծախսեր	հավելված 10	12 800	10 371	2 429	0	2 429
7	Տպագրական ծախսեր	հավելված 11	5 350	3 829	1 521	0	1 521
8	Ապրանքանյութական պաշարներ	հավելված 12	24 000	27 670	0	-3 670	-3670
Պարզաբանում. Շեղումը՝ 3,670 հազ.դրամ, գոյացել է բուֆետների (համալսարան, քոլեջ, դպրոց) գործունեության համար անհրաժեշտ սպասքի, ապրանքների և սննդամթերքի, ինչպես նաև այլ ստորաբաժանումների գործունեության համար անհրաժեշտ ապրանքների գնումներից:							
9	Տրանսպորտային միջոցների ծախսեր	հավելված 13	5 000	7 249	0	-2 249	-2 249
Պարզաբանում. Շեղումը՝ 2,249 հազ.դրամ, գոյացել է հիմնականում ավագ դպրոցի աշակերտների թվի աճով՝ պայմանավորված տրանսպորտային հավելյալ ծախսերով և նորաստեղծ ֆուտզալի թիմի սպասարկման անհրաժեշտությամբ:							
10	Ծառայությունների ձեռքբերման ծախսեր	հավելված 14	28 000	32 166	0	-4 166	-4 166
Պարզաբանում. Շեղումը՝ 4,166 հազ.դրամ, հիմնականում գոյացել է հետևյալ գործոնների ազդեցությամբ՝ պահակային ծառայության ծախսերի ավելացում (այն սկսվել է իրականացվել բոլոր մասնաշենքերում), ուսանողների բազայի վերաբերյալ համակարգչային ծրագրի ապահովման անհրաժեշտություն պայմանավորված լրացուցիչ ծախսերով:							
11	Ներկայացուցչական ծախսեր		2 500	1 378	1 122	0	1122
12	Անդամավճարների ծախսեր		300	0	300	0	300
13	Վարձակալության ծախսեր	հավելված 15	350	0	350	0	350

հ/հ	Դրամական միջոցների ելքեր (ծախսերի հոդվածներ)	Հղում	2017թ. գումարն ըստ նախահաշվի	Փաս-տացի	Ըստ հաշվարկի պակաս ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Ըստ հաշվարկի ավել ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
1	2	3	4	5	6	7	8
14	Գործուղման ծախսեր	հավելված 16	9 000	8 624	376	0	376
15	Նպատակային ֆինանսավորում	հավելված 17	1 500	6 000	0	-4 500	-4500
Պարզաբանում. Շեղումը՝ 4,500 հազ.դրամ, գոյացել է՝ պայմանավորված Հայաստանի երիտասարդական հիմնադրամին հավելյալ գումար փոխանցելու անհրաժեշտությամբ:							
16	Գրադարանային ծախսեր	հավելված 18	1 500	335	1 165	0	1165
17	Այլ ծախսեր, այդ թվում՝	հավելված 19	17 200	31 516	2 196	-16 512	-14316
	Գովազդի և հայտարարության ծախսեր		*2 300*	*2 298*	*2*	*0*	*2*
	Բանկային ծառայություններ		*1 000*	*1 353*	*0*	*-353*	*-353*
	Մշակութային միջոցառումների ծախսեր		*1 658*	*1 658*	*0*	*0*	*0*
	Թերթերի և ամսագրերի բաժանեգրություն		*500*	*1 308*	*0*	*-808*	*-808*
	Կադաստրային ծառայություն		*0*	*540*	*0*	*-540*	*-540*
	Բուժզննում		*0*	*784*	*0*	*-784*	*-784*
	ՀԾ և 1C ծրագրերի ծառայություններ		*0*	*280*	*0*	*-280*	*-280*

հ/հ	Դրամական միջոցների ելքեր (ծախսերի հոդվածներ)	Հղում	2017թ. գումարն ըստ նախահաշվի	Փաստացի	Ըստ հաշվարկի պակաս ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Ըստ հաշվարկի ավել ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
1	2	3	4	5	6	7	8
	Վերապատրաստման դասընթացներ		500	553	0	-53	-53
	Մշակույթի վարժարանի ճանապարհածախս և սննդի վճար		3 670	4 316	0	-646	-646
	Մշակույթի վարժարանի 2014թ. աշխատավարձ և տույժ		0	3 311	0	-3 311	-3 311
	Կաթսայատան և ծխնելույզների տեխանվտանգության ծախսեր		0	647	0	-647	-647
	ԾԻԳ -ի համաֆինանսավորում		1 977	7 876	0	-5 899	-5 899
	Դիզայներական ծառայություններ		0	1 300	0	-1 300	-1 300
	Գազասպառման համակարգի սպասարկման ծառայություններ		53	53	0	0	0
	Դեղորայք		50	69	0	-19	-19
	Գորգերի լվացում		0	192	0	-192	-192
	Ուսումնական պրակտիկա		5 150	2 956	2 194	0	2 194
	Խրախուսում, օգնություն, աջակցություն		342	914	0	-572	-572
	ՀԴՄ-ի սպասարկման վճար		0	4	0	-4	-4
	Տույժեր և տուգանքներ, ֆուտբոլիստներին կարմիր քարտ		0	22	0	-22	-22
	Ֆուտզալի ֆեդերացիային անդամակցելու համար		0	120	0	-120	-120

h/h	Դրամական միջոցների ելքեր (ծախսերի հոդվածներ)	Հղում	2017թ. գումարն ըստ նախահաշվի	Փաստացի	Ըստ հաշվարկի պակաս ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Ըստ հաշվարկի ավել ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
1	2	3	4	5	6	7	8
	Պասիվ եկամուտներ (տոկոսներ ավանդներից)		0	463	0	-463	-463
	Կերպարվեստի ստեղծագործությունների վերականգնման համար		*0*	*200*	*0*	*-200*	*-200*
	Թարգմանչական ծառայություն		*0*	*45*	*0*	*-45*	*-45*
	Բաների պատրաստման դիմաց		*0*	*179*	*0*	*-179*	*-179*
	Էլ. ստորագրություն		*0*	*6*	*0*	*-6*	*-6*
	Վճարովի ավտոկայանատեղի		*0*	*12*	*0*	*-12*	*-12*
	Արձակման նպաստի տույժ		*0*	*57*	*0*	*-57*	*-57*
Պարզաբանում. Այլ ծախսերի մասով գերածախսը՝ 14,316 հազ.դրամ (դրական և բացասական շեղումների բացասական տարբերությունը՝ 2,196-16,512), հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով՝ ԾԻԳ -ի համաֆինանսավորում (-5899 հազ.դրամ), մշակույթի վարժարանի՝ 2014թ. աշխատավարձ և տույժ (-3,311 հազ.դրամ), դիզայներական ծառայություններ (-1,300 հազ.դրամ): Մնացած փոքր շեղումները, որոնք չեն գերազանցում 1 մլն. դրամը, ներկայացված են աղյուսակում:							
18	Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր, այդ թվում՝	հավելված 20	96 300	55 683	40 617	0	40 617
	Դիզելային գեներատոր 14,000 հազ.դրամ արժողությամբ, որից 7,000 հազ.դրամը վճարվել է 2016թ.		*7 000*	*7 000*	*0*	*0*	*0*
	Համակարգչային գույք		*1 500*	*555*	*945*	*0*	*945*
	Կահույք		*9 561*	*488*	*9 073*	*0*	*9 073*
	Մարզական գույք		*700*	*663*	*37*	*0*	*37*
	Կենցաղային սարքավորումներ		*19 000*	*15 900*	*3 100*	*0*	*3 100*

h/h	Դրամական միջոցների ելքեր (ծախսերի հոդվածներ)	Հղում	2017թ. գումարն ըստ նախահաշվի	Փաստացի	Ըստ հաշվարկի պակաս ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Ըստ հաշվարկի ավել ծախսված առ 01.01.2018թ. (սյ.4-սյ.5)	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
1	2	3	4	5	6	7	8
	Հակահրդեհային գույք		*500*	*0*	*500*	*0*	*500*
	Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		*3 663*	*2 204*	*1 459*	*0*	*1 459*
	ՇԻԳ-ի ծրագրով հիմնական միջոցների ձեռքբերում		*49 785*	*27 692*	*22 093*	*0*	*22 093*
	Հյուրանոցային գույք		*3 000*	*0*	*3 000*	*0*	*3 000*
	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		*1 591*	*1 181*	*410*	*0*	*410*
19	Հիմնանորոգման և ընթացիկ նորոգման ծախսեր	հավելված 22	96 880	133 078	0	-36 198	-36 198
Պարզաբանում. 36,198 հազ.դրամի ծախսը կատարվել է 2016 թվականի նախահաշվով նախատեսված, բայց չկատարված ծախսերի հաշվին (կապալառուի հետ համապատասխան պայմանագիրը կնքվել է 2016թ.-ին, աշխատանքներն իրականացվել են 2017թ.-ին):							
	Ընդամենը		1 205 330	1 294 222	52 259	-141 151	-88 892
Եկամուտների և ծախսերի տարբերություն			Ըստ նախահաշվի	Փաստացի	Դրական շեղումների հանրագումար	Բացասական շեղումների հանրագումար	Շեղումների հանրագումար (սյ.6+սյ.7)
			0	-161 831	80,442 (28,183+52,259)	-242273 (-101,122-141,151)	-161 831
Ամփոփ պարզաբանում. Բացասական շեղումների հանրագումարը (եկամուտների թերակատարումների և գերածախսերի հանրագումար) կազմել է 242,273 հազ.դրամ, որից՝ 1) 101,122 հազ. դրամը կամ 41.7 տոկոսը վերաբերում է եկամուտների թերակատարմանը,							

2) 67,433 հազ.դրամը կամ 27.8 տոկոսը՝ աշխատավարձի չնախատեսված վճարումներին,

3) 36,198 հազ.դրամը կամ 14.9 տոկոսը՝ հիմնանորոգման և ընթացիկ նորոգման ծախսերին,

4) 16,512 հազ.դրամը կամ 6.8 տոկոսը՝ այլ ծախսերին,

5) 4,997 հազ.դրամը կամ 2.1 տոկոսը՝ կոմունալ վճարումներին,

6) 4,500 հազ.դրամը կամ 1.9 տոկոսը՝ նպատակային ֆինանսավորմանը,

7) 4,166 հազ.դրամը կամ 1.7 տոկոսը՝ ծառայությունների ձեռքբերմանը,

8) 3,670 հազ.դրամը կամ 1.5 տոկոսը՝ ապրանքանյութական պաշարներին,

9) 2,249 հազ.դրամը կամ 0.9 տոկոսը՝ տրանսպորտային միջոցների ծախսերին,

10) 426 հազ.դրամը կամ 0.7 տոկոսը՝ կրթաթոշակներին:

Դրական շեղումների հանրագումարը (եկամուտների գերակատարումների և թերածախսերի հանրագումար) կազմել է 80,442 հազ.դրամ, որից 28,183 հազ.դրամը կամ 35 տոկոսը վերաբերում է եկամուտներին, մնացած 52,259 հազ.դրամը կամ 65 տոկոսը՝ թերածախսերին:

Դրական և բացասական շեղումների բացասական տարբերությունը կազմել է 161,831 հազ.դրամ, որը հավասար է եկամուտների և ծախսերի տարբերությանը: Այս տարբերությունն ամբողջովին ծածկվել է հիմնադրամի սեփական միջոցների հաշվին:

Հարկ է նշել, որ այդ տարբերությունից 36,198 հազ. դրամը գոյացել է 2016թ.-ից փոխանցված ծախսից (տես՛ 19 տողը), մնացած 125,633 հազ.դրամը՝ ըստ Էության 2016թ.-ին կատարված աշխատավարձի բարձրացման և չնախատեսված անհրաժեշտ ծախսերի կատարման հետևանքով առաջացած ֆինանսական ճեղքվածքի արդյունք է: Բավական է նշել, որ 2016թ.-ի սեպտեմբերի 1-ից մինչև 2016թ.-ի դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածում (աշխատավարձի բարձրացումից հետո) աշխատավարձի ծախսը կազմել է 367,780 հազ.դրամ, լրացուցիչ ծախսը՝ 102,554 հազ.դրամ:

Ծանոթագրություն. Հիմնադրամն աշխատավարձի բարձրացման արդյունքում 2016թ.-ի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը և ամբողջ 2017թ.-ի ընթացքում լրացուցիչ ծախսել է մոտ 310 մլն.դրամ: